



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1588

614
A-74

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ

ԲՈՅԵՐԻ ՊԱՇԱՋՈՒՐԻ ԽԵ

ՅՈՐԻՆԵԱՑ

ԲԺԻՇԿ Դ. ԱԽԱՏՈՄԵԱՆՑ

ՓՓՓՓՓՓՓ

ՀԱՏՈՐ Ա.

1862

ԹԻՎԻԶ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵԽ Հ. ԷՆԳԻԱԶԵԱՆՑ.

614
Հ-24

19914-59

(1307)
39


368 35m h.

61A
2-74
un

Printed in Turkey

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱՆԿԱՐՆԱԿԻ ՄԱՀ ՊԱՏՃԱՌՈՂ, ԴԻԳՈՒԱԾՆԵՐԸ



1. Հաստրակաց բժշկականութեան նպատակը. 2. Յանկարծակի մահ պատճառող դիպուածների վրա ընդհանուր դիտելիք. 3. Ուշաթափութեան վրայ առհասարակ. 4. Զբահեղձների ուշաթափութիւնը. 5. Շանթահարն երի ուշաթափութիւնը. 6. Ածխահարից կամ ուրիշթիւնաւոր կաղերից և թոկով կամ ուրիշ միջոցներով խեղղուածների ուշաթափութիւնը. 7. Ասուածների ուշաթափութիւնը. 8. Թունաւորուածները. 9. Գինեհարները. 10. Հարուածից ջարզուածները. 11. Օձահարները և ուրիշ թիւնաւոր միջատներից խայթուածները. 12. Առաջնին գեղերը։

§ 1.

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԻ

Մարդը ծնումէ թէ չէ, խկոյն ընկնումէ շրջակայ բնութեան ներդործութեան տակ, բնութիւնը երկու տեսակ ներդործութիւն ունի մարդու վրա. երբեմն նա օդնումէ նրա կենդանութեան պահպանութեանը. Բայց շատ անգամ խանգարումէ նրա առողջութիւնը, կամնալով ոչընչացնել նրա անկախ գոյութիւնը և միաւորել նրան իւր ճետ, և այսպէս

մահկանացուի կեանքը և շրջակայ բնութիւնը անդադար կոխ ևն տաղի մէկամէկու հետ ։ Այս պատճառով հնագոյն ժամանակից մննք տեսնում ենք մարդու սաստիկ ջանքը բնդդիմագործել բնութեան վնասակար ներզործութեանը և քաղել օգուտ այն ամէն բանից, ինչ որ կարող է օդնել նրա կենդանութեան պահպանելուն ։ Բայց հասու վիճելով ընդհանուր օրէնքներին, որոնց միջոցով կատարուում են երևոյթները բնութեան մէջ, մարդիկ գարսուոր ժամանակներով ակամայ և անդիտութեամբ ընկնում էին վնասաբեր պատճառների ներքոյ, և եթէ շատ անգամ յաջողուում էր նրանց փախչել սրանց կորատական ներդործութիւնից, բայց այն ևս պատահաբար միայն, չորհակալ վիճելով գուցէ հին ժամանակեան բարքի և կենցաղավարութեան պարզութեանը :

Այսպէս, բնութեան հետ անծանօթ վիճելով, վաղեմիկ մարդիկը միմիայն փորձառական և անկանոն ճանապարհով կարողանում էին գտանել ձարեր հիւանդութիւնների ընդդէմ. բայց որովհետև նրոնց յայտնի չկան այս ձարերի ոչ ներդործութեան եղանակը և ոչ գործածութեան հետեւանքը, վամսորոյ ճասարակութեան մէջ ճասասատուեցան թիւր, կոսիտ և վնասակար հասկացողութիւններ բժշկականութեան վրա առ ճասարակ, որոնք դժբաղգաբար մնացել են և մինչեւ այժմ ժողովրդի մասպաշտութեան և խաստակեան և խմաստակների խարեւայութեան չորհքով։ Այս պատճառով մարդկային աղջը ամէն տեղ չարչարուելէ դարերով, ցաւերը սաստկացել են և բազմացել գուցէ նոյն ճարերի անգամաշած գործածութիւնից, և մինչեւ կանոնաւոր և ուղիղ ճանապարհի դիւտը բժշկութեան ճամար միջինաւոր թշտառներ փչացել են, զո՞ն բերելով իւրեանց կեանքը բժշկութեան ճամար միջինաւոր ժշտառների վիճացել են, զո՞ն բերելով իւրեանց կեանքը բժշկութեան ճամար արուեստի պարզ ճշմարտութիւնների անդիտութեանը :

Ոչ միայն մեր ազդի, այլ և ամէն ուրիշ ազգերի ճասարակութեան մնիծ մասը տգէտէ և անծանօթ նաև այն պարզ բաններին, որոնց միջոցով մարդ ապրում է և մնունդ կամ կերակուր է ընդունում։ Ճասարակութիւնը ըստ մնիծի մասին չէ կարողանում որոշել պատճառը գործողութիւնից, ամէն բանը երևում է նրան մի անխմանալի զաղանիք և շատ անգամ տեսնում է երկիխաղը այն տեղ, ուր որ ոչինչ չկայ, բայց ուրիշ անգամ անհոգ է ճշմարիտ վասնողի մէջ։ Այս տեսակ անփորձ և տգէտ մարդը կախուած է լինում միշտ ուրիշների զատողութիւնից՝ ապրում է ուրիշների խելքով, չդիստէ ըստ մնիծի մասին թէ ում հաւատայ և շատ անգամ ընկնում է խմաստակ բժշկների իշխանութեան տակ, որոնց զիստութիւնը նա կարող չէ ամննեին ոչ հասկանալ, ոչ զնահասել։ Շատ անգամ հիւանդը զիմում է զէպի բժիշկը կամ այն ժամանակ, երբ որ բժշկութեան ճարկաւորութիւն չկայ և կամ այն ժամանակ միայն, երբ որ հիւանդութիւնը ամել է արդէն մինչեւ այն աստիճան, որ արհեստը կարող չէ այլ ևս յաղթել ցաւին։

Բժշկականութեան անունվակ ժողովրդի այսպիսի անմիջիթար դրութիւնը ուղղելու և լաւացնելու ճամար, ճարկաւոր է ծանօթացնել նրան

բժշկական զիտութիւնների հետ, հրատարակելով նրա կարդալու համար այս արուեստի բոլոր առարկանների վրա ընդհանուր և կարեոր տեղեկութիւններ հեշտիմաց և պարզ ոճով : Բժշկականութեան փոքրի շատէ տեղեակ մարդը կարող է հեռանալ ցաւերի պատճառներից և աւելի ուղիղ հասանիլ խորին ծերութեան, այլ հրանդութեան ժամանակը նրա զիտութիւնը կօդնէ նրան առանց նախապաշտըմանքների բրոցել զիտուն ըլքացի օգտաւէտ ճարերը և խարերայի վնասակար գեղերը, ձեռնտու լինել բժշկին նկատել իւր մարդոյ խառնուածը, օդի, կերակրի և ըստելիքի ներգործութիւնը և խրեան անհանդիստ առնող տկարութեան ընթացքը՝ նաև գտանել հնարիններ հիւանդութիւնների առաջը կարելու և նրանց հեռացնելու համար : Ընդհանութեար բժշկականութեան տեղեկութիւնը կհեռացնէ հաղար ու մէկ գառն զիպուածներ, կթէթեացնէ շատերի վատարադա վիճակը և կաւացնէ առհասարակ նաև բժշկի զրութիւնը և նրա յարաբերութիւնը հասարակութեան հետ : Եւ յիրավի, որչափ դժուար է բժշկի զրութիւնը, եթէ հիւանդը լինուածէ ամեննեխն տղէտ բժշկական արուեստին : Տղէտ մարդը չզիտելով երբէք պահպանել իւր անձը նաև առողջ զրութեան մէջ, հիւանդ ժամանակը ևս կարող չէ ցոյց տալ ըլքացին իւր ցաւի խկական ազդիւրը, այն ինչ բժիշկը առաջին անդամ տեսնելով նրան, հեշտութեամբ կարող է սիսալուել և վնասել նրան : Հատ հիւանդներ վաս սովորութիւն ունին խրեանց յայսը զնել գեղաստումակների վրա, խնդրելով բժշկից զանապան ճարեր բերել ապա գեղանոցից, և բժիշկը ևս նրանց կամքը կատարելու համար շատ անդամ հարկադրուումէ հրաժարուել աւելի օգտաւէտ ուղիղ ներդործող միջոցներից գան զեղարանի թանգաղին գեղերը : Դժբաղդաբար շատ բժշկներ աւենելով հասարակութեան այս չափազանց ապահովութիւնը դեղերի վրայ, հնարել են և հնարում են, մեծ անուն և մեծ հարստութիւն ստանալու համար, նորանոր գեղեր, հրատարակելով ամեն աեղ նրանց սուստ առողջաբար զօրութիւնը : Այս պատճառով բժշկականութեան մէջ զիտել են բաղմաթիւ անպիտան դեղորէք, որոնց պաշտորը ընչաքաղցութիւնը աւելացընուամէ օրէցօր անհամար, ծածուկ և թանգաղին նիւթերով, այն ինչ զիտելով բժշկականութեան ընդհանուր կանոնները, մենք կարող ենք շատ զիպուածների մէջ զտանել մեր համար սակաւազին և օգտաւէտ առարկին ճարեր :

Այս ամէնից յայտնի երեսում է, որ մարդկային առողջութիւնը լաւ պահպանելու համար, հարկաւոր է ծանօթացնել հասարակութեանը ըլքշիկականութեան ընդհանուր կանոնների հետ : Այս պատճառով օգտակար ենք համարում առաջի առնել մեր ազգին հասարակաց բժշկականութեան բոլոր ընթացքը, քաղելով և թարգմանելով նիւթերը Եւրոպացւոց երեկի բժշկների աշխատանիրութիւններից : Այս առաջին անդամ ընծայում ենք մի անորակ, որ պարտճակում է իւր մէջ Յանկարծակի

ման պատճառող դիպուածների վրա կարեսր տեղեկութիւններ և նրանց ընդդէմ օգտաւէտ ճարերը : Այս տետրակի մէջ առաջ առաջ կխօսենք ամէն յանկարծահաս դիպուածների վրա ընդհանրապէս և յետոյ առանձին ամէն պատահարի վրա

§ 2.

ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ԳԻՊՈՒԱԾՆԵՐԻ ՎՐԱ ԸՆԴՀԱՆՈՒԹ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կան այնպիսի մահաբեր պատճառներ , որոնք ոչ միայն կարող են կարծ միջոցում մահուան դուռը ձգել մարդին , այլ և յանկարծակի կարել նրա կեանքի թելլ , նաև նրա ծավակավթիթ առողջութեան ժամանակը Ամէն մարդ պարտական է դիտել , որպէս իւր կենդանութիւնը պահպանելու , նոյնպէս և իւր ընկերին օգնելու համար , ոչ միայն այն միջոցները , որոնցով մննք շատ անգամ այս կորստական պատճառների առաջը կտրուամ ենք , այլ այն հնարները և ճարերը , որոնցով մննք կարողանում ենք եկած հասած արդէն յանկարծակի դիպուածներից ազատել ուրիշներին :

Այս մահաբեր պատճառներից մննք կարող ենք վախչել երկու հընարքով . կամ ջանք անել նրանց ներդործութեան առաջը կտրել և կամ փրկել մեղ , երբ որ նրանք յայտնել են արդէն իւրեանց կորստականներդործութիւննը :

Ամէն վեաստակար պատճառների առաջը կարելը մեր ձեռին չէ , ինչու որ նրանք համարեմ թէ անքաժան են մեր կեանքի հետ , մահուանդիէ մեր բան ու գործի հետ և սմէն ցաւաբեր պատճառներից կատարելապէս փախչելու համար , մննք պիտի բարեսու մնա ասենք յաւիտեան մեր կեանքին և աշխարհային կենցաղիս , բայց մննք կարող ենք անոպէս կըրթել և պատրաստել մեր մարմինը , որ նրանք չկարողանան աւելի վեաստալ մեղ : Այս նպատակին կարելի է հասանել յետազայ միջոցներով :

1. Պէտք է աշխատել մարմնավարժութեամբ ստանալ յաջողակութիւնն ամէն մարմնական շարժողութիւններում : Այն մարդը , որ սովորել է ուղղ վագել , ձիով մանազալ , լոյնորդութիւն , վեր ելանել զառ ի վեր ահղեր , անցանել նեղ տախտակի վրա և այլն , կարող է աւելի յաճախ աղատուել այն ահաւոր պատահարներից , որոնք շատ անգամ ծաղում են այս տեսակ գործերից , քան թէ նա , որ ամեննելն հմուտ չէ այսպիսի մարմնավերթութիւնների մէջ . 2 . Ճարկաւոր է շատ թէ քիչ տեղեկութիւնն ունենալ թիւնաւոր նիւթերի և գեղթավների վրա , կայծակի ներդործութեան վրա , օղի և ուղիչ վեաստակար կաղերի վրա , չերմութեան և ցրափ ներդործութեան վրա և այլն : 3 . Յանկարծակի դիպուածներումը ու շք

ու միտքը վկորցնել և չշնչլումը : 4. Պէտք է այնպէս սովորացնել մարմինը, որ ոչ ցուրտը, ոչ տաքութիւնը, ոչ օդային փոփոխութիւնները չափազանց զգալի չլինին նրա համար : Մարդ որ իրան այսպէս սովորեցրել է, կյաղթէ շատ անգամ ոչ միայն հիւանդութեան, այլ և նոյն մահուն այն տեղ, որ որ ուրիշը անչուշտ կիշանայ : Բայց հասած արդէն նըրանց ներդորդութիւններից մենք կարող ենք ազատել մեղ, եթէ սովորինք այն խնամատարութիւնը և դեղերը, որոնք որ հարկաւոր են յանկարծահաս հիւանդութիւնների բժշկութեան համար, որոնց վրա խօսելու ենք ներքոյ մանրամանաբար:

Ամէն մարդու համար հարկաւոր է և օգտակար զիտել յանկարծակի մահ պատճառող դպաւածներում ընկած մարդուն կամ ուշաթափածին օգնութիւն տալու միջոցները :

Աշխարհիս երեսին համարեան թէ ոչինչ չկայ այնքան հարկաւոր և այնքան օգտակար զիտելու, որքան այն միջոցների ճանաչելը, որոնք աղատում են մահու ճանկերից, վասնորոյ վկայ նոյնպէս մի այնպիսի գործ, որ պահանջում լինի մեղանից մի այնչափ արագութիւն, զգուշութիւն և համբերութիւն, որչափ այն փորձը, որ աշխատամէ յետ բերել մնուած մարդին : Ինչպէս վերելք ասացինք, մենք պարտական ենք ամէն ժամանակ օգնութիւն տալ մեր ընկերին, որի կեանքը ընկել է յանկարծակի մահումն երկիւղի տակ : Ոգնութիւն տալու ժամանակը առաջին և զըլիսաւոր կանոնը այն պիտի լինի, որ ամէն հարկաւոր ճարերը գործ ածուին, որքան կարելի է շուտով, ինչու որ շատ անգամ ճարերի ուշանալու պատճառով ուշաթափածը կարող է բոլորովին մնուանել մի բոսելի մէջ . նաև եթէ մեր կարծիքով բանը բանէն անց ըլնի կացել, դարձեալ մնանք չպիտի մեր յոյսը կտրենք և ձեռը վեր առնենք անբարտից, այլ 8-12 ժամ անդադար և կարգով պիտի շտրոնակինք ամէն միջոցները նրա փրկութեան համար : Այս պատճառով ոչ թէ միայն բժիշկը պարտական է զիտել այս միջոցները, այլ և ամէն հասարակ մարդու համար օգտակար է և հարկաւոր խմանալ, թէ ինչպէս պէտք է վարուել այն յանկարծահաս դիսուածներում, որոնք պահանջում են մի անյապաղ և շտուվ օգնականութիւն :

ՀԵՄԱՐԻՑ ՄԱՀՈՒԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

1. Ճշմարտապէս մնուած մարդու մարմինի վրա երեսում են կանաչ, կապոյս և թափս բծեր . 2. Փորը փքուտամէ . 3. Բերնից և քթից թափուտամէ զարշանուած շարաւ . 4. Մարմինը դառնումէ խմորինման կակուզ . 5. Վերնամաշկը վերէ կինում մարմնից . 6. Աչքերը լինում են պղտոր, թառամած, մատով սեղմելուց յիտոյ պատիկ փունք են մնում նրանց վրա . 7. Մարմինը ոկտումէ հոտել : Այս նշանները յայտնում են մարմինի վը-

տութիւնը , որիմն և կատարեալ մահը : Ամէն որիշ նշանները այնպէս խաբերայ են և անստոյգ , որ ամեննեին անկարելի է Կրտսով համարել մարդին ճշմարտապէս մնուած և չորդեկ ոչինչ ճարեր նրան հետ բերելու համար : Վասնորոյ ամէն պատշաճաւոր միջոցները պլափի շարունակուին այնչափ ժամանակ , մինչև մահուան ստոյդ նշանները յայտնուին , ինչու որ շատ անդամ զանազան ճարերի երկար զործածով ենից յետոյ միայն մկում են երեխ կենզանութեան նշոյները :

ԱՆՍՏՈՅԴ ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄ ԱԱՍՏԻԿ ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ
ՆՇԱՆՆԵՐԸ

1. Արտի և բաղկի դարելը կարուում է :
2. Շնչառութիւնը զադարուում է :
3. Ոչինչ զգացողութիւն չէ լինում :
4. Կորչում է կենդանական ջերմութիւնը :
5. Մարմինի անդամները անշարժ են և փէտացած :
6. Աչքերը պղտորուում են և բիբքը լուսից չեն նևզանում :
7. Ստորին ծնօտը կախ է ընկնում :
8. Կտրած տամարից արին չէ դուրս դալի :
9. Գէմքը ներս է ընկնում , թափուում է :
10. Մէջքի վրա երեսում են ծիրանի բծեր :

Թէպէս այս ամէն նշանները երեսում են և մեռելի վրա , բայց ուրանիք առանց փոտութեան նշաններ են , որ վերեր յիշեցինք , դեռ ես չեն ասպացուցանում ներդործ ական մահը . ինչու որ սասածների , չանթահար - ների և այլ բազում ուշաթափութեան դիպուածներում աներենով են սրափ քաղկը և շունչը , արին չէ դուրս դալի կտրած երակից , աչքերը հանգած են , մարմինը պաղ է և անզգայ և այն : Բայց կենսական զօրութիւնը երբեմն ծածկած մնումէ դեռ ես մարմինի մէջ և յարմար միջոցներով կարելի է զարթուցանել կեանքը :

ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ԳԻՓՈՒԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒԹԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՐԿԱՆՈՐ ՄԻԶՈՅՆԵՐԸ

1. Յանկարծակի մահով մնուած համարուած կամ սաստիկ ուշաթափածիած մարդը պլափի տանուի շուտով մի որ ելոյէ մերձակայ օթեան :
2. Կենդանացնելու միջոցները պլափի զործածուին որքան կարելի է շուտով , կարդով և հետաքար :
3. Ուշաթափածի հետ պէտք է վարուել մարդասիրութեամբ , կենդանացնելու ճարերը պլափի սկսուին ոչ յանկարծ ամէնը միասին , այլ կարգով մինը միւսից յետոյ համբերութեամբ :
4. Կենդանացնելու զորմանները զործ ածելու ժամանակը մեր աչքը չարփ հնատոյնենք ուշաթափածից , որ կենդունութեան նշանները

յանկուրծ չիտոչուին մնդսնից :

5. Ամեն աւելորդ զննողները պիտի հեռանան խելոցն, ինչու որ նըրանք ոչ թէ միայն օգուտ չեն բերիլ, այլ կարողին արդեկել և խափանել յաջողութիւնը :

6. Պէտք է հեռացնել այն ամէն բանը, ինչոր կարող է խափանել կինսական զօրութիւնը զարթուցանելուն, մանաւանդ արիւնաշուրջ երակների մէջ : Վասնորոյ հարկաւոր է չուտով հանել ուշամթափածի շորերը և առհասարակ ամէն բանը, ինչ որ ճնշում է մարմինը, այսինքն ամէն տհասակ կապերը, կոճակները, փողալատը և այլն : Եթէ հագուստը որ և իցէ պատճառով անկարելի է հանել, այն ժամանակ պէտք է զգուշութեամբ մաս մաս անել նրան և հեռացնել մարմինց, որովհեան ամէն անսակ ճնշումը չափաղանց վեսասակար է: Այս պատճառով իս աչքի տակը պիտի ունենանք միշտ, որ ողորմելին լինի այնախի դրութեան մէջ, որ արխինը և միւս հիւթերը չկարողանան զլխումը կամ կրծումը հաւաքուել, զլուխը միշտ բարձր պահել թէ, ուրիշ տեղ տանելու և թէ ճարկերի դորձածութեան ժամանակը, և այս կանոնը հարկաւոր է պահելնաև այն դիպուածներումը, երբ որ բերանից ջուր և լորձանք են թափուում: Զափաղանց վեսասակար է հասարակաց սովորութիւնը, որով ջրահեղձը շրջում են զլխիւայր ջուրը բերանից թափուելու համար :

7. Ուշամթափածին ուշիք բերելու համար հարկաւոր է շատ զգուշութեամբ օդ փշելը բերանում և բթումը, բայց տյնպէս, որ ամէն մի փըշելոց յետով կրկին դուրս հանել թոքերի մէջ մտած օղը թեմին ճնշելով կուրծքի տախտակը և այս կերպով դարձուցանել թոքերին խրեանց ըընական շարժողութիւնը, ինչպէս որ կատարուում է չնչոյ տուրիառութեան ժամանակը: Մթնողորտական օղը շատ բաւական է այս նպատակիս համար, թէ պէտկան և առանձին գործիք զորօրինակ փուքը, որոնցով փչուումէ ուշապնացութեան մէջ ընկածներին թթուածին կազը և այն, բայց այսպիսի գործիքը միայն հմտու բժշկի ձեռով կտրող են օգուտ բերել: Օղը փշելուց առաջ հարկաւոր է յատակել բերանը և քիթը կեղափաց, աւագից, հողից, խժային նիսթից և այն :

8. Ուանք արիւնառութիւնը համարում են օգտակար ամէն տեսակ յանկարծակի դիպուածներում, բայց շատ քիչ կան դիպուածներ, որոնք պահանջում լինին արիւնահանութիւն: Խեղդաման եղածներին և ածխահոտից ուշամթափածներում նա շատ օգտաւէտ է, բայց ջրահեղձների համար մահարեմ է:

9. Ուշամթափածի վրա ցուրտ ջուր ածելը, լուացումը, տաք կամ ցուրտ ջրով մի աւազանի մէջ նստացնելը, մարմինի մերսելը, ձիւնով, սառուցով, մահուառով և շշուկերով (վրձին, տանաւել) զրեթէ ուշապնացութեան ամէն դիպուածներում ոչ միայն շատ օգտաւէտ էն, այլ և զիսաւոր պայմանը կեանքի վերջին տկար կայծը վառելու համար :

10. Դեղորէք համարենա թէ հարկաւոր չեն երբէք . նրանք կարող են օդուու բերել մահաղեղ խմածներին թոյնը հաւասարելու . համար և թիւնաւոր կաղերից խեղդուածներին :

Անա սրանք են ընդհանուոր կանոնները և օրէնքները , որոնք որ պիտի սաւաջնորդեն միոյ յանկարծակի մահ պատճառող դժապածներումը :

§ 3.

ՈՒՇԱԹԱՓՈՒԹԻՒՆԸ

Յանկարծակի մահ առաջ բերող դժապածներից զվասաւորն է ուշաթափափութիւնը , որի մէջ մարդը յանկարծակի կորուսանումէ ըստ երեսութին ու շքը , զգացողաթիւնը և շարժողաթիւնը , նուաղելով կամ զբեթէ բոլորովին դադարելով չնչառութիւնը և բազեերակի զարկը :

Ուշաթափափութիւնը ունի երեք աստիճան : Առաջին աստիճանն է թիւթե ուշաթափափութիւնը , յորում բազկի զարկը և չնչառութիւնը դեռ ևս զգայի են : Երկրորդ աստիճանում բազկի զարկը և չնչառութիւնը սպառումեն , համարենա թէ , բոլորովին և վերջապէս յետին աստիճանը ունի կատարելապէս մահու պատկեր և նմանութիւն :

Ուշադնացութեան մերձակայ պատճառն է որտի և թոքերի զործողութեան նուաղութիւնը կամ կատարեալ ընդհապութիւնը , ուստի սպառուումէ և ջերի գործունուութիւնը : Սրանովէ որոշուում ուշադնացութիւնը կաթուածից , յորում վեասուումէ ամէնից առաջ ուղեղը , որ լցուումէ արիւնով : Այս զանաղանութիւնը շատ հարկաւոր է խմանալ , ըստ որում բժշկութեան հնարները զանաղան են և միմեանց հակասակ : Ուշադնացութեան հեռաւոր պատճառները բազմաթիւ են , բայց մենք այստեղ կը խօսենք միայն ուշաթափութեան յետին աստիճանի զվասաւոր պատճառների վրա :

§ 4.

ԶՐԱՀԵՂՉՆԵՐԻ ՈՒՇԱԹԱՓՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՆԱԲԵՐԸ

Մորդ ջրումը խեղդուելիս , բայցի մարմիի զանաղան վեասներից , որ ստանումէ նա ջուրը նետուերու ժամանակը , հանդիպումէ երկու տեսակ վտանգի : Կամ յանկարծ ընկնումէ տամիա (անդամալուծութիւն , կաթուած) , որ շատ հեշտ կարող է պատահիլ մարմիի բարեիսառնութեան շուտ փոփոխութիւնից և զվասաւայր ընկնելուց , մանաւանդ բարձր տեղից , որով արիւնը վաղումէ դէպի ուղեղը և կտամնա ուշաթափուումէ և խեղդ-

աւում՝ օդի պակասութենից : Երբ որ ջրահեղձին պատահում է կաթուածք, նրա երեսը լինում է կարմիր, դէմքի երակները փոքր ինչ կապաապոյն են ի արդիւնով, բոլոր մարմնի մորթին կարմրագոյն և ուռած, բերանը լի փրփրալից խժային հիմով, քափով, բայց ընդհակառակն եթէ ուշագնացութիւնը յառաջացել է օդի պակասութենից, կամ ուրիշ ինուքով թռքերի թմրութենից, այն ժամանակ երեսը ցմզկնած է, աչքերը յոդնած և առհասարակ ուղղումը արեան առատութեան նշան չկայ :

Զրահեղձի փրկելու համար ինսամատարութիւնը պիտի մկութի շատ շուտով և կարգով : Այսաջ առաջ ջրատարին որքան կարելի է զգուշութեամբ պէտք է հանել ջրից և յևայ տամնել որ և իցէ յարմար անդ, որ խակոյն ականք զործ ածել ամէն հարկաւոր հնարները նրա կեանքը աղատելու համար : Աթէ կենդանութեան մի քանի նշաններ գեռ ևս երեսում են, այն ժամանակ բաւական է միայն շորերը հանել ջրահեղձից նրա մարմինը չփել, մերսել, որ և իցէ տաքացրած բրդեղին նիսթով : Արինապութիւնը այս տեղ չուտով կսպանէ : Բայց երբ որ կեանքի ոչինչ նշաններ չկան, այն ժամանակ հարկաւոր է կասարել յետագայ կանոնները :

1. Օգնութիւն տապու ժամանակը առաջին և զիսաւոր կանոնը պիտի լինի համբերութիւնը, չոփաղանց վնաս է օդնաղների յուսահատութիւնը : Կամ օրինակներ, որ ջրահեղձները մինչեւ 10 ժամ ջրի տակ մնալուց յևայ կենդանացել են համբերութեամբ, խոհեմութեամբ և երկար զործածելով փրկելու միջոցները. 5-6 մարդ բաւական են օդնութիւն տալու համար :

2. Զրից հանելուց յևայ խակոյն պէտք է դնել ջրահեղձը աջ կոռքի վրա, զլուխը փոքր ինչ առաջ թեքել, ծնուաները բաց անեկ, որ ջուրը դուրս գայ բերանից և քթից, շուտով տկլորել և մարմինը ցամաքացնել քրդեղէն տաք վերակներով կամ հասարակ բրդով և զգուշութեամբ մերսել, շփել, քիթը և բերանը պլափ յատակումն խժային հիւթից և որիշ աղատելութիւնից. օրօրելը վեասակար է զիստին :

3. Անձ զգուշութեամբ պէտք է փշել օղը բերանում. քթի տակը բռնել անուշաղը ողին (*liquour ammonii caustici*) եղջերուի եղջիւրից հանած ցնդական ողին, աղը (*sal volatile cornu cervi*) կամ բարկ քացախը, քերած խրէնը (*flavijrhi ronqli*) և մանանեիրը :

4. Մարմինը պէտք է փոքր տաքացնել տաք փանելով կամ շալով, տաք մոխրով կամ աւազով ուսների մէջ և կողքերին դնել տաք աղվաներ, տաք ջրով լի բութուղիկաներ և աղըն : Զրահեղձի վրա ցուրտ ածելը շատ վնաս է, բայց սոնկի կամ որ և իցէ շորի կտոր թրչելը ցուրտ ջրով կամ զինով և երկու գաղացափ բարձրութիւնից քամելը սրափ դրզգափ վրա, միծ օգուս լքերէ :

5. Պէտք է անդադար չլիկ բոլոր մարմինը, մանաւանդ սաների

դարշապարհները, սրտի զրդալի կողմը, կակուղ չչուղկերով (սահաւեհներով), բրդի շորերով. թեթև խտաղել ոնդունքը և քիմքը զրչի փետրալից ծայրով:

6. Եթէ հանգամանքները ներում են, ալէտք է զրելս տալ երեցի չայլից և նստեցնել տաք ջրի աւաղանի մէջ, մի քառորդ ժամից յիսոյ հանել ջրից, ցամաքայնել մարմինը, զնել տաք անկողինը և շարունակիլ մարմինի շինը:

7. Վերջապէս եթէ երկար և անդաղար աշխատանքից յիսոյ կենդանութեան առաջին նշանները երևեցան, արմինքն թէ որ ողորմին որոշաց կամ չունչ քաշեց, այն ժամանուկ պէտք է չափաւորել կենդանացնելու փորձառութիւնները, փաթաթել կենդանի մնուելը բըրդի մերմակների մէջ, աշխատել պահպանել կենսական զօրութիւնը, ածելով նրա բերանը մի քանի կաթիլ դիմք, եթէ ջրահեղձը բոլորովին յիսեկաւ և կենդանացաւ, այն ժամանակ պէտք է խմացնել նրան մի հացի դրգալ աղնիւ դիմք և յիսոյ թողնել նրան հանգիստ, որ կարողանայ քընել, քունը ամէն ճարերից առաւել կղօրացնէ և կնորոգէ նրա կեանքը:

§ 3.

ՇԱՆԹԱՀԱՐՆԵՐԻ ՈՒԾԱԹԱՓՈՒԹԻՒՆՅ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Կայծակի նշովի ներդործութենից շանթահարների բոլոր կենսական զօրութիւնը յանկարծ հատնում է ամննենին և նրանց կեանքը ընկնում է մանի դուռը: Շանթահարների ուշաթափութեան և մահուան զլիաւոր պատճառն է զլիսի և ողնաշարի ուղեղի թմրութիւնը, թուլութիւնը, որով ի հարկէ թմրուում են նոյնպէս և չնշառութեան ու շարժողութեան դորձարանների ջերը: Այս պատճառով ամէն երեւյթները, որոնք մենք տեսնում ենք կայծակով զարկած մարդումը, առհասարակ հիմնուած են ջղայնն կարգի մէջ, բայց երեսում են սովորաբար և արինով լցուած տեղեր, վերքեր և կուրած ուկորներ, վնասուած երակներ, արխինհոսութիւն բերանից, քիմք և ականջներից և այլն, որպէս կայծակի մնքնաւկան նկրգործութեան հետեանքներ: Կայծակից վնասուած մարմինը ինում է շատ թուլ և կակուղ և շատ շուտով սկսում է նեխել:

Փրկելու միջացները սրանք են, շանթահարներին բաց բերանով նոր փորած հողի տակ դնելը, այսինքն՝ թաղելը հողի մէջ մինչեի խոչափողը համարուում է շատ օգտակար, բայց աւելի զօրաւոր ճարն է ցուրտ ջրի մէջ ընկղմնը կամ զլիին և մէջքին ցուրտ ջուր ածելը բարձր տեղից, չփելով մի և նոյն ժամանակում բոլոր մարմինը, Նոյնպէս հարկաւոր է օդ ինչի բերանում և եթէ այս հնարներով կեանքը յիտ է դառ-

նում, այն ժամանակ պէտք է խմեցնել մի քանի դրդակ աղճի զինի և մի ստաքան շատ ցուրտ ջուր : Շատ անդամ շանթահարների ու շքի զարուց յետոյ երեսում են դանաղան տկարութիւններ, զարօրինակ ամէն տեսակ թուլաթիւններ, խորթիւն, կորթոթիւն, համբութիւն և այլն, նոյնպէս խանձուած տեղեր, կտրուած ուկորներ և ուրիշ վնասներ, որոնց վրայ խօսելը այստեղ աւելորդ է :

§ 6.

ԽԵՂԴՈՒԱԾՆԵՐԻ ԵՒ ԱԾԽԱՀՈՏԻՑ ԿԱՄ ԱՅԼ ՎՆԱՍԱԿԱՐ
ԿԱԶԵԲԻՑ ՇՆՋԱՐԴԵԼՈՒԻՒԼԸ ԵՒ ՓՐԿԵԼՈՒ ՃԱՐԵՐԸ

Ուր որ մթնոլորտական օդի մուտք չնշառական գործարաններում նըւաղում է կամ բոլորովին հատնում, այնանդ անշնչութեան կամ սառտիկ ուշաթափութեան երկխող կայ : Օդի այս պակասութիւնը կամ ընդհատութիւնը չնշառութեան համար կարող է առաջ զալ դանաղան պատճառննրից, կամ մարդու ճիար կապուելուց թոկով կամ ուրիշ բանով, ինչպէս պասահում է խեղդուածներին, կամ վաս յատկութիւն ունիցող օդից, թթուածինի պակասութիւնից և կամ նրա ապականութեան պատճառով վնասակար արտաչնչութիւններից և բազմաթիւ թիւնաւոր կապերից, որոնց զասումն է նաև ծագկանց հոտը :

Այս ամէն դիմուածներում առաջ է զալի մահը կամ ուղեղը և թռքերը արխանով լցուելուց, որոնց մէջ շուտով երեսում է կաթուած, կամ թոքերի և չնշառական գործարանների թմրութենից և կամ այս երկու պատճառներից ի միասին, որ աւելի յաճախ է պատահում :

Խեղդուածների խոչափուղը և չնշափուղ աւերտում են շատ անդամ թոկի ներգործութենից, ուստի մահի երկխողը առաւել ես շատանումէ : Եթէ ուղեղը կոխուել է արխանով կաւ և թէ երկումեն ուղեղի կաթուած և թոքերի թմրութիւն, այն ժամանակ ունայն են ամէն ջանքը անբաղդը քրկելու համար :

Բացց մենք ամէն դիմուածում պարտաւոր ենք՝ գործ դնել և փորձել ամէն բանը, ինչ որ միայն կարող է օգտակար լինի շունչը յետքիրելու համար :

Խեղդուածի կամնքը զարթուցանելու համար առաջին գործը այն տիտի լինի առ հասարակ, որ որչափ կարելի է շուտով հեռացնենք վնասակար սկատճառի ներգործութիւնը, այսինքն՝ կտրել կամ յանել թռելը, որ խափանում է արխանաշրջութիւնը : Յետոյ հարկաւոր է կատարել յետաղայ խրատները :

1. Մերկացնել անբաղդը որքան կարելի է շուտով և ստուգել, կայ արդեօք կաթուած, թէ ոչ : Կաթուածի ներկայութիւնը կարելի է ճա-

Նազել կապոյտ և ուռած դէմքից, ուռած աչքերից, գեղնած շրթունքից, ուռած լեզուից, բերանից դուրս եկած փրփրալից խժային հիւթից և այն, Այսուղ հարկաւոր է երակ հատանել կռնից, կամ լաւ ևս է պարանոցի երակից, նոյնպէս աշխատել հեռացնել արխանը ողիղից տղրուկներով 15—20 հատ տղրուկ դնել ականջների քամակին, քունքերին և պարանոցի բոլորակիքը :

2. Բերանում և քրթում ներս փնել օդը և հոգ տալ երեսին :

3. Շատ օգտաւէտ է ցուրտ ջուր ածել զլխին և բոլոր մարմինն և սառուցի պէո ցուրտ և թաց թաց բարձիկներ դնել զլխին :

4. Օդասկար է նոյնպէս դրեխը շատ ցուրտ ջրից :

5. Բոլոր մարմինը շփնել բրդեղին շորերով և երբ կարելի է վշրած սառուցով կամ ձինով :

6. Եթէ երենեցան կեանքի հետքերը և եթէ ողորմելին կարողանայ կլանել, խարյն պէտք է բերանը լանալ և ածել մի ստաքան շատ ցուրտ ջուր, որտէս ամէնից լաւ կենդանացուցիչ ճար :

Այն դիպուածներում, ուր որ կաթուածը չէ ուշաթափութեան պատճառը, այլ միայն թոքերի թմրութիւնը, որ կարելի է ճանաչել վերոյիշեալ նշանների բացակայութենից, այն ժամանակ երակահատութիւնը կամ տղրուկները յանկարծ կապանեն, Այսուղ պէտք է բաւականանալ շվելով, վրան ջուր ածելով, սրտի դրդալի կողմը ջուր սրսկիրով և օդը ներս փնելով :

Եթէ անշնչութիւնը յառաջացել է այն պատճառով, որ մթնոլորտական օդը զրկուել է իւր թթուածինից կամ կշտացել է ուրիշ մասակար դաղերով, այն ժամանակ անբաղդի դրութիւնը լինում է գանաղան, նայելով նրանց զանազան յատկութիւններին : Եթէ լինում է կաթուած ուղիղի մէջ, որ շուր շուր է պատճառում, այն ժամանակ պէտք է դործ ածել վերոյիշեալ միջոցները կաթուածի ընդդեմ, երեւմն երեւմն անդամալուծութեան նշաններ, մանաւանդ ակար և նիհար մարդկանց վրայ, այն ժամանակ ոչինչ չէ կարող օգնել մահից, ամէն աշխատութիւնը կլինի ունայն :

Խնդրուելու պատճառը յաճախակի լինում է ածխահոսը (չգարե), երբեմն ծծմբային ջրածինը, որ անուշադրի և ածխածինի հետ միաւորուելով, դուրս է գալի հին գերեզմանաներից, ճահճճներից և որանց նման տեղերից : Երբ որ շատ մարդիկ հաւաքուում են մի ամէն կողմից փակուած տեղ, այն ժամանակ մթնոլորդական օդի բոլոր թթուածինը փոքր փոքր ծծուում է և կորչում և մնում են միայն ածխային թթուածինը և առօտը, որոնք ամենեին ամափառան են չնչառութեան համար և շուտով կրկնեցնում են մարդու շունչը և խեղդում : Կմանապէս և բոցերը արտաշնչում են խրեանցից, արեգակի մայր մանելուց յետոյ, շատ ածխային թթուածին, օքսիդի և ածխածինի կաղ, վամնորոյ երկիւղակի

բան է շատ ծաղկներ պահել քնարամներումը : Համարենա թէ և ամէն ուրիշ կաղանման թթուութիւնները, օքսիդները և թթուամները կարող են լինիլ չնչարդելութեան պատճառ :

Կենդանացնելու հնարքները առաւելապէս սրանք են, ուշաթափուածին որքան կարելի է շոտով զուրս տանել միջնորդական օղը, շորերը հանել, անդադար ջուր ածել վրան, մերսել մարմինը և օգ փչել բերանում և քթումը : Եթէ կաթուած է առաջ եկել կամ կաթուածի երկիւդ կայ, պէտք է խոկոյն երակ հասաներ, Երբ կաղերը ներգործել են իրեն մահաղեղ, այն ժամանակ ամէն ճարերը անօդուան :

§ 7

ՍԱՌԱԾՆԵՐԻՆ ՓՐԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սառածների համար պէտք է ամենեին ուրիշ հնարներ, Տաքութիւնը կարող է սպանել նրանց : Սառած մարդկանց դրութիւնը տղղակի հակառակ է շամթահարների դրութեան : Առաջինների մարմինը լինում է թմրած, պինդ և ցուրտ, յետիններինը — թուլ, կակուդ և երկար մընում է տաք, առաջինների արինը մարմնի շրջակայ տեղերից վաղում է դէպի ներքին զործարանները, ուղեղը, աչքերը, սիրտը և այլնլցուում են արինով : յետիններին պատահում է ամենեին ներհակ արկածներ, արհան բացակայութիւն ներքին զործարանների, մէջ, թմրութիւն, արեան արտաքս ելանել դէպի մորթին և այլն, առաջինների արինը պաղում է և պնդանում, յետիններինը, ընդհակառակին, աւելի անօսր է և ջրապի և այլն : Սառելու երկիւղը լինում է աւելի այն ժամանակ, երբ որ մարդ ճանապարհ գնալիս սկսում է խոնդ արադ կատ ուրիշ խմիչքներ, կարծելով՝ թէ այս երապով կարող է տաքանակ : Բարկ խմիչքների զործածութեանից յետոյ սովորաբար, երեսում է խոնջութիւն, մորթին կորուսանում է իւր դպայութիւնը, այսինքն՝ ցուրտը զգալի չէ լինում նրա համար, առաջ է դպի անձկութիւն, քնափութիւն, զլիսի պատյա և այլն : Ողորմելին քանի զնում է, այնքան նրա գնացքը վոռքը առ վոռքը ծանրանում է, ծնկները կտրառուում են, առաջ զնալու փոխանակ պատյա է դպի, համարենա թէ, մի և նոյն տեղում ծուռ ու մուռ քայլերով և ի վերջոյ վայր է ընկնում անդպայ, ուղեղը արինուով լցուելու պատճառով : Ով որ ցուտումը պիտի ճանապարհ դնայ, հարկաւոր է նրան զսդել իրան ամէն բարկ խմիչքներից, նա պիտի ուսի զօրացուցիչ կերակուր, զինոյ արադի տեղ խմել ցուրտ ջուր, շուտ շուտ ման գալ, և երբ որ յոզնեցաւ, դաղարեցաւ և ցրտի ներգործութիւնը զդաց, իսկոյն պիտի ջանք անի համել շուտով մի որ և լցէ մերձաւոր իջեանի :

Սառածներին փրկելու հնարները սրանք են, որովհետեւ յաջանի է, որ

օդի յանկարծ վտփոխութիւնը կարող է պատճառել մահ, վամնորոյ սառածներին օգնութիւն տալու ժամանակը չպէտք է խելոցն տանել նրանց տաք տեղ, այլ առաջ առաջ կամ դուրսը օգնութիւն տալ և կամ տանել մի ցուրտ սենեակ և տեղորել նրանց զդուշութեամբ, յետոյ դնելնը բանց կամ ցուրտ ջրի աւազանում, կամ ծածկել նրանց մարմինը ձիւնով և կամ փոթեթել ցուրտ ջրով թաց արած սաւամներով, զլուխը փոքր ինչ բարձր պահելով և բոլոր մարմինը մերսել ցուրտ մահուսով։ Այսանդ կեանքը եսց է գալի ինքն իրան և երբ որ նրանշանները կերևան, այն ժամանակ կարելի է հիւանդին խմեցնել մի սասաքանց ցուրտ ջուր կամ մի քիչ չայ զինով, արաղով կամ բոմով և տալ հոտոտել կամ քացախ, կամ քերած բողի, վայրի և կամ անուշաղրեայ ողի։ Նրբ որ սառած մարդը ուշաբերուեցաւ, այն ժամանակ միայն կարելի է տանել նրան չափաւոր տաք տուն և պարկեցնել անկողնի մ՛ջ։ Եթէ մի քանի ջոկ ջոկ անդամներ դեռ ես պինդ են և թմրուած, նրանց համար ես պէտք է գործածել այն միջոցները, որոնք որ գործածուեցան բոլոր մարմնի համար։

§ 8

ՄԱՀԱԴԵՊ. ԽՄԱԾՆԵՐԻՒՆ ԿԱՄ ԹՈՒՆ. ԴՈՐՈՒԾՆԵՐԻՒՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏԱԼԸ

Երբ որ մարդ որպիսի և իցէ կերպիւ մահաղեղ է խմել, ամմնից առաջ պէտք է մեծ ջանք անել այն մահաղեղը կամ թոյնը ստամոքսից դուրս հանել փախել տալով, գրեթէ ամէն սուր թոյները փախեցնում են ինքն իրանք, վամնորոյ այս փախումն պիտի շարունակուի խմեցնելով տաք ջուր, տաք կաթը, կաթնով ջուր, այնքան՝ որ փորը լցուի։ այս խմեցները հարկաւոր է խմեցնել հիւանդին ամէն երկու կամ հնդ բոսկ կէս կէս ստաքան։ Եթէ փախումը չէ բացուում, այսատել զրգուել նրան մատը բերանը կոխելով։ կամ զրչի փետրալից մասը օծանել ձեթով և նրանով խտափեցնել որկորը։ Փախեցոցից զեղերի տալը առանց բժշկի երկխաղի է։ Այս կերպով ստամոքսը մահաղեղից դատարկուելուց յետոյ թոյնի ներգործութիւնը ոչնչանումէ կամ պակասում զանազան հասարքներով, նայելով թիւնալի նիւթի բնութեանը։

Ա. հասարակ այն մահաղեղերի ներգործութիւնը, որոնք որ պատճառում են խիստ և այրող ցաւ ստամոքսումը, նուազում է, թէ որ հիւանդը առաստութեամբ խմում է կաթը և զանազան տեսակ խժայն հիւթ պարունակող ըմպելիք, որք են, կանեփի կաթը, նշի կաթը, ախորի խաչուն և այն, Ուշաթափութիւն պատճառող կամ հարբեցնող թոյների զօրութիւնը շատ տկարմանում է թթու բաներ խմելով, չոր քա-

ցախով, քամած լիմոն ջրով, պինդ խահուէ և այլն : Բայց յարմաք դեղ-թափներ զործածելու համար հարկաւոր է միշտ զիտել, թէ մարդ որպիսի մահաղեղով է թիւնաւորուած :

1. Սկնդեղով թիւնաւորուած ժամանակը պէտք է տալ հիւանդին ջրով շարաբ կամ շաքարով ջուր, շարբաթ, խրաքանչիւր 3 կամ 5 րոպէ երկու երկու կամ երեք երեք սեղանի զրգալ, սրանց հետ կարելի է խառնել փոքր ինչ կրի ջուր : Նոյնպէս օգտակար է այրած մազնեղիսն ջրով : Բայց ամէնից լաւ դեղֆափիը մինողեղի ընդդէմ է երկաթի ջրային օքսիդ(oxydum ferrri hydratum) 0.յո օքսիդի 15 մասալ խառնուրդը մի բուտիկայ տաք ջրի հետ պէտք է տաք տաք խմեցնել մի մի սեղանի դրդալ ամէն 2, 3 կամ 4 րոպէ :

Եթէ կլինին մինդեղի ներկայութեան նշանները սուամոքսումը, որ ճանաչուում է փորի սասափի ցաւից և որովայնալուծութիւնից, այն ժամանակ վերոյիշեալ երկաթի օքսիդով պիտի զրեխ շինուի յևտագայ եղանակով : Մի փունտի երրորդ մասնի չափ հասարակ տաք ջուրը, երկու սեղանի դրդալ օքսիդը և մի զրդալ զլաւպերեան աղը խառնել ի միասին և կդառնայ զրեխ :

2. Ճիւայի կամ մնդմկի բաղադրութիւններով, զորօրինակ սուլիմայով թունաւորուած ժամանակը ամէնից լաւ դեղթափն է հում ձուոյ սպիտակուցը : 0.յո նպատակով ամէն երկու րոպէ տալիս ևն հիւանդին մի մի ձուոյ հարած սպիտակուց ջրով : Նոյնպէս կարելի է տալ ամէն տեսակ ալիւր ջրի հետ խառնած կամ հիւած : Այսուղ ևս օգտակար է և վերոյիշեալ օքսիդը :

3. Եթէ մարդ թունաւորուել է պղնձի ժանգով, պղնձի կամ երկնադոյն արջասպով և անկլայեկած պղնձի ամանների մէջ պատրաստուած կերակուր ուսեկուց, այն ժամանակ ևս ամէնից լաւ դեղթափն է ձուոյ սպիտակուցը ջրով, ջրով եփած ալիւրը, կաղնուոյ կամ ուռենուոյ և կամ քինայի (դառնիճ) կեղեի արգանակը. նոյնպէս օգտակար է շաքարի ջուրը : Քացախը շատ վեաս է :

4. Ծարբաքարի (սիւրմի) բաղադրութիւններով, զորօրինակ ործացուցիչ կամ փոխեցուցիչ տարառվ (tarlarus emeticus) թունաւորուածի համար դեղերն ևն վերոյիշեալ զեղերի նմանները, զորօրինակ քինաքինայի, կաղնուոյ և ուռենուոյ խաշած կեղեի և խաշած զիստորի ջուրը կամ խաշուն և այն : Գիստորը կարելի է տալ փոշիսցած ևս մի չայի դրդալ ջըրով :

5. Թունաւորին քրէական կամ հանքային թթուութիւններով, ոյսինքն՝ ծծմբային կամ արջասպային թթուութեամբ (Կյոպարօնու մածո, acidum sulfuricum)

Այս թթուութեան խմելուց յետոյ երեսմ և սաստիկ կիղումը խըռչակիողում, կրծում և սոսամոքսում, պոռչների և թշերի վերսոյ դուրս ևն

գտղի մեադոյն մանր խոցեր, բերանի մէջ լորձինոտ թաղանթը կուլնճ-մթուուում է և զանհնում է մուք մոխրագոյն, կլանելը և չնչառութիւնը դժուարանուում են, հիւանդը փսխում է մի սնապոյն, արինաթամթաւ հիւթ, երբեմն թաղանթների հետ խառն ի մլասին, կղկղանքը արինաշաղախ են, զգում է մի անտանելի ցաւ ստամոքսումը և շատ նեղանում է և շր-փոթուում։ Այս տեսակի հիւանդը փրկելու համար ամենալաւ դեղն է հա-սարակ մագնիզիան, որ կարելի է տալ ամէն երկու կամ երեք բոպէ կէս կէս սեղանի դրդալ ջրով. որա հետ ի միասին որչափ կարելի է շատ ջուր խմեցնել չաքարով կամ առանց չաքարի։ Փոխանակ մագնիզիայի կա-րելի է տալ նոյնապէս կրի ջուր, առաջ ամէն երկու բոպէ մի մի սեղանի դրդալ, յիտոյ ամէն և կամ 5 բոպէ։ Եթէ մագնիզեայ կամ կրի ջուր չը-ճարուին ձեռաց, կարելի է նրանց փոխանակ դործածել կաւիճը (մէլ) մի մի չափ դրդալ ջրով կամ սապոնի ջուրը ամէն մի քանի բոպէ կէս կէս թաս։ Սապօնի ջուրը պիտի պատրաստուի տասը մսխալ ճերմակ սա-պոնից և երկու ստաքանց ջրից։ Հիւանդութեան զլխաւոր արկածները այս կերպով հանդարտեցնելուց յիտոյ պէտք է գործածել խժային զեղու-րայքը, կամը խաչած բրնձի ջուրը, տուղտի արգանակը, նշի և կանճիփի կաթը և այլն։ Այսիդ օգատակար են նոյնապէս զրեխը բրնձի կամ ալիւրի արգանակից և կամ ուրիշ որ և իցէ խժային նիւթից պատրաստուած և աղբուկների և տաք տաք կակղեցուցիչ զեղորայքի զնելը փորին։

Բ. Բորակային թթուութեամբ, որ է ժանառաջուր, դժոխաջուր, (երեսկայ водка)։ Սա ներզործում է վերոյիշեալ ծծմբային թթուու-թեան պէս և արկածները զրեթէ մի և նոյն են, բայց բերանի պրոցները, կաշին և ուրիշ մասները ինչ տեղ որ զիակել է այս թոյնը, առաջ առաջ լինում են փոքր ինչ սպիտակ և ապա զեղնաղոյն։ Դեղորայքը նոյն-պէս մի և նոյն են։

Այսպէս ամէն թթուութիւնները մերձենալով արտաքուստ մարդու մարդուին, զն ծծուում, այլ այրումն հպած տեղը, որ թժկուում է ձէ-թի և խողի դործածութեամբ։

Յ. Թունաւորեկն կապարեայ կամ արձճի բաղադրութիւններով, կա-պարեայ կազմուածներից թունաւորուումէ մարդ աւելի շտառվ կապա-րեայ չաքարով կամ արճճի աղով (ևնիցօվայ ճախարտъ сáchártum sali-ռու որ գործանոցներումը պատրաստում էն սպիտակաղեղից և զտեալ բարկ քացախից։ Այս մահաղեղով թունաւորուելու զլխաւոր նշանն է փորի սաստիկ խեթը, ցաւը; որ առաջ առաջ է ընդհատ և յիտոյ անդնդ-հատ, բայց մերգանուումէ նա փորը պինդ սեղմելուց ձեռով։ Բացի այս տրկածից երեսում են եռ կամակոր որովայնապնդութիւն, երբեմն փախու-մըն, խիստ անհանգստութիւն և սրտնեղութիւն։ Բաղկի զարկը լինուա-լ միշտ կարծը և համբ։

Օղնութիւն տալիս ամէնից առաջ հարկաւոր է փոխեցուցանեկ հի-

հաճնդին, որ թոյնը դուրս այ : Արա համար հարկաւոր է խոտաղի խըռա-
չափողը զբացվ կամ մատով և արբուցանել տաք ջուր առատութեամբ :
Եթե որ մկան վախել, խակոյն պէտք է տալ ըմպել Անդղիոյ աղը կամ զը-
յաւրեկեան տղը, հավելով երկու համ երեք սեղանի դրգալ աղը երկու
կամ երեք ստաքան տաք ջրի մէջ և տալ հրանդին ամէն երկու կամ
երեք բուպէ մի մի սեղանի դրգալ : Այս երկու տեսակ աղերը ներգոր-
ծում են զեղթափի պէս : Այս հնարիներից յետոյ լաւ է խմնցնել կաթը
և ուրիշ խժային զեղորայք, նոյնպէս դրեխը, որ պիտի պատրաստոի
խժային հեղանիներից և մի զրգալ Անդղիոյ կամ զլաւպերեան տղից :
Եթե որ հրանդը սկսէ լաւանալ, օգտակար է նրա համար քսել փորին
իւղ կամ ձէթ և գնալ շուտ շուտ բաղանիս :

7. Գմոխայինքարի (ածեկի կամեն, lapis in fernalis) ընդդէմ ա-
մենալու զեղթափին է հասարակ աղաջուրը : Երկու կամ երեք սեղանի
դրգալ հասարակ աղը հալում են մի բուտիկայ ջրի մէջ և տալիս են հի-
ւանդին ամին երկու կամ երեք բուպէ մի մի դրգալ մինչև յառաջանաք
փախելը, յետոյ կարելի է ուշ ուշ տալ :

8. Թունաւորեին փափորով կամ փոփորով : Յոսփորը պատճա-
ռում է որովայնի և աղիքների սասափի բորբոքումն ։ Հիւանդի մարթոյ
և թոքերի արտաշնչութիւնները արձակում են խտարի հոտ, այլ մէզը
և կրկդանքը մութ տեղը փոքր ինչ լոյս են տալի, մէդի եւանելը փոքր
ի շատէ դժուարանում է, գեղորայքը սրա ընդդէմ են խժային արգա-
նակները փախեցնելու համար և խչափողի խտաղեցնելը, յետոյ հարկա-
ւոր է խմնցնել ցուրտ ջուր փոփորի լուծաները արզեկելու համար և
մագնելիս ցուրտ ջուրի : Առաջին արկածները մնդմելուց յետոյ պարտ է
տալ խժային նիսթեր և բժշկել որովանի և աղիքների բարոքումն բը-
ժըշիի ձևուով :

9. Թունաւորեին ամիփոնով, գլխաւոր արկածները սրանք են, թըմ-
բութին, դիմի պառյա, խորին քուն, պարանոցի երակների ընահելը ա-
րիւնով, անդպայութիւն, ուշաթափութիւն, չնչարդելութիւն, բաղիլ յա-
մըր գարել, ելլերին ջղերի և մկանունների ցնցումը : Եթէ այս զրութիւնը
չէ աւարտուում յանկարծակի մահով, քաշում է սովորաբար վեց ժամից
մինչև տասն երկու ժամ :

Ափիոնով թունաւորուած մարդու բժշկութիւնը պիտի սկսուի փախե-
ցընելով, այս դիպաւած ում ամէնից լաւ փախեցուցիչ ճարմ է ձինքը, որ
Տաճկերէն ասուում է ուռի թութիւ : Այս փախեցուցիչ ճարը պատ-
րաստուում է յետագայ եղանակով : տասը կամ տասն երկու դրան ձին-
քը հալել երեք կամ չորս ունկի ջրի մէջ և հրանդին տալ ամէն տասը
բուպէ մի մի սեղանի դրգալ մինչեւ ներգործութիւնը : Այս զեղը կարելի
է խառնել ործածութիւ արմատի հետ իմիասին (իբեկալուհանա) : Յե-
տոյ ամէն հնարքով պէտք է փախցնել հրանդից քունը, զիմին ցուրտ

ջուր ածելով կամ ուրիշ հնարիներ գործ ածելով, ֆախելոց յիտոյ պէտք է տալ գեղթավիը, որ է կամ քինաքինավի, կամ ուռւոյ, կամ կադնուոյ և կամ գլտորի թրմոցը։ Հոտոտել տալ վայրի բողիը, անուշաղրեայ ողին կամ քացախը։ Եթէ կաթուածի երկիւդ կայ, կարելի է արխն հանել կոնից և տղասկներ զնել ականջների քամակին կամ արեան սրուակներ, կոտոչներ մէջքին։ Եցյնպէս օգտակար են հովացած զահֆէն և լիմոնի ջուրը։ Այսպիսի միջոցներ են պահանջում նոյնպէս և մոլեխինդով, աշարայով կամ հաճարով (չորչոյ) և ծխախոտով թունաւորուածները։

10. Թունաւորեն խարանով կամ լաւ ևս է ասել Սպանիոյ ճանձերով կամ բղեներով (Шпанскія մշակու, cantharides)

Սպանիոյ ճանձերը, որոնցից որ շնուռում է խարանադեղը, մարդու մորթու վրայ դրած կամ խմած, պատճառում են այնպիսի ծանր արկածներ, որոնք կարող են նաև վերջանալ մահով։ Արկածները յիտադայքն են. սուր և շատ անախառժ համ բերանում, մի առանձին և սիրտը խառնող հոտ բերանից, այլուղ տաքութիւն խռչափողում, փորում և ստամոքսի ուրիշ մասմարում, սիրտը խառնել և փախել, առաս և շատ անդամ արինախառը որովայնալուծութիւն, արական գործարանի յամառ և ցաւալի լարումն, ջերմութիւն և ցաւ փամիշտի կոզմը, միզի դրտուար արձակումն, երեսն միզարտելութիւն և երեսն արեան միզումն, բաղկերակի զարկը շուտ շուտ և պինդ, շատ ահզամ կրանելը դժուար և ծամնլիքների սեղմումն, վերջապէս երևում են մկանունների սասափկ ցնցումն և ցնորք, որոնք շուտով աւարառուում են մահով։

Հիւանդին փրկելու ժամանակը առաջ պէտք է զրգուել փսխումն, մասը բերանը կոխելով և կամ ործածուծիչ արմտի փոշխով, որ պիտի գործածուի 15—20 զրան գարենատ չափահանների համար, այլ երեխայից հսմար այնքան զրան, որքան տարեկան են։ Յիտոյ խմեցնել նշի կամ կանեփի կաթը։ Խժային նիւթերից զրեխս պատրաստել, կարելի է տալ 4—6 զրան քափուր նշի կաթնով։ ամէն տեսակ խղալի նիւթերից հըրաժարուել, Միզարանի ճանապարհների և ծննդական գործարանների ցաւերը հսնդարառուում են 15—20 տղրով դնելով ցաւազար մասմերի վրայ և կակղացուցիչ թանձրաթան փորի վրայ, խղալի նիւթեր քափուրով քսելով և տաք ջուրը դնելով հիւանդը։

11. Թունաւորին թիւնալի սունկերով։ Այս թունաւորին արժանի է ուշաղրտթեան, սրա վեասակար ներգործութիւնը երեսում է սունկերի տակելուց մի քանի ժամ յետոյ։ Արանշաններն են. ջերմութիւն խըռչափողում, սրտի խառնումը, փսխումը, փորի փքումն և ցաւ, արինախառն որովայնալուծութիւն, ուշագնացութիւն, զլիսի պտոյտ, ամնզայութիւն, ցնորք, սրսնեղութիւն, հծկոտանք, ծանր չնչառութիւն, մկանուններիցնցումը և եթէ հիւանդը շուտով օդնութիւն չատանայ, կարող է մեռնիլ։

Այս տեսակ հիւանդներին ամէնից առաջ հարկաւոր է փոխեցնել, վասնորոյ եթէ խտողեցնելը խոչափողում բաւական չէ լինում, պէտք է ործացուցիչ դեղ տալ, յևոյ լուծիչ գրեիր և լուծողական զլաւքերեւան աղը, կամ շանածաննի անկոյ խողը (կենագերչակ) և կամ կանեփի խողը և խմելու համար լիմոնի ջուր, կամ ջուր մի քիչ դինի խառնած :

§ 9

ԳԻՒԵՀԱՐՈՒԹԵԱՆ ՃԱՐԵԲԸ

Կինհարներին ուշաթափութենից յետ բերելու համար պիտի յետադայ հնարները դործածուին դրդուել փախումը, զլիմին ցուրտ ջուր ածել, թթու ըմպելիք խանցնել, փորը և զլուխը թաց անել քացախով, մանանեխ կամ խրին դնել ձեռներին և ոսներին : Եթէ արիւնը քաշուել է դէպի զլուխը և կաթուածի երկիւղ կայ, հարկաւոր է երակ հատանել ձեռից և կոտոշներ դնել մէջքին : Բժիշկները այսպիսի հիւանդներին ուշքի բերելու համար տալիս են կաթիլ կաթիլ սմուշաղրեւայ ցքին :

§ 10

ՀԱՐՈՒԱԾԻ ՃԱՐԵԲԸ

Խիստ ջարդուածներն օդնութիւն տալը : Եթէ մարդ բարձր տեղից վայր ընկնելուց կամ ուրիշ կերպով հարուած ստանալուց յետոյ դառնումէ տժզոյն, երեսի գոյնը թռչում է, զգում է անտանելի ցաւ, զլիսի պտոյտ կամ ուշաթափուում է, այն ժամանակ անշուշտ հարկաւոր է հրաւիրել բժիշկ, բայց մինչեփ նրա գալը, կարելի է դործածել յետազայ հնարները. ձեռից արիւն հանել 1—2 ստաքան, ջարդուած տեղի վրայ ցուրտ ջրով կամ քացախախառն թաց թաց շորեր դնել : Ջարդուածների հագուստի կոճակները արձակել և հեռացնել ամէն բանը, ինչ որ ճնշում է նրանց մարմինը :

§ 11

ՕԶԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԹԻՒՆԱՒՈՐ ՄԻԶԱՑՆԵՐԻ

ԽԱՅԹՈՒԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏԱԼԸ

1. Օձը կարող է խայթել միայն մերկ կամ բարակ շորով ծածկած անդամները, օձից պատճառած խոցը երկու դժաշափից աւելի խորոշիւն չունի, բայց հեշտութեալը բորբոքուում է և ուռուցը շուտով տա-

Կ սծուում է մերձակայց անդամներում, խայթելոց առաջ և կած ընդհան-նուր արկածներն են. մնձ թուղութիւնը, ուշաթափութիւնը, որովհանա-կուծութիւնը, փախուրը, դիդինացաւը և տեղողը :

Այս արկածներից հիւանդը շատ անդամ մնուանում է, բայց Եթէ ապ-րեցաւ եօթն օր, այն ժամանակ կարելի է նրան համարել աղաստուած : Ա-ռողջանալու ժամանակը հիւանդներն առ հաստրակ սաստիկ քրանում են, որչափ առաւել դիւրադրդիւն է հիւանդը և որչափ մնձ է օձը և խոր խո-ցը, այնչափ առաւել երկիւղ կայ : Յայտնի է նոյնպէս, որ խայթումը ա-ւելի երկիւղալի է ամսան ժամանակը քան թէ դարունքին, եթի որ օձը չունի դեռ այնքան թոյն :

Գլխաւոր նպաստը այսուղ այն է, որ կամ հեռացնել կամ ոչնչացնել խոցի մէջ գտնուած թոյնը, վասնորոյ խոցը ջրով կամ միզով լուանա-լուց յետոյ, հարկաւոր է լայնացնել նրան մի սուր, հասու գրծիքով, որ արիւնը չկապուի և դնել վրան անուշաղրի բարկ ոզի, կամ այրել խոցը հրաշէլ երկաթով, զորօրինակ մնխով : Եթէ անուշաղրի ցքի չե-ղաւ, լուանալ խոցը բարկ մոխրաջրով, արադով կամ քացախով և կամ շիել աղով :

Սահմանալից մասները օգտակար է օճանել ցնդական սպեղանիով (լետցայ մազ և լուսուած թոյնը, վասնորոյ խոցը ջրով կամ միզով լուանա-շաղրի արադից և երեք ունին ձիթասպողոյ կամ խաչխաչի խոցից : Եթէ այս սպեղանին չպատահեցաւ, այն ժամանակ օճանել միայն ձիթապո-ղոյ խղով : Թոյնի ծծուելը խափանելու համար անդամների կագելը շատ վտանգաւոր է, ինչու որ կապելը ուռողցը մնձացնելով՝ կարող է պատ-ճառել քաղցկեզ կամ Անտօնի հուր : Խմելու համար այս դիպուած ումը օգտակար են դինին կամ քրտնացնող ըմպելիքն. զորօրինակ թանթըր-մնուոյ տերմներից չայ (ցընկա, ֆորս սաւիաց)

2. Մեղուի կամ մեղրածանձի, պիծակի կամ իշամնղուի խայթումը սպատառում է մորթոյ սաստիկ բորբռքումը, այնքան առաւել վտան-գաւոր է, որքան բաղմաթիւ են խայթմունքները և որքան զգայուն են հարռուած մասները : Մի անդամ շատ տեղեր խայթումը, երեսի, ական-ջի, պարանոցի և կրծոյ, երբեմն պատճառում է սաստիկ տենդ, մկանաց կծկումը և նաև մահ :

Օդնութիւն տաղու ժամանակը մեղուի կամ պիծակի կծածին ամէնից առաջ պէտք է աշխատել հանել խայթոցը մարմնից կամ դոնիկ կտրել բշամիները, որոնց մէջ, որպէս ասում են, լինում է թոյնը : Յւայտոյ կը-ծած տեղի վրայ դնել արադումը կամ քացախումը թաց արած բարձիկ-ներ, սրանով առ հասարակ հնուանում են ցափի, ուռուցի և բորբռքան սաստիկ թիւնը և ընդարձակութիւնը : Եթէ այս արկածները արդէն տա-րածուել են, այնժամանակ կարելի է մնդմել, ցաւու տեղումը դնելով բար-ձիկներ թաց արած ցուրտ չըրով, աղի չըրով և կամ կապարեայ չըրով :

շամ է նոյնապէս օծանել ուռած տեղերը ձիթավտուոյ իւղով կամ ճարութիւն կամ սերով : Եթէ երեսում է տենդը, կարելի է տալ գինագերչակի իւզ :

3. Ամէն խածանող մանր կենդանիների մէջ, որոնք բնակուում են Կովկասիան զաւառներումը, առաւել վասնդաւորներն են տարանատուը, (կովածուծ, թունաւոր մեծ մողեղ), կարիճը և փաղանդը (Փալանց, սարդի նման թունաւոր կենդանի) : Առաւել դժուարին արկածները առաջ են զաղի փալանդի խայծուածից : Բայց այս սարդի նման թունաւոր կենդանիքը վասնդաւոր են միայն չոք ժամանակը, Յունիսին, Յուլիսին և Օգոստուին : Գարունքին նրանց խայթումը այնքան վասնդաւոր չէ, և Նրանց խայծուածների արկածները յետազայքն են, զօրանումէ մի ծակող ցաւ խայծուած տեղը, ասաքութիւն, կարմրութիւն և ուսոյց, յետով շուտով մկումէ ուռչել բոլոր խայծուած անդամը և ասքանապ. հիւանդը զգումէ՝ սրբանդութիւն, զլխի ցաւ, թուլութիւն, սրտի խառնուիլ, ցաւ սրտի դրդալի տակ, երբեմն երեսումէ անդամների դողդոջիւն և շնչառութեան դժուարութիւն : Երբեմն երեսում են ուշաթափութիւն և առատ քիրան : Այս ամէն արկածները ժամանակ առ ժամանակ մեղմանում են և սաստկանում : Եթէ օգնութիւն չհամնի, շուտով երեսում են զըգեթէ բոլոր մարմնի կծկումը, քիրան և սաստիկ թուլութիւն, վերջապէս չափազանց թուլութիւնից և բռնական ցնցիւնից հիւանդը կարող է մնանալ և առանց առանձին օգնականութեան հաղիւ է ասպրում երեք օրից ամելի : Եթէ կծում է կովածուծը, կծած տեղումը լինում են երկու կարմիր կէտ : Կարծի կծածից մնում է միայն մի կէտ, այլ փաղանդի կծելուց յետոյ կարելի է զտնել միշտ չորս կարմրագոյն կէտ : Ճարեգը այս դիալուածներում պիտի լինին յետազայքը՝ նախ՝ պէտք է օծանել խայծուած տեղը իւզով, կամ իւզով մոխրախառն, բայց լաւ ևս է վերոյիշեալ ցնդական սպելանիով (լետցայ մազ) և երկրորդ պէտք է աշխատել որքան կարելի է շատ քրանեցնել մարմինը, վասնորոյ լսու է նրանուցանել հիւանդը տաք ջրումը և յետոյ ծածկել նրան ջերմագոյն վերմակներով և տալ ըմպել քրանեցուցիչ դեղեր, զորօրինակ թանթրվենոց և Տիկիացի չայ : Եթէ արկածները զօրանում են, պէտք է քմիչկ հրափրել :

§ 12

Ա.Օ.Տ.Ն.Ի.Ն ԴԵՂՈՐԱՅ.Ք.Բ.Ը

Շամ անգամ յանկարծակի դիպուածների մէջ գեղում կամ քաղաքում մինք կրում ենք մի մեծ դժուարութիւն այն պատճառով միայն, որ մօտիկ դիպարան չէ լինում և մինչեւ գեղերի համելիք հնոի տեղից, ոյնութիւն տալու ժամանակը անց է կենաւմ, բայց մինք չդիմունք, թէ

մեր տանը կան այնպիսի զեղեր, որոնցով կարելի է բժշկել հիւանդութիւնը և նաև փրկել մարդու կեանքը : Ամէն տուն որքան որ պակասաւոր լինի, պատահած ժամանակը կարող է դառնալ դեղանոց, ինչու որ ամէն նիւթերը, որոնք որ գործ են ածուում կերակրի և ըմպելույ համար, կարեն գործածուիլ և դեղերի տեղ, վամնորոյ ևս պատշաճ ևմ համարում ծանօթացնել սցստեղ մեր հասարակութեանը երեկի գուժելանդի առաջական համար համար, որ շատ անդամ նաև կէս ժամը մնձ բան է կեանքը պահպանելու համար, կարողանանք գործ ածել փրկարար միջոցները այն բաներից, որոնք որ գտնուում են միշտ մեր աչքի առաջն, բայց մենք չենք ճանաչում, կարծելով՝ թէ ամենայն բժշկութիւնը անշուշտ պիտի դուրս գայ դեղանոցից :

Շաքարը : Սա ունի փոքր ինչ սննդարար դօրութիւն և այս պատճառով չէ թուլացնում ստամոքսը, շատ լաւ հովացնող ճարէ : Եթէ մարմնի տաքութեան ժամանակը մի ստաքան շաքարի ջուր խմն, նրանից լաւ գեղ չի լինիլ : Տեսդերում և առ հասարակ բրդքոքիչ ախտերում շաքարի ջուրը գեղեցիկ զովացուցիչ ճար է : Սաստիկ կրքերի ահի, վշտի և բարկութեան շարժուելոց յետոյ նոյն շաքարի ջուրը շատ օգտական է, ինչու որ նա այս դիալուածներում ոչ միայն հովացնումէ, այլ բժացընում է լիդոյ զրոյիչ բնութիւնը և օդնում է դուրս գնալ մարմնից : Շաքարը խառնելով ջերմացուցիչ նիւթերի հետ, պակացնումէ նրանց զրոյիչ բնութիւնը, զորօրինակ դահֆէն կամ չայն շաքարով սակաւ է զրոյում քան թէ անշաքար :

Բացի զավացուցիչ բնութիւնից շաքարը ունի և լուծողական զօրութիւն և այս պատճառով բլղամի կամ մաղասի հաւաքուելիս ստամոքսումը և կրծումը և յրտահարութեան ու չոր հազի ժամանակը շաքարի ջրից լաւ ոչինչ չկայ : Շաքարը մաքրում է ստամոքսը և աղիքները և թեթև լուծումէ, բայց չափազանց յաճախ և երկար զործածութիւնը աւելացնում է բլղամը ստամոքսումը, սևացնում է և փափուցնումէ ստամները :

Քացախը : Սա ևս շատ օգտական ճար է : Ամէն թունաւորութեան ժամանակը, երբ թունաւորին առաջ է գալի քնարեր թոյներից, ափիոնից, մոլախիմնդից, չնախաղողից (belladonna գեղեցիկ կին), ջրով քացախի ելիրառութիւնը և նրանով զլուխը և սրտի դրդալի տակը թրչելը օդնում է դեղթավի պէս : Ուշադնացութեան ժամանակը քացախը գեղեցիկ ճար է, երբ որ նրան մօտացնում են քթին և նրանով շփումեն քունքերը, երեսը, ձեռները և ուսները : Ամէն չարաչար տենդերի, հարինքների ժամանակը, երբ որ սենեկումը լինում է վատ հոտ, օգտական է սրակել յատակը քացախով կամ կախել քացախում թրչած երևարբիչներ . բայց չէ պարտ ցայտեղ նրան կրակի կամ արտաչել քարերի վրայ, ինչու որ

այս տեսակ կիրառութենից բարձրանում է մի վնասաբեր արտաշնչութիւն : Ամէն ջերմերում և արինհոսութիւններում փոքր ինչ խառնած ջուրը շաքարով կամ միղրով շատլաւ զովացուցիչ խմելիք է :

Սապոնը (օճառ), մոխրը և մոխրաջուրը : Այս ամէն նիւթերը մի և նոյն բնութիւն ունին, որ ստանում են իրանց մէջ էլած ալկալիան (մոխրի) աղից : Սրանց կիրառութիւնը օգտաւէտ է մինդեղով և սուլէմայով (միղիկ ցնդեալ) թիւնաւորութեան ժամանակը, բայց սրանց հետ ի միասին պիտք է շուտ չուտ խմեցնել թունաւորուածին կաթը : Այս ճարերը նոյնպէս օգտակար են քոսի և մորթոյ և այլ յամու խաղաւարտալից դիպուածներում, եթէ ցաւոտ տեղերը լուանան երկու անգամ օքը սապոնի ջրով կամ թոյլ մոխրաջրով :

Կաթը : Սա գերազանց ճար է ամէն տեսող թունաւորութեան ժամանակը : Հիւանդը պիտի խմի այնքան կաթը, մինչև փափէ և փորին մի և նոյն ժամանակում դնել թանձրաթան բժշկական կաթնից և հասարակ կամ վուշի ալիքից պատրաստուած :

Սերը, իւղը և ձէթը : Սերը և իւղը մեղմացնում են ցաւը, եթէ յատակ են և թարմ. բայց եթէ կծուած են կամ տղի, այն ժամանակ փոխանակ մեղմացնելու աւելի կրաստկացնեն ցաւը . կծուած իւղը մորթոյ վրայ այսպէս է ներգործում, որպէս խարանադեղը, և եթէ խմում են զրուում է սրափ խառնիլ և փսխումնի : Թարմ և անալի իւղը, սերը և ձէթը կարող են գործ ածովի ամէն կակլեցուցիչ սպեղանիքների տեղ, այն ամէն դիպուածներում, ուր որ հարկաւոր է մեղմացնել ներքին ցաւը, ջըղերի ձտուումը և մեղանանց կծուումը : Եթէ ցաւոտ տեղը երկար ժամանակ մերսեն ջերմ իւղով կամ ձէթով, յառաջ կուզայ նոյն բարերար ներգործութիւնը, որպիսի ստանում ենք թանկադիքներից :

Յիսագայ սպեղանին հիանալի ճար է ամէն այրեցածներում : Վեր առ յատակ ձէթը (ձիթապաղոյ, վուշի իւղ և այլն), ձուոյ սպիտակուցը և սերը հաւասարաչափ, այս ամէնը լաւ խառնիր ի միասին և յետոյ քսիր կտափ վերայ և դիր ամէն այրեցած տեղերին, փոխելով 6—8 անգամ օրը :

Թունաւորութեան ժամանակը ձէթը կամ կոյի իւղը տաք ջրով դառնում է մի զեղեցիկ զեղթափի : Սրանց կարելի է զործածել փոփոխակի կաթնի հետ, այսինքն՝ ամէն քառորդ ժամ կամ տասն րոպէ խմեցնել հիւանդին 2—3 դրգալ իւղ ջրով և ուրիշ տասն րոպէ կաթը, երբեմն իւղ, երբեմն կաթը :

Մեղուից, պիծակից և ուրիշ միջատներից խայծուած ժամանակն առանել յուսալի ճար չկայ, բայց միայն օժանի խայծուած տեղը մի քառորդ ժամ որ և իցէ իւղով. նաև օձի կծած ժամանակը մինչև ուրիշ օգնութիւն տալը, շատ օգտաւէտ է մերսել կծած տեղը տաք իւղով :

Պատշաճ համարիմ յիշել այստեղ և այն օգուտը, որ յառաջանում է

նոտպատակի ճարպի կիրառութենից, Այս դեղով կարելի է բժշկել ցըր-
տահարութիւնը կամ ցրտից տարած անդամները, եթէ առաւօտ և երե-
կոյ չվեն նրանով սառած տեղերը :

Վարսակը, գարին, ցորենի այլբերը, բրինձը և այլ խոշոր ազացած ար-
մբափքը : Արանցից որ և իցէ մինչից պատրաստումն խաշու, որ շատ օդ-
տակար դեղ է հաջի, որովայնալուծութեան, ցնցական փասման, կշտա-
ցաւութեան, ջղացաւութեան, ստամոքսի, միզարդելութեան, արինա-
խառն որովայնալուծութեան և այն, և այն : Այսպիսի խաչուն հրանդը
որչափ կարող է թնդ խմի, կարելի է փոքր ինչ չաքար խառնել : Այս
խոշուց շինում են նոյնպէս գրեթ :

Գրեխը : Գրեխը ամենեին անվեսս և շատ օդտակար տռանին դեղ է .
նաև ոչ երբեք կարող չէ վնասել և բերում է միջտ եթէ ոչ մի լիակա-
տոր բժշկութիւն, զննէ մի մեծ թեմնութիւն : Գրեխը առաւելապէս օդ-
տաւէտ է զրեթէ երեխանց ամէն ցաւերում, որոնք են . որովայնի կա-
պութիւնը, խիթքը, կծկումը, զլխացաւութիւնը, փոխումը և տենդը : Հա-
ստրակ դրեխը պատրաստուում է յետազայ եղանակով . երկու սեղանի
դրզալ վարսակ կամ դարիի և կամ կտուանատի սերմը եփումնեն և կամ
5 չայի թաս ջրի մէջ և սպազեցնելուց յետոյ խառնում են հետը 2 կամ
3 սեղանի դրզալ որ և իցէ ձէթ և երկու չոյի դրզալ հասարակ աղ, ե-
րեխանց համար այս նիւթերը վեր են տռնում կիսաչափ և փոխանակ
աղի, դորձ են ածում այնքան չաքար : Գրեխը ոչ շատ տաք պիտի լի-
նի, ոչ շատ ցուրտ, նաև սիստի ունենայ նոր կիթած կաթնի ջերմութեան
աստիճանը :

Յուրա և տաք ջուրը, երկոքին ևս լու ճարեր են, ցորս ջուրը օդ-
տակար է ամէն հարուածներում, եթէ ակդրից հարուած տեղի վերաց
դնեն ցուրտ ջրով թաց արտած բարձիկներ և նորոգեն նրանց ամէն ան-
դամ, երբ որ կտկին տաքանալ և չորանալ . այս պայմանով հեռանում
են արինհոսութիւնը, ուռոցքքը և հարուածների ուրիշ հետեանքները .
Տաք ջուրը դործածելով թէ նիւթերուստ և թէ արտաքուստ, դառնում է
մի լու դեղ ջղացաւութեան ընդդիմ : Տաք ջուրը և մանաւանդ եթէ նը-
րա մէջ թրմած են պատրինջ, անանուխ, թանթրվնուոյ կամ երիցուկի
ծաղիկները, օգնում է փորի և աղիքների ամէն տեսակ ջղացաւութեան,
խիթքին, մէջքի ցաւին, փախման և զլխացաւութեան :

Ոտի սաւազանը (ոօէւուա բառա) : Ոտները տաք ջրում դնելը օդտա-
կար է զլխացաւութեան, զլխի պատրոքին, ականչների ձայնին, կրծոյ
ձնչման և ցաւին, ստամոքսի կծկման, կշտացաւութեան, մէջքի ցաւին,
յրտահարութեան, դաշտանի արգելականութեան և նրա ցաւալի և դըմ-
ուոր հոտման : Ջուրը սոտի սաւազանի համար պիտի ունենայ նոր կրթած
կաթնի տաքաւութիւնը, մի փոքր աղ պիտի ձգուի մէջը . ուները պէտք է
ջուրը դնել մինչև սրունից թամբերը, պահել մի քառորդ ժամ և յետոյ

և յնույ որ և իցէ բրդեղէն շորերով սրբիլով, աշխատել չմըրսայնել . լաւ է պառկել անկողնի մէջ :

Կտուահատը և նրա ալիւրը : Այս ճարի գործածութիւնը օդտակար է այն ամէն դիպուածներումը, ուր որ հարկաւոր են լինում կակդացուցիչ բժշկական թանձրաթաները, զոր օրինակ տապացուցիչ ուռուցները ցըրւելու կամ հոսուցանելու և պալարների ցաւերը մեղմացնելու համար . նոյնպէս օգտաւէտ է նաև եղնգացսուռմ, ջղային կծկութիւններում և այլն : Թանձրաթանը կտուահատից կամ նրա ալիւրից պատրաստուռմ է այսպէս, կտուահատը կամ նորա ալիւրը մի քիչ թանձրվինուոյ ծաղկմների հետ ի միասին եփում են կաթնով կամ ջրով այնքան ժամանակ, մինչև դառնում է մի թանձր զանդուած, որ և շորի մէջ փաթաթելով տաք առաք դնում են ցաւոտ տեղերի վերայ :

Կտուահատից կարելի է նոյնպէս պատրաստել չոյ, որ շատ դիպուածներում օգտաւէտ է : Մի սեղանի դրգալ կտուահատի վերայ ածել չորս չափի թաս եռացած ջուր և թողուլ մինչեի ջուրը պաղի, յեատյ խառնել և քամել : Համի համար կարելի է խառնել փոքր ինչ լիմոնի հիմ : Այսպիսի չափն կարող է մեծ օգուտ բերել ջղային հապի, արեան թքման և լսէթ քի մէջ . բայց աւելի օգտաւէտ է երիկամանց ցաւի մէջ և միզարդելութեան համար :

Մանանեխը, վայրի բողկը և պղպեղը : Մանանեխից կազմում են ջըրով կամ քացախով խմարի նման զանգուած և բարակ շորում կամ թըլթում փաթաթելով՝ դնում են ցաւալի անդամների մերձակայ տեղերի վերայ . օգտաւէտ է սասափկ զլիացաւոթեան և ատամնացաւոթեան, զլիոյ պտոյտքին, ուշաղնացաւոթեան, ջղացաւոթեան, աենդի ժամանակը և այն : Եթէ մանանեխի մորթոյ վերայ երկար մնալոց առաջ եկաւ բորբոքումն կամ ցաւ, այն ժամանակ բորբոքուած տեղերին պէտք է քսել սեր կամ կարաղ իւղ : Քերած վայրի բողկը առաւել զօրել է քան թէ մանանեխը և դործ է ածուռմ մի և նոյն դիպուածներում, երբ որ հարկաւոր է շուտով ներզործել :

Պղպեղը օգտակար է ստամոքսը կաղղուրելու, զօրացնելու համար, բայց ոչ ջարգածը կամ աղացածը, որ չափազանց ջերմացուէիչ է : Եթէ մի քանի ամիս շարունակարար ամէն առաւօտ անօթի փորով կը լանեն 8—10 հատիկ պղպեղ, ստամոքսը չափ կորանայ, ախորժակը կրացուի, փորի վքուիլը կդադարի, մարտողութիւնը կհետանայ և մաղձը չի հաւաքուիլ փորումը :

Գինին և արաղը : Գինին շատ զօրացուցիչ և զուարթացուցիչ ճար է, նաև կարող է վիրականակնել մարդու զօրութիւնը մեծ թուլութեան, իսունչութեան, սրտաբեկութեան և ուշաղնացութեան ժամանակը : Երբ ջրարանձները, սառածները և խեղդուածները ուշքի եկան և կտրագացն կլանել, այն ժամանակ կարելի է նրանց բերաններն ածել վոքքը ինչ ուի-

նի : Օգտաւէտ է շփել երեխանց մարմինը գինով , եթէ երեսում են նըրանց վերայ խուլի ախտի նշանները և եթէ ուշ են սկսում ման գալ : Փոխանակ զինուոյ կարելի է զործածել արաղը մի և նոյն դիպուածներում , խառնելով նրան չորս մասն ջրի հետ :

Թանթրվենոյ և երիցլի ծաղիկները , անամուխը , թուրինջը և տուղտը : Ըանթրվենոյ չայն օգտակար է ցրտահարութենում և ցրտից առաջացած հաղում , երիցլի , թուրինջի և անամուխի չայն օգուտ է բերում մկանանց ցնցման ժամանակը , տամոքսի թուլութենում , կշտացաւութենում , թեթև ուշադնացութենում և այն : Տուգափ չայ խմելը և նրանով բերանը ողողելը շատ օգտակար է փողացաւութեան և հաղի մէջ , Այս ամէն ճարերից կարելի է նայնպէս պատրաստել բժշկական թանձրաթան և զործածել ջրային տեղական ցաւերում թշերի և լիտերքների ուռոցցներում , զանազան պալարնեւում , յօղուածացաւութենում և մըկանց կրկման ժամանակը :



ԶՐԱԲԺՇԿՈՒԹԻՒՆ*

1.) Խմելու ջրի լաւն ու վատն : 2.) Ջրի բժշկական զործածութիւնը առհասարակ : 3.) Լուացումն ցուրտ ջրով : 4.) Ցուրտ ջրով թրջած շորը : 5.) Մարմնի փաթաթելը թաց սաւանում : 6.) Արվածներ , ցայտումն : 7.) Վլասն ջուր ածելը և Տուշը : 8.) Գետում կամ ծովում լորսնալը : 9.) Գետում կամ ծովում լըզպանալու համար ընդհանուր կանոններ : 10) Տաք ջուրը և բաղանիքը : 11) Ջրաբժշկականութեան վրայ համառոտ ծանօթութիւն :

1.

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԼԱՒՆ ՈՒ ՎԱՏՆ

Երբ որ խրայէլացիքը Այն անապատից դնալով՝ բանակուեցան Յըռուափիղիմ և այն տեղ խմելու ջուր չպտան խրեանց համար , սկսան սաստիկ տրտնջել Մովսիսից ասելով՝ թէ ծարաւ կոտորելու համար հանեց նրանց Եղիպատոսից , և քիչ մնաց , որ քարկոծ անէիննրան , և մինչեւ մովսէս ջուր չհանեց քարից խր գաւազանով , խրայէլացւոց ժողովուրդը չըհանգուացաւ :

Խրայէլացիքը , այն , իրաւունք ունէին քարկոծ անել Մովսիսին , թէ որ նա ջուր չէր դտել նրանց համար . ինչու որ մարդի մի որ և իցէ տեղ բնակութեան առաջին պայմանը ջուրն է , և յիրափ առանց ջրի կա-

*) Հիдрոպաթիա , водолечenie.

րող չէ լինիլ ոչ մի մարդկացին զործ , առանց ջրի կարող չէ ապրիլ ոչ մարդը , ոչ անսառնը , առանց ջրի կարող չէ ծագել ոչ երկրագործութիւնը և ոչ մի ուրիշ տնտեղան վիճակ :

Օդի , լուսի և ջերմութեան հետ խմբավին ջուրը պատճառում է երկրի պաղաքերութիւնը և բուսերի կեանքը և աճելութիւնը : Ջրերի առատութիւնից և պակասութենից կախուած են նաև երկրի կլիման , նրա բարեխառնութիւնը և օդի խոնաւութեան տատիճանը :

Ջուրը նիւթերի կերպարանափոխութեան և հայելու զլխաւոր նիւթործողը լինելով բնութեան մէջ , հարկաւոր է որպէս մեր կաղմաւծքի , նոյնագէս և ամէն մարմինների համար , որոնք զոյանում երկրիս երեսին : Այս պատճառով մենք զանում ենք նրան ամէն տեղ , չոր փայտի , քարերի և ոսկորների մէջ , որոնցից կարելի է քամել , մզել նրան առանձին ջրաբաշխական մարմուկով : Մարդու մարմնի մէջ պարունակվում է 60 ֆունթից մինչև 80 ֆունթ ջուր : Ջուրը հալում է մեր մարմնի մէջ մննդարար նիւթերը , օգնում է մարմնամոյց հիւթերն վտխարկեւել արիւն և զուրս է հանում մարմնից անպիտան հեղանիսթերը , զունալով այս կերպով մեր կեանքի պահպանութեան առաջին պայմանը : Մեր մարմնի մէջ ջրի պակասութենից մենք զգում ենք ծարաւ , որ կարող ենք կտրել համարեամ թէ միայն ջրով :

Բայց որ ջուրը պիտանի լինի մարմնի պահպանութեան համար , նու չպիտի պարունակէ իւր մէջ վեասակար նիւթեր . զոր օրինակ , կենդանիների կոմ բուսերի վասած մասունքներ , զանազան աղտեղութիւններ և այլն : Այլև չպիտի լինի նոյնագէս ամննեին առանց խառնուրդների , զըտած , քաշած ջրի երկար և առատ զործածութիւնը սովորաբար պատճառում է վտխումն , որովայնի խեթք և ուրիշ խանդարմունքներ : Ջրի զովացուցիչ յաւակութիւնը և ախսործ համը կախուած են իւր ածխացին կազից , մժնուրդական օդից և աղերից : Աղբիւրի և ջրհորի լաւ , կակուզ ջուրը ամէն ուրիշ ջրերից աելի է պարունակում այս հեղանիսթերը , վասն որոյ ամէն տեղ , ուր որ միայն կարելի է , ուէտք է զործածել իւրմելու համար աղբիւրի կամ ջրհորի լաւ ջուր : Մենք խառնում ենք անձրեի , գետի , առուակների և ճնակների ջրերը : Նստորդները երբեմն հարկադրուում են զործ ածել ծալային զտած ջուր : Բայց Աստուած աղատէ մեղ այսպիտի յետին կարօտութենից :

Ըմագլու հսմար անտարակոյս լաւագոյն համարելի է աղբերային ջուրը , ըստ որում նա յստակ է , ցուրտ է և առատութեամբ ունի զովացուցիչ կազերը , մանսաւանդ ածխացինը : Աղբերային ջրից յետոց նախադասելի է ջրհորային ջուրը , թէ կամ մի քանի տեղերում , զոր օրինակ , կաւախառն կրաւոր , զածային կամ կայինային հողումը նա կարող է պարունակել իւր մէջ հողախառն , զժուարամարսելի աղեր երեք կամ վեց անդամ առատել քանի թէ աղբիւրի ջուրը : Գետերը և հեղեղաւաները , մա-

նառանդ որպէս սրբնթաց վազում են պինդ, քարտա երկրի վերայ, ունին շատ քիչ հողախառն աղեր և այս պատճառով նրանց ջրերը նոյն-պէս լաւ են խմելու համար : Ընդհակառակն ջուրն անպիտան է խմելու հստար, երբ գետի յառակը և նրա ափները կաւուտ են, սիկաւէտ կամ ճախճախուտ, և առհասարակ գետի ջուրը կարող չէ փոխարինել բոլորովին աղբերային կամ ջրհորային ջուրը, ինչու որ նա զնալով կորուսանում է իւր զովարար կազերը, ամառը լինում է շատ ջերմ և ձմեռը շատ ցուրտ :

Գետի ջրի հետ զրեթէ անբաժան են լիլը (սիկ), և ցեխը, մանաւանդ անձրից յետոց և ջրերի յորդութեան ժամանակը : Արեադուրծի կողմնբում այսպիսի խոռոչուրդները այնչափ առատ են, որ գետի ջուրը դառնում է ամեննեին անպիտան ըմպելու համար : Գետերը համարեամ թէ ամէն տեղ ընդունում են քաղաքոյին աղտևողութիւնները, վասն որոյ շատ անգամ մնուք տեսնում ենք նրանց մէջ փտած զործարանաւոր (կենդանական կամ բուռական) նիվթեր : Ուրեմն այսպիսի ջրի զործածութիւնը հեշտութեամբ կարող է յառաջ բերել զանազան խանդականքներ, առամոքսում և մարմնի ուրիշ մասներում, նոյնպէս երեելի փոփոխութիւններ արինի մէջ, որոնք և պատճառում են երբեմն զանազան վտանգաւոր հիւանդութիւններ :

Ջուրը երկու տեսակ է բնութեան մէջ՝ քաղցր և աղի : Առաջինը բաժանում են կակուղ և կարծր կակուղ ջուրը, որ է առողջարար ըմպելիք, շատ սակաւ է պարունակում իւր մէջ օտարուի մասոնքներ, աղեր, զած և այլն : Բայց ընդհակառակն կարծր ջրի մէջ այս նիվթերը առատ են, վասն որոյ նա այնքան օդուտէտ չէ ոչ առողջութեան համար և ոչ անտեսական և արհեստական նպատակների :

Խորին և յստակ աղբիւրների, նոյնպէս մի քանի մնամնեծ դետերի, լճերի և ջրհորների ջրերը լինում են ըստ մեծի մասին կակուղ : Քաղաքներում շատ ջրհորներ ունին կարծր ջուր : Ամենակարծր ջուրը կարելի է համարել ծովայինը, և ամենակակուղը՝ զոածը, անջրեայինը :

Կակուղ ջուրը աւելի յարմար է առանին կիրառութեան համար, մանաւանդ խմելու . բայց եթէ ամեննեին զուրկ է աղերից, զոր օրինակ, զոած և անձրեի կամ ձիւնի ջուրը, այն ժամանակ լինում է անհամ և կարծր ջրի պէս ծանրացնում է սատանքուր : Բայց անձրեային ջուրը աւելի անվնաս է քան թէ չափազանց կարծր ջրհորայինը : Կակուղ ջուրը ախորժ է երեսում նաև անտառներին :

Չափազանց կարծր ջրի վեստը դժուար է սահմանել հաստատաւոր, ինչու որ այս մասին շատ բան կախուած է մարդի մարմնի կազմաւածից և նորա ստամոքսի զօրութիւնից : Ումանք կարծր ջրի զործածութենից չեն զզում ոչինչ վաստ հետեանքներ, բայց շտաբերին նրա եր-

կար իլուսութիւնը պատճառում է վախումն, վարի լավք և որովայնալութիւն :

Չատ անգամ ոչ միայն բժշկականութեան անտեղնակ մարդիկ, այլ և նոյն բժիշկները բազում հիւանդութիւնների պատճառը համարումն միմիայն անալիտան ջրի գործածութիւնը : Թէպէտ անկարելի է բոլորովին միրժել այս կարծիքը, բայց սրարոտ է դիտել, որ այս մասին չատ անգամ չոփազանց աւելացնում են վատ ջրի վեստակար ներդորդութիւնը : Անալիտան ջուրը զրեթէ չէ կարող լինիլ սաւտիկ հիւանդութիւնների արինախան որովայնալուծութեան, խոյերաշի, անդերի և այլն՝ միմիայն պատճառ, եթէ վան ուրիշ վեստակար հանգամանքներ, որոնք յաջողում են այս տեսակ ցաւերի ծագմանը : Բայց չատ անգամ պատճառում է, որ ջուրը պարունակում է աներկրայ վեստակար և նաև թիւնաւոր նիւթեր, զոր օրինակ, արձիճ, պղինձ, ծծմբախուն մետաղներ և նաև մկնդեղ : Այսպիսի ջրերը լինում են հանքերի և զանազան դորձարանների մօսիկ տեղերում : Այս պատճառով հարկ է միշտ զպուշտ այնպիսի ջրերից, որոնց մէջ խառնուում են գործարանների ջրանցքերը :

Ջուրը առաւել յաճախ ստանում է վատ յատկութիւններ, վատած դորձարաննաւոր, մանաւանդ կիւնդանական նիւթերի խառնուրդից, որոնք կարող են յառաջ բերել անսարակոյս ամելի վեստակար հետեանքներ, քան թէ ամնհակարծք ջրի առէն հողախառն աղերը :

Չոփազանց վեստ է արուեստական լճակների, փոքրիկ ծովակների, ջրանցքների, վասերի ցիտոտ, պղոտոր ջուրը և Այսպիսի ջուրը միշտ ստատ է անհամ աղերով, բորսկով, անուշաղրով, միջատներով, որունքներով և ամէն աւեսակ զործարաննաւոր նիւթերով, մանաւանդ երբ որ նրա հետ խառնուում է լուսարանաց, վասերի, արտաքնոցների, խողովակների և փողոցների ջուրը :

Վատ ջրի մնասակար ներդորդութենից հեռանալու հումար պէտք է որչափ կարելի է զործ ածել միայն յատակ և զով ջուրը . որ ոչ չափանց կակուղէ և ոչ չատ կարծք, նա պիտի լինի ցուրտ, բայց ոչ պաղ, ինչու որ չատ ցուրտ ջուրը խիլով մարմինի սեպհական ասաքութեան մասը, կարող է պատճառել ցրտանարութիւն և նորա վեստարեր և վըտանդաւոր հետեանքները, մանաւանդ մարմինի ջերմանալից յատոյ, Առհասարակ հարկ չէ ըմպել ոչ աւելի չուտով, ոչ խիտս չատ և միանգամ :

Այն տեղերում, ուր որ չկայ լաւ աղբերային, ջրհորային կամ զետի ջուր, կարելի է զործ ածել անձրեային ջուրը, կամ աշխատիկ մաքրել վատ ջուրը քամելավ, եռացուցանելով, կամ խառնելով նորա մէջ միմոնի հիւթ, մրգիղէն, քաղցրաւենիք, նուան հիւթ և այլն :

Չատ անգամ ջուրը թուում է միզ լաւական յատակ և զով, մինչ նրա մէջ կան բազում անախորժ և վեստակար աղեր, Այսպիսի ջուրը

հեշտութեամբ կարելի է ճանաչել. եթէ թողնենք նրան առ ժամանակ բերանը լաւ խցկած բոտիկումը, նրա մէջ կտեսնինք նստածք, մրուրներ մի և նոյն երեսյթը կարելի է նկատել, եթէ եռացացանենք նրան կամ խառնենք նրա մէջ վուրք ինչ լուծեալ կալաքար կամ պաղլեղ. այսպիսի ջուրը բոլորովին չէ կարողանում հայել սապանը, և սիստը չէ եփուում նրա մէջ: Զրի վատ հոտը և զրուելի համը յառաջ է դայի մեռած մանրադիտական որդունքների և փառած զործարանաւոր նիւթերի ներկայութենից նրա մէջ:

Ամէն վերոյիշեալ խօսքերից երեսում է, որ լու ջուրը սփափի ունենայ յետագայ յատկութիւնները. նա պափի մնայ միշտ յառակ, ինչպէս վանակն, նաև երբ որ երկար թողնում ենք ամանի մէջ, չպիսի ունենայ ոչինչ հոտ և օտարութի համ և չպիսի յառաջ բերէ նստուածք նաև եռացացաներու ժամանակը: Աթէ ջուրը ունի այս պայմանները, այն ժամանակ կարելի է անելի՛յիւռ գործ ածել նրան, թէ առանին հարկաւորութեան և թէ արուեստական նպատակների համար:

¶.

ԶՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՌՀԱՍՏՐԱԿ

Զրի օգուարը որպէս առողջութիւնը պահպանելու, նոյնպէս և ցաւերը բժշկելու համար յայտնի էր հին ժամանակը: Արենելեան աղգերի օրէ-նոզիրքը և կրօնի հիմնաղիրքը ջրի զանազան տեսակ գործածուիլը համարում էին հաւասար մասը: Ցատակութիւնը և հոգացողութիւնը մտրդի առողջութեան, զօրութեան և գեղեցկութեան վրայ ամէն ժամանակ էլել է ժողովրդի մարմնական և հոգեկան բարերազդութեան առաջն պայմանը և Արարիչը յարգելու նշանը:

Մավկէս մարդարէն հրամայեց բորսաներին շուտ շուտ լուացուիլ ցուրտ ջրով, Եղիսէն բժշկեց Ասորւց զօրապետ Նեկմանի բորսութիւնը, պատուիրելով նրան եօթն անդամ լուացուիլ Յորդանան գետի մէջ: Ակնթացիք և Մարք գործ էին ածում ցուրտ ջուրը իրեն մի զօրացուցիչ և նախապաշտպան ձար: Յոյնք և Ապարտացիք օրէնքի զօրութեանք պարտաւոր էին լողանալ ցուրտ ջրի մէջ:

Հռովմում մինչև ի 535 թուականը ջուրն էր զիզլցաւերի ընդդէմ և արժանի է ուշաղրտթեան, որ Հռովմայեցիք մինչև այն ժամանակ միայն կարողացան պահպանել իւրեանց մարմնի զօրութիւնը և հոգւոյ միծութիւնը: Ամէն օր լողանան Հռովմայեցոց համար՝ էր առաջն հարկաւոր բանը, և այն առաջը, որ որ չկային զեղեցիկ լողարաններ և աւաղօններ, համարուում էր անցարմար բնակութեան համար:

Ցունաց, Հռովմայեցւոց և Արաբացւոց թժիշկները՝ Հիոյոկրատէսը, Ասկղերիատէսը, Հալլինոսը, Ավիտիննան և ուրիշները յաճախ դործ էին ածում ջուրը թէ ներքին և թէ արտաքին ցաւերի ընդդէմ։

Զ. Դարի վնարչամը Արաբացւոց օրէնազիր Մոհամմէտը՝ դիտելով աներկրայ մաքրութեան օգուար առողջութեան համար, Մովկէսին հետեւելով, հրամացեց իւր հևտեողներին սահակ սահակ լուացակիցուրտ ջրով։

Բայց միջին անբաղդ դարերումը, երբ որ լուատորութեան ճառադայիթը քիչ մնաց որ ամենեին շիջանէր, ցուրտ ջրի դործածութիւնը համարեա թէ բոլորովին մոռացուեցաւ, թիւր և անհինն դատողութիւն անելով ջրի ներդործութեան վերայ, սկսան զանազան հիւանդութիւնների պատճառու համարեա նրան, Երկար ժամանակ մերժում էին նրան թէ հաստարակութիւնը և թէ թժշները և միայն ներկայ դարում գրեթենբերզի Պրիանից անուն շնուականը, Աւստրիոյ Ալլիվայում վերականդնից կրկին նրա բոլոր հին փառքը, ապացուցանելով անթիւ փորձերով Ջրի գործածութեան կարերութիւնը զոնազան ցաւերի դէմ։

Անմ բնչ կերպով գտաւ Պրիանիցը ջրաբժկութիւնը (Γιαδրոνατία, Յօδօլενցεնի)։ 1820 թուականում խոտ հնձելու ժամանակին, Պրիանիցը սացից վայր ընկաւ, ձիու քացին դիմու առաջի ակները վըրան սաց կենարով՝ կողերը ջարդեցին, թժշները վճռեցին, որ հիւանդը վանագաւոր զրութեան մէջ է և կմնայ միշտ խեղ, սախատած, Պրիանիցը տեսնելով որ թժիշկներից և վիրաբուժներից թժշկութեան յոյս չկայ, սկսաւ գործ ածել ցուրտ ջուրը արտաքուատ և ներքուատ, այսինքն՝ խմել, լողանալ, որով փոքր միջոցում ամենեին թժշկուեցաւ, Նրա բըժը չկութեան համբաւը տարածուեցաւ շուտով շրջակայ կողմերում և ամէն տեղից ծանր անբժշկելի ցաւերով հիւանդները սկսան հաւաքով Պրիանիցի մօտ և շատերը ստանում էին կատարեալ առողջութիւն։ Ջրի բարերար ներդործութիւնը սկսան հասկանալ որպէս թժիշկները, նոյնպէս և հաստարակութիւնը։ Շինուեցան հիւանդանոցներ, հաստատուեցան ընկերութիւններ, երեւեցան բազմաթիւ շարադրութիւններ ջրի օդափ մասն և վերջումը ամէնքը համոզուեցան, որ ցուցա ջրի գործածութիւնից կարելի է քաղել մեծամեծ օգուաներ առողջութեան համար։ Շատ ուղիղ ասաց մի երեւելի գաղղիացի թժիշկ իւր վերջին շունչը ապաւ ժամանակը, «Ես թողում եմ ձեզ ինձանից յետոյ երկու մեծ թժշներ՝ փահեցզը և ջուրը»։

Բայց զժբարդաբար ջրի ընդհանուր գործ ածութեան կատարեալ յաջողութիւնը արգելում են նաև մինչև այժմ հին թժշկական դպրոցների նախապաշարմունքները, որոնց հևտեողները սովորուած լինելով զեղերին, հրաժարուում են այն ամէն միջոցներից, որոնց հետ նրանք ընտելացած չեն։ Չունենալով մի անկախ հայեացք, նրանք ուրիշների կարծիքների ստրուկ են միշտ և հին սովորութեան դերի, վեր ի վերոյ դա-

տելով ամէն բահի վրայ, նրանք աչքի տակն ունին միմյացն ջրի առաջին ներգործութիւնը, այսինքն՝ մարմնից ցրտութիւնը, և ընդդիմանում են նրա դործածութեան, համարերով նրան մի այնալիսի միջոց, որն արկարող է յառաջ բերել ցրտահարութիւն։ Նրանց այս սիսալ կարծիքը դուրս է դաշի այն հանգամանքից, որ նրանք չեն կարողանում որոշել յանկարծ և կարձատեն ներգործող ցրտութիւնը երկարատեղ ցրտութեան ներկործութիւնից։ Առաջինից մենք ոչ երբեք կարող չենք ցրտահարութիւնից բացարեմ պատճուռը։ Մեր երակները սկսանելով սրտից, ինչպէս ծառի մի բուն ցրուռում են իրանց ոստիքը մարմնի բոլոր համերամբ։ Սրտի շարժմանքների կամ զարկերի ժամանակը արինը թափուռում է երակների մէջ, որոնք աանում են, չըջեցնում նրան տմէն տեղ մարմնի զանազան մասուն քները մնոցանելու համար։ Վասն որոյ այս երակները կոչուում են արինաչուրջ ամսաներ կսմ անօթներ։ Այս անօթները սրչափ առաւել մօտ են սրտին, այնչափ առաւել լայն են, և ընդհակառակն, նրանք այնչափ առաւել նեղ են, որչափ առաւել մօտանում են մարմնի երակին, այնպէս, որ մորթուումը արինաչուրջ անօթներ շատ բարակ են և այս պատճառով պարունակում են համեմատաբար աւելի սակաւ արին քան թէ այն անօթները, որոնք գտանուում են մարմնի ներառաւմը, երբ որ ճնշումը կամ ցուրաը ներգործում է մարմնի երեսի վերայ, այն ժամանակ արինը վաղում է դէսի ներքին գարծարանները, մանաւանդ ցուրա ջրի ներգործութեան ժամանակ, որից բարակ անօթները սեղմուում են և այս կերպով քշում են արինը դէսի առաւել հաստ անօթները։ Այս պատճառով մենք տեսնում ենք միշտ, որ երբ ձեռները կամ սոնները դնում ենք ցուրա ջրի մէջ, նրանք տժգունանում են իսկոյն արինը նրանցից հեռանալից և կնճովում են անօթների սեղմուելից, բայց երբ որ մարմնը ընկել չէ երկարատեղ ցրտի տակ, որ պահպանում է արեան անդադար զանումն անօթների բարակ մասներից դէսի հաստ մասները, այն ժամանակ սրտի շարժմանքների և նոյն արեան սաստիկ ընդհարման պատճառով հաստ անօթների մէջ, արինը ցրտի հեռանաւուց յետոյ շուտով յետ է դառնում կրկին դէսի բարակ անօթները։ Արեան սրբնիւաց յետ պայտուց մարմնը տաքանուում է, կարմրում է, մանաւանդ այն ժամանակ, եթէ մարդ սկսում է ման դալ կամ ուրիշ տեսակ շարժողութիւն անել։

Մարմնի այս սաստիկ ճիրն ստունալը ու խր բնական վիճակը և յարուցանելը դործարանների մէջ նրանց պաշտօնի ուղիղ կասարումը՝ կոչուում է ընդդիմամարտութիւն կամ ընդդիմադործութիւն։

Ամէն այս երմոյթները, այսինքն՝ արեան սրբնիւաց դալն ու դընալը զրուռում են մարմնի դործունէութիւնը, թեթեացնում են արինացրջութիւնը և պնդացնում են կաշին։

Այս կերպով պարզ երեսում է, որ ցրտի կամ ցուրա ջրի կարձատե-

Ներդործութիւնից մարմինը պաղում է միայն մի շատ կարճ ժամանակ և ընդհակառակն շուտով տաքանում է մարմինի ընզիմանարտութիւնից և կենդանացած արինաշրջութիւնից , Ուրեմն կարելի է հաստատ ասել , որ ցուրտ ջրի կարճատե ներգործութիւնից մրսելը կամ ցրտահարութիւնը մի անկարելի բան է :

Ուրիշ բան է , երբ որ ցուրտը կտո՞մ ցուրտ ջուրը ներդործում է մարմնի վիրայ երկար ժամանակ :

Այս դիպաւածումը արինը անդսդար յետ է քշուում դեպի ներքին ներդործարանները և անշարժ մնում է նրանց մէջ երկար միջոց , ուստի և արինաշրջութիւնը յետաձգուում է : Այս պատճառով երբամն յառաջ են գալի ցրտահարութեան զանազան հիւմնդութիւններ :

Նոյնպէս ներդործութիւնը , թէ կարճատե , վեասակար լինում է ներքին անզգոյշ գործածութեան ժամանակը , Այս կերպով մինչ կարող ենք հեշտութեամբ ցրտահարուիլ , եթէ մարմինի տաքանալուց յետոյ շարժմունքներով կտո՞մ տաք տաք կերակուրով , իմենք պազ ջուր կամ ուրիշ ցուրտ ընալիլիք : Սրա պատճառը այն է , որ բերանի և սատամոքսի լորձիւնութաղանիթը ունի աւելի թոյլ կազմութիւն , քան թէ մորթին , վասնորոյ տաքութիւնից յետոյ երբամն չէ կարողանում դիմանալ ցրախն :

Ամեն վերոյիշեալ խօսքերից կարելի է հանել այս կանոնը , թէ ցրտի ներքին գործածութիւնը , մարմինը տաքացած ժամանակը վեաս է , բայց արտաքին գործածութիւնը շատ օգտակար է : Այս կանոնը հարկաւոր է մաքումը պահել ցուրտ ջրի օգուտը և նրանից կախուած զանազան երեսյթները հասկանալու համար :

Հաստատելով ջրի արտաքին գործածութեան անվեասակարութիւնը , ցոյց տամք այժմ այն օգուտը , որ կարելի է քաղել որպես ցուրտ , նոյնպէս և տաք ջրից , թէ առողջութիւնը պահպանելու և թէ ցաւերը բժշկելու համար :

5

ԼՈՒԱՑՈՒՄՆ ՑՈՒՐՏ ԶԲՈՎՎ.

Ո՞ւ որ կտմնումէ պահպանել իւր առողջութիւնը , դօրութիւնը ու գեղեցկութիւնը , ամեն օր սիստի լուանայ բոլոր մարմինը , կոմ գոնեան նրա մեծ մասը , ցուրտ ջրով և յետոյ պինդ որբել մարմինը ցամաք պաստառով ինչու որ այս մեքենանական զրդուումն ևս կարող է զարդուցանել կեանքը և զուարթացնել մարմինի մորթն : Ցուրտ ջրով լուացաւելից յետոյ մարդ զդումէ դիւրութիւն , զուարթութիւն , աշխուժութիւն և կարողանումէ աւելի հեշտութեամբ դիմանալ տաքութեան , քրաղնաքին , աշխատանքին և կեանքի զանազան անցարմարութիւններին , թշ-

սացման երկուր գործածութիւնը պնդացնում է կաշին, բթացնում է նրա պրտահարութեան ընդունակութիւնը և այս կերպով շատ անգամ նախառ պահպանում է մեղ արտաքին վեասարեր պատճառներից և երկրպալի հիւանդանիւններից :

Ի հարկէ շատ բի համար . եթէ սկզբից գործ են ածում բաւական ցործ ջուր, անախարժ է ցրափ առաջին տպաւրութիւնը, նրանք դոզում են և օկտումբեն հնալ, չունչը կրկ՛սում է, բայց շուառվ այս արկածները ոչընչանում են և մի քանի օրուան մէջ սովորելով ցուրտ ջրին, նրանք ոչ միայն չեն նկատում ոչինչ անուշոր դպացողութիւնք, այլև ընդ հակառակն զգում են բաւականութիւն և զուարթութիւն :

Բայց զգացող մարդկանց համար լաւ է սովորի ցուրտ ջրին փոքր առ փոքր, առաջ առաջ լուացուիլ սակաւ ինչ տաք ջրով, վրա երկրորդ օրը սակաւ ինչ ցուրտ և ապա աստիճան առ աստիճան անցանել դեպի սուսուել ցուրտ ջուրը :

Պէտք է լուացուիլ վագ առառօտեան՝ խալոյն անկողից վեր կլնալից յիսոյ, քանի որ մարմինը չէ հովացել, Առաւել հարկաւոր է լուանալ սերական մաղամեները և այն տեղերը, որոնք աւելի քրանում են սաները, անութները (թեի տակը), կուրծքը և իրանաց քունջը : Ամանց համար անուանելի է զլուխը ցուրտ ջրով լուանալը, այնպիսիքը թնդ զլինելին ցուրտ ջուր չունեն :

Զրի գործածութիւնը այս ձեռվ, ինչպէս որ մենք այս տեղ սոսորադրեցինք, օտակար է ամէն հասակի մարդկանց համար : Շատ բժշկներ արգելում են ծերերին և երեխաներին լուացումն ցուրտ ջրով, հիմնելով խրեանց կարծիքը այն հսկողամանքի վրա, թէ ավելոր մարդկանց և երեխանց մորթոյ տաքութիւնը սակաւ է և որա համար պէտք չէ նրանց մարմինը ձգել ցրափ տակ, որով չերմութիւնը տևելի, և էպակառի :

Բայց տաքութիւնը պակասում է ցրսի երկար ներզործութիւնից, երբ որ երեխայքը կամ արևորքը երկար ժամանակ լողանաւմ է զետումը : Այլ եթէ ջրի տաքութիւնն աստիճանը համեմատ է լողանողի զգացութիւնը, այն ժամանակ կրցուում է մարմինի մորթոյ ներզործական կարողութիւնը և մարմինը չուտով տաքանում է, մանաւանդ եթէ լըտացուելից յատոյ չի ում էն նրան չոր ու ցամաք կտաւով : Շատ սլատիկ երախանցը, մինչի երեք ամսական հասակը կարելի է լուանալ միայն տաք ջրով : Բայց երեք ամսից յատոյ, երբ որ նրանց մարմինը կանդանայ և աւելի չայցնի կերեւի նրանց բնական, կուշանական ջերմութիւնը, այն ժամանակ կարելի է աներկեւզ սովորեցնել երեխին ոչ թէ ցուրտ՝ այլ միայն հով ջրի : Բայց ի հարկէ սակաւ սուսական հատակում կարելի է լուանալ նրան բաւական ցուրտ ջր վ և լոգացնել դիտի մէջ :

Թըթախանական արեան համան, որպէս և զաշտանի ժաման ակը

հարկ չել լուանակ ցուրտ ջրով այն տեղիրը , ուստի հասում է արինը , ինչու որ ցրտի ներգործութիւնից ալիսնահասաթիւնը կարող է դադարիլ . Այս դժագաւածներում աւելի յարմար է լուացուիլ սակաւինչ տաք ջրով .

Ցուրտ ջրով լուացման նպաստակն է սիւդացնել մարմինի կաշին և տառել նրան ընդունակ ընդդիմական ջրով արտաքին մասաւակար ներգործութիւնից : Այս բարեկար նպաստակին օգնելու համար հարկաւոր է տարրայ և զանակներ համեմատ հազնիլ չորեկը , բայց որդափ հնար է վախուիլ չառ առաք հազուալից և չվագիկացուցանել մարմնը , Այսափ տուամել սովորում ենք մնաք որի ներգործութեան այնչափ սակաւ վը վնասաւակար ներգործութիւն ունի նա մեզ չը բայ :

Ցուրտ ջուրը ոչ թէ միայն նախառահանդանումէ ցրտահրդութեան հիւանդութիւննելըց , այլն աղաւումէ բազում ախտերից : Ցուրտ ջրով լուացուելից բարդոյն ճար չկաց մնացած հազի , խարբուխի յօդուածայւութեան , կամանց սպիտակի հիւթոյ , որովացնապիշութիւնն , ախտրժուի խանդարման , սրտի խառնուելու , զիւի սրտացաքի , քորի և որիշ բազում ցուերի համար : Այս ամէն դիպուածներում ջուրը ներգործում է ջղերի վերայ , զրդուելով և զարթուցանելով նրանց զօրութիւնը : Աւրեմն այս ցաւերումը աւելի օգտակար է լուանակ միշտ մէջքը , ըստ որում ամէն շարժադական ջղերը զուրս են գալի մէջքի ուղելից , որ պարունակուումէ սոնաշարումը : Հաղի ժամանակը հարկաւոր է լուսնալ աւելի մէջքը և կուրծը : Որովացնի կալուածում պիշտք է ուղել ջրի հոսանքը մէջքի և մօնաւանդ ողնաշարի ստորին ծայրի վերայ : Այս դիպուածներում օգտակար է նոյնակն ընձել առաւոտ առուած անօթի մի կամերկու բաժակ ցուրտ ջուր , մի փոքր շաքար խառնած համի համար : Բայց հարկաւոր է նոյնակն ման դաշ յաճախ բաց օրի մէջ և հեռանակ դժուարա նորուի կերակրից : Մի և նոյն խորհուրդը ոլիտք է տաղ և ախորժակի խանդարման , սրտի խառնելու և զիւի սրտացաքի դիպուածներում :

Գօդուածայցաւութեան դիպուածում փաթաթելը թաց գենջակիներով և յետոյ ցամաքք բրդեղէն թաշլինակներով օգտակարագոյն է ջլի ուրիշ տեսակ զործածութենից :

Մորթոյ մարմաջի , քորի դիպուածում օգտակար է լուանակ մարմինը սապօնի ջրով :

Լուացման նման թէ առողջութիւնը պահպանելու մասին և թէ դաւերը բժշկելու համար , ներգործում են ցուրտ ջրով թթած շրբերը . (Խօհօծուառ որսառու) փաթաթելը թաց սուաններավ կամ երևարքիներով , սրտելը , ջուր թափելը վրան , մարմին առողելն (առ չը) և լողանակը զետում և ծովում :

Ջրի դործածութեան ամէն այս տեսակները դանաշանուում են միայն

սաստիկ կամ թեթև ներգործութեամբ և ամէն մարդ սպիտի ընտրի իսր համար այն տեսակը, որը որ աւելի կարող է տանել:

Այս տեսակներից շատերի վրա մենք կխօսինք համառօտ, թող-նելով մանրամասնաբար և ընդարձակ ճառելը բժշկաբանին, ուր որ ըստորագրելու ենք այն հիւանդութիւնները, որոնց ընդդեմ զործ են ածում ջրաբժիկութեան դանաղան եղանակները :

4.

ՑՈՒՐՑ ԶԲՈՎ ԹԻՋԱԾ ՇՈՐԸ

(Холодные примочки).

Անձեռոցիկները, երեարբիչները կամ քաթանի կտորտանքները թրջում են և մարմինի վիրայ զնելով նրանց պահում են մինչև որ սկսին տաքանալ և ասպա կրկին թրջում են և կրկին ցուրտ ցուրտ դնում են մարմինի վիրա: Գործ են ածում նրանց առ հասարակ տապացուցիչ կամ բորբոքիչ ախտերի ընդդեմ, անտանեի ջերմութիւնը զովացուցանելու համար, հաւասարապէս մարմինի վնասների, ցրտից տարած անդամների (օզնօբա) թեթև այրածի, սուր յօդուածացաւութեան, զլխացաւութեան, արիւնահոսութեան և ուրիշ շատ հիւանդութիւնների ընդդեմ:

5.

ՄԱՐՄԵԼ ՓԱԹԱԹԵԼԸ ԹԱՅ ՍԱԼԱՆՈՒՄ

Այս եղանակը գործ է ածուում շատ տենդերի ընդդեմ, և յաւէտ օգտակար է երկարատև, հնացած հիւանդութիւնների, յօդուածացաւութեան, շնչարգելութեան և սրանց նմանների դիպուածներում: Փաթաթում են կամ բոլոր մարմինը սքարանոցից մինչեի ոտների պճեղները, կամ միմիայն ախտացած անդամը:

Արա համար վիր են առնում մի ստան (քարտա), կամ մի երեսսըրբիչ, թրջում են ցուրտ ջրումը և քամում, յետոյ փաթաթում են նրա մէջ հիւանդի բոլոր մարմինը, կամ նրա ցաւադար անդամը և ծածկում են նրան բրդեղէն վերմակներով: Հիւանդը պարկած մնում է կէս ժամոց մինչեի երկու ժամ քրանքի մէջ, որ շուառով երեսում է: Յետոյ հիւանդը նստում է ցուրտ ջրով լի տաղանի մէջ մի քանի միայն մաններկրորդ։ Փոխանակ աւաղանի կարելի է լուանալ մարմինը կամ հիւանդ մասը ցուրտ ջրով կամ շփել թաց անձեռոցիկներով, թրջած ամսով և այլն: Աթէ

փաթաթում են միայն թրջած երեսորբիչով մարմնի մի որ և իցէ մաս-
ուր, այն ժամանակ հարկաւոր չէ փաթաթել հիւանդին թաց սաւանու-
մը, կամ նստեցնել նրան տապանի մէջ և կամ բոլոր մարմննը լուսա-
դար անդամի համար :

6.

ՄՐՄԿՈՒՄՆ ։ ՑԱՅՏՈՒՄՆ

Երեսը, ծործրակը (վիզը) ցայտում են ցուրտ ջրով սաստիկ և ա-
նակընկալ սոպաւորութիւն անելու համար ջղերի գործունէութեան և
արինաշրջութեան վրայ, որպէս ուշաթափութեան, քնափութեան և
ուրիշ սրանց նման դիպաւածներում :

7.

ՎՐԱՆ ԶՈՒՐ ԱՆԵԼԸ ԵՒ ՄԱՐՄՆԻ ԱՌՈԴԱՆԵԼԸ
(առւշը, ծցաս)

Զուր ածելը վրան և առողանելը կամ տուշը պատկանում են ջրի
գործածութեան առաւել հզօր եղանակներին, վասն որոյ և յայտնի դիպ-
ածներումը նրանք ամէնից առաւել օգտակար են, մանաւանդ պնդա-
կազմ մարդկանց համար և երկարատե յամառ հիւանդութիւնների ժա-
մանակը :

Զուր ածելը վրան լինում է պարզապէս ջրահանով, կժով կամ որ
և իցէ ուրիշ մեծ ամանով : Այս եղանակը բաւական հեշտութեամբ տա-
նում են նաև չափահատ երախայքը և ծեր մարդիկ, եթէ ջուրը թափում
չին շատ բարձր տեղից :

Զուր թափելը վրան օգտակար է այն մարդկանց, որոնք փոքր
ի շատէ սովոր են արդէն ցուրտ ջրին, ինչու որ այս եղանակը ամելի զօ-
րաւոր է և ներգործական որպէս նախապահպանելու ցրտահարութեան
հիւանդութիւններից, նոյնպէս և վիրոյիշեալ ախտելը բժշկելու համար :

Առողութիւն կամ տուշ կոչուում է ջրի հոսանքը, որ բարձր տեղից
ածուում է անձրեի պէս : Ցուշը անտարակոյս առաւել զօրաւոր է, բայց
և առաւել ներգործական և օգտակար քան ամէն ուրիշ տեսակ ջրի գոր-
ծածութիւնը : Ցուշը կինդանացնում է ջղերի գործունէութիւնը և արիւ-
նաշրջութիւնը, օգնում է մարսողութեան, զրդուում է ախտրժակը և տա-
լիս է մարդին զօրութիւն, զուարթութիւն և աշխուժութիւն : Ցուշը ըլ-
պիտի շարունակուի աւելի քան 2—6 լուպէ :

Ցուրտ ջուրը այս եղանակով գործածուելով, բժշկում է շատ շու-
տով ամէն տեսակ լնողնատ տենդերը :

ԼՈՒԱՅՈՒՄԸ. ԼՈՂԱՆԱԼԸ. ԳԵՏՈՒՄ ԿԱՄ ՇՈՎՈՒՄ

Ցուրտ ջրի գործածոթեան ամէն եղանակներից ամենաօպտակարը աներկրայ է դետում կամ ծովում լողացնալը : Ալիքների գորկուածքը, մկանանց ձգուումը մարմինի հաւասարակշռութիւնը պահպանելու համար և մանաւանդ լողացն հարկադրում են լողացնողին բնդումնել զանազան դրութիւններ և առնել տեսակ տեսակ չարժմունքներ , որոնք ոչ միայն չեն աշխատ առնում և նեղացնում մարմինը , այլ բնդհակառակը նորոգում են նրան և դուարթազնում : Ծալի ջուրը ընդունակ է ոչ միայն պնդացնել մարմինը և զօրացնել նորա գործածոթիւնը , այլ և բժշկել չառ հիւանդութիւններ , որոնց լնդղէմ անզօր ևն համարուած բժիշկների երկայն դեղատունակները : Նաև լոկ գաւանիլն ծովի ափը պատճառում է նոյնակս մի բարեկար տպաւորութիւն մարդի վրայ , որ կարող է զյալ անսահման ծովոյին տարածութեան վասայիզ տեսարանը : Ճովի լոյնատարած երեսի գմայլեցուցիչ տեսիլը , փրփրալից ալիքների աղմկալի ծածանումը , ջրի յափշտակիչ հետ զնատէ զալն ու զնալը , վեև պատկերը , որ բացուում են որեզզական ծագէլիտ և մայր մանկվիս , գեղեցիկ ծովային թռչունքները և զանազան օտարուտի կենդանիքը — այս ամէնը լցուցանում է մուրդի սիրան ու միտքն մի առանձին անպատմնի զգացութեամբ և տալիս է նրան համարեած թէ նոր կեանք :

Մաղձատ մարդկիը (Առօհոնդրակ) կամ ուրիշ ջղային ախտերով հիւանդները նաև առանց լողանալու , միայն ծովի ափը ման դալով ըզգում են լաւութիւն և թեթեութիւն յաւերից :

Ցուրտ ջրերը , ցրաւութեան աստիճանին մակի տալով , պատճառում են . անդրնդիջական տպաւորութիւն մարմինի վերայ : Մի և նոյն ջուրը , որ միայն հովացնում է մինին , միւսի համար կտրող է համարուիլ ցուրտ և ընդ հակառակն մի և նոյն ջրից մէկը զգում է մեծ ցրաւութիւն , միւսը հաղիւ միայն հուլութիւն : Այս պատճառով գետումը կամ ծովումը լուացուելու ամէն մարդ պիտի առաջնորդ ընտրէ իւր համար իւր առանձնական զգացողութիւնը և ոչ թէ ջրի բարեխառնութեան աստիճանը : Բայց ջրերը լուացուելու համար առհասարակ պիտի ունենան ցրաւութեան կամ աաքութեան համարեամբէ յետազայ աստիճանները :

Հաստ ցուրտ , պաղ ջուրը . . . 10° մինչեւ 11° բէօմիւրի ջերմաչափով :

Ցուրտ ջուրը 10°—15—

Հովը 10°—20—

Չափաւորը 20°—25°—

Տաքը 25°—30—

Զիրմը 30°—35° կամ 36°

Այս ջրերի անընդմիջական ներդործութիւնքը կախուած էն զանազան պայմաններից՝ մարմնի կազմուածից, հասակից, առողջութեան դըրութիւնից, կլիմայից, ապրոյ եղանակից և այլն, վասն որոյ անկարելի է յառաջադրոյն սահմանել մարդի համար ջրի բարեխտութիւնը այս կամ այն առափճանը :

Գետերի բարեխտութիւնը կախուած է ջրի արագ կամ զանգաղը ընթացքից : Նաև մի և նոյն գետի մէջ ջրի բարեխտութիւնը չէ միաւնակ, ինչու որ դուրիվը ավելիը և դանազան խորութիւնը փոփոխում էն գետի ընթացքը և ընդ նմին նրա ապաւորութիւնը բողանողների վերայ :

Հով ջուրը ոչ թէ միայն պակասացնում է մարմնի տաքութեան աւելորդը այլ և հանդարտացնում է ջեղերի զրգոււմը, վերականգնելով նրանց մէջ մի առաւել ուղիղ արինաւրջութիւն : Վասնորոյ հով ջրի մէջ լուսցախը օդուակար է շոք ժամանակը, նա հեռացնում է վասնաւոր հրանդութիւնները, որոնք որ սեփական են շոք երկիրներին : Գետումը և ծովումը յաճախ, բայց չափաւոր լողանալը ունի շատ յաձ ջողակ հետեանքներ, նա պիտացնում է մորմին, զօրացնում է մարտզութիւնը, զրգուում է ախորժակը, յառաջ է բերում խորին և հանգիստ քուն, զուարթացնում է մարմինը, նորոգում է ամէն կենուական զօրութիւնները և ցնծացնում է հոգին ու միտքը խսդագուցնելով նրանց արևործութիւնը, եթէ լողանողները շարժուում են անդադար ջրի մէջ և երկար ժամանակ չեն մնում :

Ցուրտ ջրումը լուսցախը շատ օգտակար է այն մարդկանց համար որոնք շուտ շուտ հսկանանում են վնասացաւվ, խարբուխով, աչքացաւով (բորբոքումն աչք) կերկերութեամբ (ձայնի խանձուխը, կըտարուխը) հաղով, մկանց յօդուածացաւթեամբ, զղացաւութեամբ և դիմոցաւութեամբ : Կոյնակէս շատ զօրաւոր դեղ է զիրութեան, խորի (Յօհուուցա) և օրիորդների դժգունութեան կամ զեղնութեան ընդդէմ : Շատ անդամ պատահում են մնդ այնպիսի անձինք, որոնք շատ տաք հագուստեն հաղնում, երկշուռութեամբ դորուեմ են ամէն ցրտից և տյնքան առաւել և շուտով հիւանդանում են ցրտահարութեամբ, որքան առաւել զդաստ են նրա ընդդէմ : Այսպիսի անձանց ուները սովորաբար ցուրտ են ինչպէս ծիան, բայց զլուխը կրակի պէս տաք և մորմը զրնթէ միշտ թաց քրառունքից : Արանց հարկաւոր է փոքր փոքր սովորել լուսցախը պազ ջրով, շատ սպազ և նաև սառուցի ջրով :

Շատ վեասակար է լողանակ, զլուխը զինով տաքացած և փորը կերակուրով լի ժամանակը : Կերակուր ուտելից յևաոյ պիտի անց կենաց գոնէ չորս ժամ : Արանից առաջ ցուրտ նաև հայ ջուրը կարող է պատճառել դիմի կոթուած :

Շատ ցուրտ կամ պազ ջրով լուսցուխը վասնացաւը է դեռահաս :

երախանց և զառամեալ մարդկանց համար , Զառամեալ հասակումը մարդի մարմինը անդադար կորուսանում է ընդունակութիւնը բանալ և արձակել իւր մէջ կենդանական ջերմութիւնը , մարմի արտաքին մասների արիւնը պակասում է , ինչու որ ավերների սրտի զարկիլը այնչափ թողլ է , որ չէ կարողանում քչել արիւնը դէպի հեռաւոր տեղերը որչափ և հարկաւոր է ջերմացնել նրանց վասն որոյ լողանալու ժամանակը ծիրերի արիւնը հաւաքուում է ներքին գործարաններումը , որ շատ երկրուղալի է նրանց համար , ինչու որ սրանփց կարող է յառաջ դալ կաթուած , ի հարկ է պատահում են և ծերեր , որոնք լողանում են միշտ պաղ ջրի մէջ և մեռում են անվաս , բայց մենք չենք խօսում այս սեղ բացառութիւների վրայ :

Նորածին և դեռահասակ մանուկների ջերմութիւնը իշանում և բարձրանում է հեշտութեամբնրանց արեան քանակութեան սակաւութիւնից . վասն որոյ և նրանց մարմինը սակաւ առ սակաւ միայն ստանում է ընդունակութիւն տանել ցուրտ ջրի ներգործութիւնը առանց վեասակար հետանքների : Չորս կամ հինգ տարեկան հասակից պէտք է սկսել լողացնել երախանցը գետի ջրի մէջ ամառնային ժամանակը , եթէ նրանց առողջութիւնը չէ պահանջում առանձին դգուշութիւններ : Նրանց չըպիտի ջրի մէջ մնալ 1—3 րոպէից աւելի :

Կանայք դաշտանի օրիրումը (ամսական հոսումն) նոյնպէս և թըթախտական անձինք թանչքի արեան հոտման ժամանակը չպիտի լըւացուին ցուրտ ջրով , ինչու որ որպէս վերելք ասացինք արեան հոսումը կարող է կարուիլ ցրտի զօրութիւնից :

Նոյնպէս ծանր հիւանդութիւններից առողջանալու ժամանակ հարկ չէ զործ ածել ցուրտ ջուր լուացուելու համար , ինչու որ մարմինը կարող չէ տանել ջրի տպաւորութիւնը :

9.

ԳԵՏԻ ԿԱՄ ՇՈՎԻ ԶՐՈՒՄ ԼՈՂԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Լողանալոց առաջ հարկաւոր է փոքր ինչ ման դակ ոտոգ : Եթի որ հասար լողանալու տեղը , եթէ շատ դաշտարած ևս և հոգնած , յառաջ քան տելորդիդ հանդսաւացիր , բայց եթէ դաշտարած չես , այլ միայն տաքացել ես ման դարտի , շուտով շորերդ հանիր և մահիր ջուրը , մի տար մարմնիդ հովանալ , իւչու որ լողանալը զրգուում է արիւնաշրջութիւնը աւելի շուտով երբ որ մարմինը տաք է և այս կերպով յառաջ է բերում մարմնի ընդդիմակործութիւնը , այդինքն՝ արեան գախ ու գնալը : Հարկ չէ առկիր նստել երկար ժամանակ ջրի տփը , կարող ես մրսել :

Ցուրտ ջրի մէջ կարելի է մնալ 15—20 բոլէ : Արանից առաւել մնալը վնասակար է : Առասարակ պիտի դուրս գաս ջրից, երբ որ ըստ կըսար դողալ ցրուց :

Գետառմը կամ ծովառմը լողանալիս լաւ կլինի որ մարդ մենակ չըմնայ, ինչու որ ջուրը մանելու ժամանակը շատ անզամ ուների մկանունքը կծիւռմ են, մմրում են, ուստի անհնարանալով լող տալ, կարող է խեղջուիլ :

Պղտոր ջրերի մէջ լողանալը լաւ չէ, ինչու որ նրանք վնասակար ներգործութիւն ունին մորթի վերայ, մանաւանդ երիխանց :

Կերակուր ուսենից յետոյ չորս ժամից առաջ լողանալը անտարակոյն մնաս է, պատճառը որ կարող է խանդարել մարսողութիւնը եւ յառաջ քերել վտանդաւոր հետևեանքներ, ամենից օդտակարագոյն է լողանալ առաւօտեան անօթի փորուվ : Լողանալից յետոյ հարկ է խելոյն սրբուիլ եւ հանել շորերը : Երբ եղանակը պարզ է, օդտակար է չափառ դրսոնուլ : Անձրեւային ցուրտ ժամանակը վաս չի վնիլ լողանալից յետոյ առաջ չայ խմել :

Ծովումը կարելի է լողանալ առասարակ Յունիսից սկսած մինչեւի Սեպտեմբերը, առաւօտեան 7 ժամից մինչեւի 11 ժամը, 20—25 անգամ լողանալը մի ամառը բաւական է, բայց ամելի լողանալն եւս ոչ ինչ մնաս չի քննի :

Երբեմն լողանալից յետոյ երեւում են փոխումն, դժուարամարսութիւն, չնչառութեան գործարանների բարբարումն, սուր խաղաւարաք մորթի վերայ եւ այլն. այս դիպուածներում երբեմն հարկաւոր է թողնել մի առ ժամանակ լողանալը :

10

ՏԱՐ ԶՈՒՐԸ ԵԽ ԲԱՂԱՆԻՔԸ

Տաք ջրով լողանում են ըստ մեծի մասին ձմեռն : Լողանողները դդում են մի ախորժ տաքութիւն, որ տարածվում է եւ ներքին գործարաններում : Տաք ջրից մարմինի պինոդ մասունքները կակդանում են, վասնորոյ տաք ջուրը ունի բարերար ներգործութիւն երկար ման դալից կամ ճանապարհորդութենից վաստակած, դաղարած մարդի վերայ կարում է ջղերի դրդումն եւ հանդարտայնում է արխնաշրջութիւնը եւ մկանունքը : Եվհար մարդիկը, ջղային եւ մաղձային խառնուածի տէրերը դդում են մեծ թեթեւութիւն տաք բաղնիսից յետոյ, նոյնպէս այն անձննքները, որոնք անդադար ձգտում են իրանց միտքը եւ շարժում կիրքը :

Տաք ջուրը օդասաւէա է երեխանց առողջութեան համար : Ատքը ու

թեան համար բաւական է շարաթը մի կամ երկու անդամ լուանալ երեխին : Այժէ ամէն օր են լողացնում երեխանցը, այն ժամանակի պէտք չէ երկար պահել ջրի մէջ : Տաք ջուրը բարերար ճար է ծերերի համար, ինչու որ ծերութեան հասակում մորթը չոր է եւ պլնող, յօդուածները կարծք՝ հիւթերի պակասութիւնից, արինաշրջութիւնը՝ դանդաղ, կենդանական ջերմութիւնը՝ պակաս, չնչառական գործարանները թոյլ, անդաղար խարբուխը պակսացնում է մորթի արտաշնչաւթիւնը եւ այլն, բայց ծերերը տաք ջրի մէջ երկար չպիտի մնան եւ շարաթը մի անգամ աւելի չլողանան, ինչու որ նրանք երկար մնալով տաք ջրի մէջ եւ շուտ շուտ գործ ածելով՝ կարող են ստանալ ստղեղի կաթուած :

Կանայք կարող են գնալ բաղանիս դաշտանից յիառյ : Բաղանիքը օդտակար է յդութկան վերջին ամիսներումը եւ ծիծ տալու ժամանակը :

Լուացուելից յետոյ հարկաւոր է խկոյն սրբել մարմինը տաք ու չոր սաւանով ցրտահարութենից զգուշանալու համար : Զափաղանց յաճախ լողանալը թուլացնում է մորթը եւ առնում է նրան զգալի եւ ընդունակ շուտ շուտ ընկնիլ ցրտահարութեան հիւանդութիւնների տակ :

Տաք բաղանիս պէտք չէ մանել խկոյն կերակրից յետոյ, ինչու որ մարսողութիւնը՝ կերակրի հալումը կարող է յանկարծ դադարուիլ առեան դէպի մորթին զիմելու պաաճառով :

Հիւանդութիւնից առողջանալու ժամանակը տաք ջուրը պահայանում է մորթի յստակութիւնը եւ փափկութիւնը եւ պակսացնում է ջըդերի զրդումը :

Զափաղանց ջերմ ջրով լողանալը ոչ միայն օդտակտ չէ առողջութեան հտմար, այլև վնաս է, վասնորոյ շատ զգուշութեամբ պիտի գործածուի :

Բաղանիս պէտք է գնալ որպէս ամառն, նոյնոյէս եւ ձմեռն : Ամառն ժամանակը բաղանիքը օդտակար է նաեւ ամէն օր զետումը լողանողի համար, ինչու որ բաղանիսի տաքութիւնը աւելի լաւ կարող է ժստակել մորթին քրտունքից եւ դադարած մկանունքներին աալ զօրութիւն :

Արեւելեան կողմը բաղանիքը գործ են ածում շատ անչափաւորաբար : Արեւելեան բժիշկները հաւատացնում են, թէ նրանց կանայքը վաղ թառամում են, կորուսանում են զիղեցկութիւնը բաղանիսի չտրաչար գործածութեան պատճառով :

Մարմինի շփելը, մերսելը բաղանիսում շատ օդտակտ է, նա քշում է արինը մարմինի ներքին գործարաններից դէպի արտաքին գործարանները, հեշտացնում է արինաշրջութիւնը, զօրացնում է մորթու եւ մըկանունքների գործունէութիւնը եւ կակզացնում է անդամները : Մերսելը կենդանաբարար ներգործութիւն ունի այն մարդի վնասյ, որի պաշտօնը կամ արհեստը պահանջում է նստած կեանք վարել, բաւական պարսալ ժամանակի չունենալով ման դալու համար :

Բաղանիսը պէտք է գնալ մի կամ երկու անդամ ամիսը : Անօթի փորով բաղանիս մանելը մնաս է, ինչու որ տաքութեան ներդործութենից կարելի է թուլանալ, նուազիլ . բայց կերակրից յետոյ մի կամ երկու ժամ պիտի անց կենայ, որ մարսողութիւնը չխանդարուի :

Չմեռն բաղանիս գնալիս չպէտք է երկար մնալ զուրսը ցրտառմը, բայց եթէ անհնար է պահպանել այս զդուչութիւնը, զմնէ չմնանել իսկոյն ուղղակի տաք բաղանիս, այլ մի վոքք հանդստանալ շորերը հանելու սենեակում : Եթէ այսպէս չանէ, կարող է մարդ ստանալ խարբուխ, հաղ և ուրիշ հիւանդութիւններ :

Բաղանիսից զուրս գալից առաջ օգտակար է հով ջուր ածել տալ վիրան և զուրս գալից յետոյ ոտները լուանալ ցուրտ ջրով : Այս հնարքով ոտները զառնում են ընդունակ ընդդիմանալ ցրտին և ցրտահարութեան :

Բաղանիսից յետոյ ցուրտ ջուր խմելը մնաս է, կարելի է խմել չայ և քիչ կերակուր ուտել, շատ ուտելը նոյնպէս մնաս է, ինչու որ մարսողութեան գործարանները այն ժամանակ զրգուած լինելով, չեն կարող հալի կերակուրը : Ով որ սովոր է ցուրտ ջրով լուացուելուն, կարող է միւս օրը կրկն սկսել լուացուիլ :

11

ԶԲԱԲԺԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Զուրը մի այնպիսի պարզ ճար է, որ թէպէտ կարող է փոխարինել զրեթէ ամէն զեղերը, որոնք առաւելապէս բաղկանում են հովացընող, զօրայնող, զրդուող, քրտնեցնող, կալդեցնող և լուծանող ճարերից, բայց այսու ամենայնիւ անկարելի է համարել նրան ընդհանուր գեղ ամէն ցաւերի ընդդիմ : Եթէ շատ ցաւեր ընդդիմանալով ամէն տեսակ զեղերին, շատ անդամ բժիւում էն ջրի գործածութեամբ, այս հանդումանքը պիտի վերաբերենք աւելի հին, երկարատեւ հիւանդութիւններին, բայց նոր որընթաց ախտերումը, որոնք որ պահանջում են արագ օդնականութիւնն, ջուրը ըստ մնձի մասին չէ այնքան ներգործական ճար : Այսպէս ջրաբժշկութիւնը չպիտի զուրս հանի բժշկականութիւնից ամէն զեղերը և մինք խոհեմարար օգուտ պիտի քաղինք երբեմն ջրից և երեսին ուրիշ զեղերից : Ջրի և միւս ճարերի ընտրութիւնը կախուած է բժշկի բանականութիւնից, փորձից և ցաւի ճանաչելից :

ՀԱՍԱՐԱԿԱՑ

Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն



Ե Ն Զ Ա Ռ Ո Ւ Խ Ա Ն Գ Ո Բ Շ Ա Բ Ա Ն Ն Ե Բ Ի

Ա Կ Տ Ե Ր Ը

Խարբուխը, հասարակ փողացաւը, հաղադի փողացաւը, կամ պարզ բորբոքումն հաղադի, քոռովի փողացաւը կամ տուտ թաղանթային բորբոքումն հաղադի, քթի արիւնահոսութիւնը, թքումն արեան, կշտացաւութիւնը, թոքախսութիւնը, խորուղակը կամ քսքչիւշը :



ԽԱՐԲՈՒԽԸ (CATARRHUS)

Այս հիւանդութիւնը է կամ քթի ծակերի մաղասային թաղանթի և կամ թոքառաջքի չնչափողի ճիղերի բորբոքումն Երբ որ բորբոքվում է միայն քթի թաղանթը, խարբուխը լինում է թեթեւ, անհաղեւ գրեթէ անջերմ (Coruya, πασμορκъ). բայց եթէ բորբոքողականութիւնը տարածվում է նեքեւ դէպի չնչափողը, այն ժամանակ խարբուխը է հաղով և չատ անդամ հաղով և ջերմով միասին, (Bronchitis catarrhalis, Catarrhus pulmonum, Febris catarrhalis).

Որպէս պարզ, անհաղ խարբուխը, նոյնպէս և հաղովը ու տենդովը լինում են սուր և երկարատեւ:

Պարզ խարբուխը այնքան սովորական և աննշան հիւանդութիւն է, որ հիւանդները համարենա թէ միշտ արհամարելավ նրան, օդնութիւն

չեն խմորում բժշկից : Այս խարբուխը շատ շուտ չուտ է պատահում մարդուն, երբեմն միենոյն ժամանակում հիւանդանում են սրանով մի որ եւ իցէ բնակութեան բոլոր ժողովուրդը :

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Եղանակի յանկարծ փոփոխութիւնը գարունքին եւ աշունքին, մարմիկ սովորական արտաշնչութեան ընդհատութիւնը, նոյնպէս եւ արհգակի տաքութիւնը խոնաւ ցրտից յետոյ շատ հեշտութեամբ յառաջ են բերում այս ցաւը : Այս պատճառները այնքան զօրաւոր են, որ համարեամ թէ ոչով չէ աղատվում նրանց ներգործութիւնից, այլ ամին մարդ տարինը գոնէ մի կամ երկու անգամ հիւանդանումէ այս ախտով : Ժողովուրդը առ հասարակ կարծում է, թէ խարբուխը փոխադրական է, բայց ուղիղ ապացուցութիւններ չկան սրա տարափոխիկ լինելու մասին : Այս կարծիքի պատճառը գուցէ այն է, որ մինւնոյն ժամանակում եւ միեւնոյն տեղում հիւանդանում են սրանով շատ մարդիկ :

ԱՐԿԱԾՆԵՐԸ ԿԱՄ ՆՇԱՆՆԵՐԸ

Քթի խոռոչները, վոսերը ծածկուած են քնքուշ եւ խոնաւ մաղասային թաղանթով : Այս թաղանթից դուրս է գալի միշտ մի խժային հիւթ, որ սակաւ սակաւ հաւաքուելով՝ խափանում է չնչառութիւնը, այն ժամանակ մենք զգում ենք հարկաւորութիւն խնչելու, քիթը որբելու : Այս կատարվում է մարդի առողջ դրութեան ժամանակը, բայց երբ որ խժային հիւթը թափանումէ քթից չափազանց, կառերը որ մենք խնչում ենք դուրս առաջ հիւանդը զգում է քթի մէջ չորութիւն եւ ծանրութիւն եւ խժային հիւթի ելանելը, որպէս թէ բոլորովին կըտըրուած է : Այս դրութիւնը կոչվում է չոր խարբուխ և Սի քանի ժամանակից յետոյ արկածները ուսստկանում են, ոնզունքներումը երեւում են ջերմութիւն եւ ցաւ եւ սկսում է առատօրէն դուրս զալ խժային հիւթը, որ է պարզ, ջրալի, անդոյն, աղի : Քթի թաղանթը եւ նրա մօտիկ մաշկը կարմրած են եւ ուռած : Այս կարմրութիւնը յառաջ է գալի ոչ թէ միայն բորբոքողականութիւնից, այլ եւ կծու հիւթիներգործութիւնից, որ համարեամ թէ անդադար թափուելով քթից, զաղում է, այրում է քթի ավեները եւ վերին շուրթը : Բայց մի քանի ժամանակից յետոյ խժային հիւթը սկսում է առսել թանձրանալ եւ կորուսանել իւր կծուութիւնը, առաջ առաջ Անելով գեղնագոյն եւ շարաւանման, յետոյ սպիտակ եւ վկրչումը ստանալով իւր բնական յատկութիւնը :

Ալրանք են անջերմ և անհազ սուր խարբուխի նշանները : Բայց երբ ինա նրա հետ զուղընթաց են ջերմը և հազը : Այս ժամանակի հիւանդները բացի պարզ խարբուխի արկածներից զգում են անընդհատ երթեմն դող, երթեմն առաջութիւն, դլխի ծանրութիւն, զլխացաւութիւն, մտնաւանդ ճակարի կողմը, ծանրութիւն կամ ճնշումն կրծումը և աչքերումը, թուլութիւն, անհանգստութիւն, անընութիւն, անախորժակութիւն և ծարաւ : Ենուն լինում է ճերմակ, բերանը անհամ, որովայնը ըստ մեծի մասին կապ : Այս ընդհանուր անառողջութիւնը նոյնչափ սաստկանում է, որչափ քթի հսթը թանձրանում, և միտում է լաւանալ, երբ որ երեւում է հսթի կանոնաւոր հոսումը : Այս արկածները անհամենատ առաւել նեղացնում են հիւանդին չոր հազի ժամանակը և սաստկանում են առաւել երեկոյիան պահին մինչեւի կէս դիշերը, քան թէ ցերեկով :

Հազը պատահում է, որպէս ջերմով, նոյնպէս և անջերմ խարբուխի ժամանակը : Այս արկածնան հազի դիտուածում չնշառական խողովակների մէջ կատարվում են միեւնոյն երեւութները, որոնք լինում են քթի խարբուխի ժամանակը, առաջ առաջ լինում են չնշառութեան ճանապարհների մաղասային թաղանթի ձգտումը, ուռչելը և չորութիւնը, որոնք նշանակում են բորբոքումը, յետոյ այս բորոքողականութեան լուծումը բլղամի հոսելով, և վերջապէս հազի պակասելը և առողջանակը :

ՑԱ.Ի. ԸՆԹԱՅՔԸ, ԵՐԿԱՐԱՏԵԽՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԵԼՔԸ

Սուր խարբուխի ընթացքը շատ արագ է, թէովէտ բորբոքողականութեան զօրութիւնը շուտով նուազում է, բայց զժուար չնշառութիւնը քթով : Հիսթի առաւ հոսումը և քթի ըմբռնելը, ծանրանալը կարող են տեսել երկար ժամանակ և նաև պահանջել բժշկական նպաստ, մանաւանդ երդիչների համար, որոնք կամնուում են վերադարձուցանել շուտով իւրեանց ճայնի պարզութիւնը : Խարբուխը առաջ առաջ լինում է քթի մի ծակում, յետոյ միւսում : Այս հիւանդութիւնը չորս կամ հօթն օրից աւելի չէ տեսում, եթէ չէ անց կենում դէպի երկարաւեւ դրութիւնը : Ելքը կամ վերջը միշտ բարի է, բայց երթեմն լինում է վտանգաւոր կաթնակը մանուկների համար : Երբեմն խարբուխը չէ կտրուում մի քանի օրուան մէջ, հնամում է և դառնում է երկարաւեւ, որ տեւում է անսահման ժամանակ : Այս պատահում է կամ վատ կազմուած քիտէր մարդկանց, կամ խուլական ախտով հիւանդներին :

Զերով և հազով խարբուխից կամ խարբուխային տենդից նոյնպէս պէտք չէ երկնչել, նա մի վտանգաւոր ցաւ չէ, այլ մի թեթեւ և կարճատեւ հիւանդութիւն :

ԲԺՇԿԱՑՄԱՆ ՅՈՒՂԵՐԸ

Թեթև անջերիմ եւ անհաղ խարբուխը ինքն իրան լաւանում է առանց դեղորելից, բայց եթէ հիւանդը պահանջում է շուտով բժշկութիւն ձայնի պարզութիւնը յետ բերելու պատճառով, այն ժամանակ կարելի է գործածել յետապայ ճարերը :

- 1). Խմել մանուշակի չայ շաքարով :
- 2). Երեկոյիհան պահին կէս ժամի շափ ուները դնել մանանեխով կամ մախուրով տաք ջրի մէջ :
- 3). Ստամոքսը լոյծ պահել կակղացուցիչ դրեխով :
- 4). Կիրակուրը պիտի լնի քիչ եւ թեթև, ողիաւոր բամպելիք եւ խանուէ չգործ ածել :
- 5). Զգուշանալ ցրտից, մանաւանդ խոնաւութիւնից :
- 6). Քթումը բուղ տալ մանուշակի կամ ուրիշ կակղացուցիչ խոտերի տաք թրջոցով :

Նոր սկսած ջերմով եւ հաղով խարբուխը երբեմն կտրվամ է մի ըստական պունչով, որ հիւանդը պիտի իմէ դիշերով եւ խկոյն մտանէ տեղաշորը քրանելու համար : Բայց եթէ մի քանի օր անց է կացել խարբուխի սկզբից, այն ժամանակ որպէս պունչը, նոյնպէս եւ ուրիշ ողիաւոր խմիչքները վնաս են, այլ հարկաւոր են ուրիշ դեղորայք : Խարբուխային տենդի եւ հաղի բժշկութեան առաջին պայմանը այն է, հիւանդին տաք պահել, ովակնեցնել չնչափողի զրգուումը, որ պատճառում է հաղը եւ անօրդացնել կամ կակղակցնել պլղամը : Այս պատճառուվ հիւանդին պէտք չէ տանից դուրս գա լվատ եղանակում, շատ խօսելից եւ ծխախոտից կամ ուրիշ ծովից հարկ է հեռանալ եւ գործ ածել յետապայ ճարերը :

1). Խմել կակղացնող եւ հանդարտացնող հեղանիթը, որոնք են մանուշակի կամ հաստրակ չայն, տաք կաթը, վարսակի կամ գարու տաք խաչուն, նշի կաթը շաքարով, լանջական չայն (ցրցնայ չայ), մուշիւր (բաղրջուկ) կամ վշոյ խաչուն, հում հում ձու խաղամել :

2). Շահաւէտ են նոյնպէս մատուտակը, վանաշաքարը, (սառը շաքարը) եւ այն ամէն ճարերը, որոնց մէջ գտանլում են խէֆ եւ շաքար : Այս ամէն կակղացուցիչ դեղորայքը մի եւ նոյն զօրութիւն ունին, մինը միւսից գերազանց չէ եւ թէպէտ շատ օգտաւէտ են, բայց չսփառանց եւ երկար գործածութիւնը կարող է վնասակար լնին, խանդարելով մարսողութիւնը եւ աւելացնելով կուրծքի պալղամը, վամնորոյ նրանք վնասակար են ալեւոր մարդկանց, աբաղ խմողներին եւ բարակացաւով հիւանդներին, որոնց պալղամը առանց այդպիսի դեղորելից եւս հոսում է առատութեամբ :

3). Բժշկները այս ցաւի խսկական դեղ են համարում անուշաղիրը : Այս ճարը տալիս են յետաղայ եղանակով, մի մսխալ անուշաղիրը հաւառում են 12 զրգալ ջրումը յաւելացնելով երկու մօխալ մասուտատիկ (իմարտիս, քաղցր մարտիս) եւ այս խառնուրդը խմեցնուամ են հիւմողին ամէն երկու երկու ժամ՝ մի սեղանի զրգալ : Այս դեղը յաւելացնուամ է մաղասացին թաղանթի ներդրութութիւնը, որին եւ պլղամի հոսումը :

4). Արտաքին ճարերից զլիսաւորները են խարանաղեղը, մանանեխոյ սպեղանին, որոնք դնուած են կուրծքին, ոաները տաք ջրի մէջ դնելը, թէթեւ եւ մարսական կերակուրները եւ ցրտից պահպանելը :

Նորածին մանուկներին խարբուխից բժշկելու համար, պէտք է զործածել յետաղայ հնարիները :

1). Խարբուխի վտանգաւոր դիապուածներում, երբ որ երեխի չնչուութիւնը արգելվուամ է կաթը ծծելիս, այն ժամանակ հարկաւոր է ծըծից կտրել երեխին եւ զրգալից ուտեցնել կովի կաթը խառնած կլաուչափ գարու խաշուի հետ :

2). Երեխի ոնդունքները շուտ շուտ լուանալ թանթրվնու կամ տղափ (վալխաթումիր. rad. Alth.) արմատի խաշուով :

3). Շատ երեխալալի դիապուածներում, երբ որ երեւում են արեան հաւաքուելու նշանները զլիսում, պէտք է մի տղրուկ կացնել ականջի քամակին եւ կամ խարանաղեղ դնել ծոծրակին եւ տալ յետաղայ փոշին. վեց դարեհատ քաղցր մնդիկը թալլեցո եւ մի մսխալ շաքարը խառնել միասին, բաժանել չորս հաւասարաչափ մասը եւ ամէն մի ժամ խմեցնել երեխին մի մի փոշի տաք ջրով կամ կաթնով :

4). Երեկոյեան ժամին դնել որունից թամբի վրայ մանանիոյ սպեղանին կամ խմորը :

ԵՐԿԱՐԱՏԵՒ ԽԱՐԲՈՒԽԻ

Եթէ անհոգ թովնել տենդով սուր խարբուխը, նա հնտնում է եւ կոչվում է երկարատեւ : Ենչառական ճանապարհների այս ախտը է պըլղամայլ լանջական հաղը, որ երբեմն կտրվում է եւ երբեմն նոր երեւում ցրտահարութիւնից : Արա երեխը շատ սովորական է եւ յաճախ մանաւանդ ծերութեան հաստկումը : Եթէ երկարատեւ հնարյած խարբուխի հաղը չափաւոր է, այն ժամանակ չունի մի երեւելի նշանակութիւն, ըստ որում բացի վուքը ինչ դժուարաշնչութիւնից ուրիշ ոչինչ երկիւադ չլայ նրանից : Բայց եթէ երկարատեւ խարբուխը մի լուքնակայ, անկախ հիւմութիւն չէ, սոյլ մի ուրիշ առաւել երեւելի ախտի արկած, այն ժամանակ նրա հետեւանքը լինում են յաճախ սողետալի, ինչու որ նա միշտ խառացնուամ է տյն հիւմութիւնը, որից որ կախուած է եւ յա-

ուաջ է գալի : Այսպէս բարակացաւի ժամանակը բարբռնիը անդադար պատճառում է արեան հաւաքումը դէպի կուրծքը, սրաից ցաւի ժամանակը հաղը թոյլ չէ տալի, որ սիրաը հանդարատ մնայ, թանձքով, յօդուածայաւով հիւանդներին և արբեցովներին, որոնք առնասարակ նեղանում են պլզամի չափաղանց առաւատթիւնից, վտանդաւոր է խարբուխը, ինչու որ արդեկում է օդին մտանել թռքը և նորոգել արինը :

Այս ամենից յայսնի երեւում է, որ երկարատեւ հաղի ժամանակը հարկաւոր է զործ ածել ամէն հնարքը նրան կտրելու համար, մանաւանդ որ հաղի պատճառը կարող է լինիլ մի որ եւ իցէնշանաւոր ախտ, որ խստանում է խարբուխից :

ԵՐԿԱՐԱՏԵՒ ԽԱՐԲՈՒԽԻ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ամէն հաղի ժամանակը, որպէս անկախ, նոյնպէս և արկածիան հիւանդը անշուշտ պիտի պահպանէ իրան ցրտահարութիւնից, հրաժարուի ողիաւոր խմիչքների զործածութիւնից և հեռանաց ծխից և թօղից, Վերոյիշեալ խժային դեղորայքը երկարատեւ խարբուխում ես կարելի է զործ ածել, բայց չափաւոր : Հարկաւոր է առաւելապէս աշխատիլ պնդացնել հիւանդի կուրծքը և սովորացնել նրան ցրտին ։ Վասն որոյ յաճախ պէտք է վայելել բայց օդը, բայց վախճիլ խնաւեղանուկից, լուանալ առաւօտ և երեկոյ կուրծքը և մէջքը ցուրտ ջրով, այլ ամսով լողանալ դետում կամ ծովում : Ակրքին զործածութիւն համար պարզ երկարատեւ խարբուխի ընդդիմ շահաւէտ են խժային բոյսերի խաչուքը, զորօրինակ. Յ մասալ վայրի որք անունով բոյսը (հապան ամսուը) (dulcamara) խառնում են 12 մասալ լանջական չափի հիւ (գրդանի չափ, species pectoralis) այս խառնուրդից մի դրդալ եփում են չորս բաժակ ջրի մէջ մինչեւ նրա կէս մասնի սպասիլը, յետոյ դառնամ են, քամում են և խանցնում են հիւանդին տաք տաք մի մի բաժակ առաւօտ և երեկոյ : Շահաւէտ է նոյնպէս ըմպել ամեն օր յետաղոյ խաչոն. Խլանդիոյ մամուռը (Неландскій мохъ, Lichen Islandicus) բոյիկալայ անունով խարը (горький многомлечникъ, Polygala amara) և մասաւտակը, ամէն մէկից մէկ ու կէս մասալ եռայնուամ են չորս բաժակ ջրի մէջ այնչափ, մինչեւ մնումէ երեք բաժակ : Այս ամէն խոտերը կարելի է զնիլ դեղարանից առանց բժշիկ հրասանի :

Ուստի վայելում են անդադար մի արաւութիւն, բայց ճաշից և հասարակօրէն ամէն կրակից յետոյ չչառութիւնը դժուարանում է և մարսողութիւնը ևս շատ թէ քիչ խանդարվում, ուստի երեւում են երբեմն ստամոքսի ցաւ, որտի նողկանք և վախումը : Այս երկըորդ տնասակ հաղը, անիրաւացի կոչում են ստամոքսական, իբր թէ

յառաջ է դալի ստամոքսի տկարութիւնից : Այս հաղի դիպուածում իւղավին եւ խժային ճարերը վեասակար են, այլ պէտք է զործ ածել լուծողական կամ փախողական դեղ եւ առա դառնահամ եւ զօրացուցիչ ճարեր : Այս տեսակ հաղի ընդդիմ օգտաւէտ է եւ շահաւէտ պաղ չայն եղնահամնամից (Acorus Calamus. աղիր) եւ առնիքայի (Arnica) արմատներից : Այս հազումը եւս օգտակար են ցուրտ ջրով լուացուիլը եւ լողանալը :

Երրորդ տեսակն է ջղական կամ ցնցական հաղը : Այս հաղը ունի մի տեսակ, որ կոչվում է կօվլուշ (Coqueluche, ռուսութ) : Սա պատահում է առաւելապէս երախայից, շատ փոփոխական է չարաչար ջերմու եւ ջլերի ցնցմունքով, սաստիկ վտանգաւոր է եւ երկարատեւ :

Այս սաստիկ հաղը ստորագրեցինք առանձին յօդուածով, որ կարդացովը կանանէ ներքեւը իւր տեղում :

Հասարակ ջղական հաղը յառաջ է գալիմրսելի, սաստիկանում է եւ խստանում այն ամէն բանից, որ ինչ զրդուում է ջլերը եւ մանաւանդ կիրքը, վաղելը եւ խօսելը չունին ոչինչ ներդործութիւն այս հաղի վերայ :

Բժշկութիւնը կախուած է ցաւի նոր կամ վաղուց երեւելլց : Նոր դիպուածում օգտակար է խարանադեղը կուրծքի վրայ : Առաւել հնացած դիպուածում շահաւէտ է կամքնի եւ շիջուկի երկար դործածութիւնը : Օդուակար են նոյնպէս օրամէջ աղի տաք ջրի մէջ նստելը կամ ամէն օր ցուրտ ջրով լուացուիլը :

Ջղական հաղի արկածի ժամանակը կուրծքի վրայ պէտք է դնել մանանիոյ սպեղանին (горчица), հիւթերի հաւաքումը ներքին գործարաններից հեռացնելու համար :

Կայ մի ուրիշ տեսակ եւս հաղ, չոր հաղ, որով ժամանակ առ ժամանակ հիւանդանում են բաղմարին անձննքը : Այս հաղը սաստիկանում է մարմնի շարժմունքից եւ ուղիկից է սովորաբար կուրծքի խեթքի եւ նեղութեան հետ : Այսպիսի հաղը երբեմն զուշակում է արեան թքունն : Այս դիպուածում հիւանդը ովսի պահպանէ վարձել (ձեռա) քիչ ուտէ, խմէ փախեցուցիչ աղ, Գլաբերեան կամ Անգլիոյ աղը, ոտները զնէ տաք ջրի մէջ եւ եթէ արկածները շատ սաստիկ են, հարկաւոր է արին հանել կամ կուրծքին արեան սրուակներ (կոսորչներ) կացնել :

Այս հնարիները գործ են ածում արկածի ժամանակը : Բայց հաղի նոր արկածների կամ զարծի առաջը կարելու համար օգտակար են կաթնի շիճուկը, ման զալը, մարմնակիթութիւնը, ցուրտ ջրով շփելը եւ առաւօտ առաւօտ անօթի ցուրտ ջուր խմելը, կերակուրը պիտի վնի շարիաւոր եւ դիրամարս :

Եթէ հաղը կախուած է, յառաջ է դալի ուրիշ հիւանդութիւններից, թթախտութիւնից (մայասիլ), բարակացաւից, սրափ ախաերից եւ ոյլն, պէտք է դլմաւուրապէս բժշկել այն ախտը, որ պատճառում է հաղը :

ՀԱՍՈՐԱԿ ՓՈՂԱՑԱԻՔ

(anqina Cynanche)

Նախնի բժիշկները փողացաւ տսելով, հասկանում էին անխտիք պարանոցի կլանելի եւ չնչառական դործարանների բորբոքումը: Այս գործարանները են՝ կոկորդը կամ որկորը, հագաղը, չնչափողը կամ խոչափողը, լեզուակը, մակալիղուն, բերանի առաստաղը, քիմքը, հագաղի, կոկորդի, ծնօտի եւ քմանց մասնքը, նոյնպէս նշաճն անուն մասնքը կամ սպնդային մասունքը եւ այլն: Պարանոցի այս ամէն մասների բորբոքումը կոչվում էր փողացաւ (anqina, Cynanche) եւ համարվում էր մի հիւանդութիւն, բայց այժմ անդամագնութեան չնորհքով այս մասների համարեամ թէ ամէն մինի բորբոքումը է մի ջոկ տեսակ փողացաւ, ունելով ջոկ նշաճնակութիւն եւ անուն, եւ պահանջնելով առանձին բժշկութիւն:

Այս տեղ մինք ստորագրում ենք յառաջադոցն փողացաւութեան մի առաւել սովորական տեսակը, որ է հասարակ կամ պարդ փողացաւ, թէպէտ սա առաւել պատկանում է կլանելի դործարանների ախտերին քան թէ չնչառութեան: Այս ցաւը պատահում է ցրտահարութիւնից եւ կարելի է հեշտութեամբ բժշկել հասարակ կեղերով:

Այս հասարակ փողացաւը է բերանի մէջ եղած այն դործարանների բորբոքումը, որոնց ամէն մարդ կարող է տեսնել հիւանդի բերանը բանալով եւ մտիկ տալով, նաև ինքը՝ հիւանդը կարող է նկատել հայելու միջնորդութեամբ: Այս դործարանները են որկորոյ մուտքը, բերանի առաստաղը, լեզուակը, նշաճն մասնքները եւ այլն:

ՊԱՏԾԱՌՆԵՐԸ

Փողացաւով հիւանդանում են ամէն հասակի անձինք, բայց կարելի է առել որ այս ախտի ենթակայ են առաւելապէս չափահամները, Ոմանք հիւանդանում են այս ցաւով տարենը մի քանի անդամ, եւ ով որ մի անդամ տկարացել է, նա չատ տարի շարունակաբար ստանում է այս ցաւը մինչեւ այրութեան հասակը: Այս ցաւի բնական պատճառներից ամենազլիաւորը է տարու եղանակը դարնան միղբումը, երբ որ եղանակը անձեւային է եւ օդի բարեխառնութիւնը փոփոխական, երեւում են չատ հիւանդներ փողացաւով, որ եւ այս ժամանակին բնողունում է երբեմն տարափոխիկ ախտի բնաւորութիւն: (Le Coractire épidémique)

Փողացաւի զլխաւոր պատահական պատճառները են ցորաք եւ խոնաւութիւնը, որոնք արգելում են մարմնի արտաքաշութիւնը, Այս ցաւ

ւով յաճախ հիւսնդանում են այն անձինքը, որոնք քրտնած մըտնում են ցուրտ ջուրը, նստում են խոնաւ գեանի վերայ, ցուրտ հողմի դէմուդէմ եւ պատահաբար հադնում են թուց շորեր, քնում են բաց բաց եւ քրտնած ժամանակը խմում են ցուրտ ջուր,

ՆՇԱՆՆԵԽԾԸ

Փողացաւութիւնը սովորաբար սկսվում է մի ծակողցաւով կոկորդում կամ մի որ եւ լիցէ կոզմի նշաճեւ մասնքում կլանելու ժամանակը։ Նշաճեւ մասնքները են այն երկու կարմրագոյն աղաղային մարմինները, որոնք դրած են աչ ու ձախ լնդուի արմտափի մօս։ Եթէ բորբռքվում են այս մասնքը, այն ժամանակ յառաջ են գալի կարմրութիւն ծամքելիս եւ կլանելիս։ Յաւլց առաջ երբեմն երեւում է մի ընդհանուր անառողջութիւն, դող, ջերմ, անախորժակութիւն, թուլութիւն եւ անհանդիա քուն։ Այս ընդհանուր արկածները կոչվում են տեսող, եւ համարեամ թէ միշտ յառաջ են գալի արինաշը ջնիւան անկարգութիւնը, երբեմն տեսողը երեւում է ցափ հետ մասնին կամ ամենեւին չէ վնասում։

Բայցի սաստիկ ցաւլց նշաճեւ մասնքներում կամ կոկորդի բերանում երեւում է տռոյց, որ պատճառում է վզի ճնշումը կամ ծանրութիւն, կլանելու եւ խօսելու դժուարութիւն, եւ երբեմն կառարեալ ճնշարդելութիւն, եթէ ուռոյցը մեծ է։ Բորբռքուած մասներից զուրս է զալի առատօրին մի թանձր խժային հիմք, որ շատ ցաւով եւ դժուարութեամբ միայն կարողանում է հիւանդը հեռացնել աղատ ճնշառութեան հասմար։

Ցալին եւ ուռոյցքին հետեւում են զլսացաւութիւն, ճայնի կերկերում (քթումը խօսելը) եւ երբեմն նաև խլութիւն եւ ցաւ ականջներում։ Եթէ բորբռքողականութիւնը տարածվում է մինչեւի վիրին մասն հաղաղի, այն ժամանակ երեւում է հաղ, որ կոչվում է կոկորդակին կամ հաղաղային։

Այս փողացաւութեան արկածները, երկարատեւութիւնը եւ ելքը շատ զանազան են։ Հիւանդներից ոմանք զգում են միայն խօսելիս եւ կլանելիս թիթեւ ծակումը նշաճեւ մասնքներում, ոմանք ընդհակառակն լինում են մեծ վասնդի մէջ ճնշառութեան դժուարութիւնից։ Հիւանդութիւնը երբեմն անեւում է մի քանի օր եւ երբեմն երկու եւ երեք շաբաթ։ Երբեմն նշաճեւ մասնքների ուռոյցը ցրվում է եւ փարատվում առանց որ եւ լիցէ հետեւանքների եւ երբեմն հասունանում է եւ բացւում եւ կամ մնում է պինդ երկար ժամանակ։

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Փողացափ սկզ բռումը պաղեղը հրաշքի պէս կտրում է հիւանդուն թիւնը : Երկու մնխալ պաղեղը հալում են տասը դրգալ ջրումը և էտառվ ողողում են բերանը, բայց պէտք է զգուշանալ, որ տասմները երկար ժամանակ չլուծուին պաղեղի ջրով : Կեկի լաւ կլնի, թէ որ պաղեղին վուշին կամ ներս փչել բերանում և կամ թաց մասնով վեր տանել վուշին և չփել բերանը : Աթէ լեզուն յատակ չէ, հարկաւոր է տալ վախիցուցիչ ճար կամ թիւթեւ լուծողական :

Հիւանդը ծարաւը կոտրելու համար հասարակ ջրի տեղ ոլիսի իմէն մանուշակի չայ խարթութի շարապով, ողիսաւոր խմիչքներից հեռանայ, բերանը շուտ շուտ ողողէ եղեսպակի (առլեյ) կամ ուրիշ կակզացուցիչ բունկրի արգանակով, չայով, մի փոքր մնող և քայլսի խառնած, ոտները ամէն երեկոյ տաք ջրի մէջ զնէ մի վոքք մահանեխ կամ մոխիր խառնած : Որովայնը լոյժ պահէ թիւթեւ դրիխով : Կերակուրը պիտի լինի ջրալի, թեթեւ :

Գաղղիացի բժիշները նորում հրատարակեցին մի շատ հեշտ և նւ շատ օգտակար ճար, նրանք խորհուրդ են տալի վաղացաւվ հիւանդին անդադար ողողել բերանը ցուրա ջրով մինչև բորբոքման ոչընչանալլ : Երախանոց պողաղը եւս կարելի է շուտ շուտ լուսալ ցուրտ ջրի մէջ թաց արած պատրուփի վառնչով : Յուրա ջրի գործածութիւնը շատ օգտակար է եւ յետազայ եղանակով, մի նույրը կտաւեաց թաշինակ ծալել վաղապատի պէս, թոջել ջրի մէջ, լաւ քամել եւ այս թաց թաշինակով կապել պարանցը, յետոց սրա վրայ վաթաթել մի շալ եւ թողնել այսպէս երեք ժամ, Արեք ժամից յետոյ պէտք է կրկն թրջել թաշկինակը և կրկն վաթաթել պարանցը, բնչպէս առաջին անգամ : Այս ճարի գործածութեան ժամանակը հիւանդը պիտի պողաղը անդադար ողողի արգանակով : Այս ճարերով վաղացաւը բժշկվում է սովորաբար հինգ կամ վեց օրուան մէջ : Բայց եթէ նշաճեւ, մսանք ների բորբոքմանը հասել է խթ վերին տատիճանին, հիւանդը ունի սաստիկ ջերմ, ողողում է անտառնելի ցաւ, երեսը կարմիր է, հաղիս կարողանում է քթում խօսել, քուն չունի, այն ժամանակ վերոյիշեալ ճարերը բաւական չեն, այլ հարկաւոր է երակ հատանել կռնից եւ տղրուկներ կպցնել սրաբանոցին : Երբ որ նշաճեւ մսանքները այնչափ ուռչում են, որ հիւանդը ոչ թէ միայն չէ կարողանում խօսել եւ կլանել, այլ եւ դժուարանում է չնշառութիւնը, այն ժամանակ պէտք է անյապարտ ալիւնը հանել ողդակի ուռած նշաճեւ մսանքներից : Երբեմն նշաճեւ մսանքի ուռոյցը հատունանում է կամ ինքն իրան եւ կամ վերոյիշեալ ճարերի զօրութեամբ եւ բացվում է, բայց եթէ ուռոյցը հատած է եւ

բացուելը յնտանում է, այն ժամանակ պէտք է ղղուշութեամբ բանով նաշտարով :

Բժշկելուց յնտոյ, հիւանդը պիտի ամեն օր պարանոցը լուսանայ ցուրտ ջրով և թերանը շուտ շուտ ողողէ : Այս հնարքով միայն կարելի է խսիանել փողացաւի վերադարձումը որ պատահում է շատ հեշտութեամբ : Երբ որ փողացաւը յաճախ վերադառնում է, այն ժամանակ կոչվում է փողացաւ սովորական, երկարատես : Սա շատ ծանր ցաւ է: Բժշկվում է նոյնպէս վերսիշեալ գեղերով : Եթէ այն ճարերը չեն օդնում, այն ժամանակ պէտք է կարծել, թէ այս ցաւը պատճառում են որիշ հիւանդութիւններ, զոր օրինակ յօդուածացաւ, յօդացաւ, Գաղղիական ախտ, խուլ և այս ցաւերին համեմատ պէտք է ուղղել զարժմանելը :

ՀԱԳԱԳԻ ՓՈՂԱՅԱԿԻԾ ԿԱՄ ՊԱՐԶ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

ՀԱԳԱԳԻ (HARYNQITIS)

Այս հիւանդութիւնը է հաղաղի բորբոքումը: Հաղաղը, որ է շնորհափառութիւնը կամ խոչափողի գլուխը կատարումէ երկու երեւելի՝ պաշտօնաներ մարդի համար, նրա միջոցով և առաջնորդութեամբ օղը թափանցաւմ է թոքերի մէջ և մի և նոյն ժամանակում նա գործարան է ձայնի, ուրիմի և խօսքի: Վասնորոյ այս գործարանի հիւանդութիւնները շատ վտանգաւոր են և պահանջում են մի անյապաղ և փութաջան ապաքինութիւն :

ՆՇԱՆՆԵՐԸ

Հիւանդը զգում է ցաւ խոչափողում (պողազում), բայց սեղմնող ցուրտ չէ սաստկանում, կլանելիս չկայ ոչինչ դժուարութիւն, կտոր շատ սակաւ: Ճայնը սկզբումը լինում է կերկերեալ (խանձուած) և յնտոյ կտրվում է: Հնչառութեան դժուարութիւնը երեւում է խելոյն ցաւի սկզբումը և ցաւի խստութեան ժամանակը յառաջ է գալի հնչարդելութիւն և սրափ փղձուկ, թերանումը ցաւի նշան չէ երեւում մտիկ տաշխ, բայցի մակարեղուակի փոքրիկ ուռուցից և թեթեւ կարմրութիւնից: Հիւանդը հաղում է և հաղալիս թքում է մի խժային մածուցիկ և փրփրալից խուխ, հաղը աստիճան աստիճան սաստկանում է: Մենդը ցաւաջ յառաջ լինում է թեթեւ, յնտոյ սաստիկ:

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Այս ցաւով հիւանդանում են առասելապէս քաջօռողջ պատճիքը:

որոնց յաճախ դիմքում է խարբուխը : Արտաքին պատճառներից ներազործում են օդիջերմութեան և ցրտութեան սրբնթաց փափոխումը, ցրտահարութիւնը, զանազան արտաքին հարուածները, բարձրաձայն գոչելը և գոռալով երգելը :

ԵՐԿԱՐԱՏԵԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԼՔԸ

Հազարի սուր փողացաւը կամ բորբոքումը շատ որընթաց հիւանդութեան է, 7—8 օրից առաւելչէ տեսում: Թիթեւ բորբոքումը չէ վասնգաւոր, բայց սաստիկը շատ երկխղալի է, ըստ որում ոյս դիպուածում անկարելի է զուշակել բարի կամ չար ելքը և այս փողացաւը յաճախ վերջանում է մահով, մանաւանդ երախանց համար :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

1). Հագաղի թեթև բորբոքումը ունիչ դեղորայք չէ պահանջում բժշկութեան համար, բայց եթէ հիւանդը կամննում է ձայնի յստակութիւնը վերադարձուցանել, այն ժամանակ նա պիտի պահպանէ իրանց ցրտից, կուրծքը եւ վիղը փաթթթէ շալով, ֆլանելով և խմէ երկցիկ արդանակը կամ լանջական չայն (species pectoralis. բրցնայ չան.)

2). Սաստիկ բորբոքողականութեան և ջերմի ժամանակը հարկաւոր է շուտով գործածել յնտագայ ճարելը : Հիւանդին խմեցնել կակղցուցիչ ըմպելիք, տուղտի արմատների և խաշխաչի (միկոն) արդանակը շաքարով, երակ հատանել կոճից, 15—20 տղրուկներ դնել սլարանոյի վրայ առաջի կողմից, խաշխաչի և տուղտի կամ ուրիշ կակղցուցիչ խոտերի տաք տաք խաշուի գոլորշիքը տալ մտանել բիրանում, ամէն առաւօտ կակղցուցիչ դրեխ պատրաստել, կերակրից շատ զդուշանալ, բայցի մոխ խաշուից ամէն ուրիշ ուաելիքը արդելել : Երախանց համար բաւական են միայն 2—4—6 տղրուկներ առանց երակ հատանելու : Արևմահանութիւնը կարելի է կրկնել մի քանի անդամ, որպէս չափահանների համար, նոյնպէս եւ երեխանց : Բայց որովհնաեւ միշտ չնչարգելութեան երկիրդ կայ, վասնորոյ խոնեմութիւնը պահանջում է, որ այս ճարերի հետ միասին գործ ածուին եւ ուրիշ եւս առաւել զօրաւոր զեղորէք. այս նպաասկին համելու համար երախանցը պէտք է տալ որոշացուցիչ արմատի չարապը (Syrupus rad. ipecacuanhae) զրդալով մինչու յառաջ գայ փսխումը, խակ չափահաններին 2—4 ցորենաչափ ործածուցիչ տորտը (tart. emeticum) մի տատկան ջրի մեջ, որ ըստ բաւականին եւ փսխեցնում է եւ լուծում : Արտաքին ճարերից անշուշտ հարկա-

ուր է խարանաղեղը (Vesicatorium) որ զնում են կամ վզի վրայ կամ ծործրակի և կամ կործքի վրայ, նոյնպէս օգտակառ է բժշկական կակլեցուցիչ թանձրթանը (припарки): Հիւանդի սենհակը պլարի մնի շափառոր տաք, խոկ սենհակի օղը փոքր լնչ խոնաւ :

Այս վողացաւը իւր երկարատև ընթացքի ժամանակը պահանջում է նոյն խնամատարութիւնը և դեղօքքը, որոնք դործ են ածվում ոռ. վորական երկարատև վողացաւութեան դիպուածում, որ յասաջ բերինք վերեւումը :

ՎՈՐՈՒՓ ՓՈՂԱՑԱԿԱԾ

ԿԱՄ

ՍՈՒՏ ԹԱՂԱՆԹԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ՀԱԴԱԳԻ

(Croup. բրուժ. harinqitis Pseudo-Membranosa, anqina Polyposa, Membranacea)

Քոռուփ վողացաւը է հաղաղի սուր բորբոքումը, որի զօրութեամբ հաղաղի մաղասացն լորձիւնու թաղանթի վրայ շուտով երեւում են թանձր և ալինդ հիմքեր, որոնք կոչվում են սուր թաղանթներ և որոնք հաղաղի խոռոչը, ծակը նեղացնում են և երբեմն նաև ամենավին փակում : Եւ երբեմն մի և նոյն ժամանակում հաղաղի հետ միասին բորբոքվում են կոկորդը և խոչափողը :

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Այս վողացաւով հիւանդանում են ամեն հասակի անձննք, բայց առանձլաւին երկխայք մկան երկու տարեկանից մինչեւ եօթնամնայ հասակը : Թէպէտ այս ցաւը երեւումէ տարուան ամեն եղանակներում, բայց զարունը և աշունը աւելի յաջողում են արա տարածութեան և ջուրու և խոնու, երկիրները առհասարակ կոչվում են այս հիւանդութեան հացրենիք : Սովորաբար ցրտահարութիւնը համարվում է այս ցաւի պատահական պատճառ, բայց յաճախագոյն յասաջ է դալի առանց մի երեւելի պատճառի : Սրա տարափոխիլ լինելը հաստատ յայտնի չէ :

Ա.Բ ԿԱՆՉՆԵՐԸ ԿԱՄ ՆՇԱՆՆԵՐԸ

Ցաւը հաղագումը երբեմն այնքան ստուիլ չէ լինում, որքան ճնշումը, որ շատ նեղացնում է երկխանցը : Զայնը շատ միտիվում է, դանում է ցած, հեղձուցիչ և վնրջապէս բոլորովին կտրվում, Հաղը

դալիս է շուտ շուտ և ամէն ժամանակ մի առանձին սաստվկ սուլիլով։ Շնչառութեան ձնչումը երեւելի է։ Հաղալու կամ փախեցնելու ժամանակը հիւանդը թքում է խորի, որի մէջ լինում են թանձր աւիշկներ եւ կոչվում են սուտ թաղանթներ, որոնք երեւում են շատ անգամ նաև նշանակ մասների վրայ։ Այս սուտ թաղանթները գտանվում են միայն այս փողացաւումը։ Ստարին ծնօափ տակը երբեմն երեւում է մի ընդարձակ եւ կակտուզ ուռոց։ Հիւանդութեան խստութեան ժամանակը այս արկածները չափաղանց սասականում են։ Յանկարծ եւ յաճախ առանց ակներեւ սպտածառի հնչառութեան դժուարութիւնը շատ մնանում է, երեխայն հազարիս շուտով վեր է կենում տեղից, զլուխը բարձրացնում է եւ յետ է ձգում հնչառութիւնը հեշտացնելու համար, հնչարգելութեան նշանները յայսնի երեւում են։ Արկածների սասակութիւնը տեսում է տոլորաբար կէս ժամ, բայց երբեմն մի քանի ժամ շարունակրար, յևոյ երեխայն իրը թէ փոքր ինչ հանգստանում է, բայց մի քանի ժանակից յևոյ խստութիւնը կրկին գալիս է եւ կրկին ըմբանում է երեխին։ Տեսնը երեւում է չուտով։ Մորթը չոր է եւ ջերմ, բայց սաստվկ արկածների գալստեան ժամանակը լինում է քրանած։ Բաղկի զարկը է կարծր, արագ։ Հիւանդը ուշք ու միտքը չէ կորուսանում։ Չափահանների հնչարգելութիւնը այնպէս սասակի չէ, որպէս երեխանցը եւ նրանց հազը չունի այն օտարութի սուլիչ ձայնը, որ լավում է երեխանց հազի ժամանակը։ Այս ցափի արկածները պէտք չէ խառնել մի ուրիշ սրա նման հիւանդութեան արկածների հատ, որ կոչվում է սուտ քոռուփի կամ ցնցական փողացաւ (Pseudo-Croup, anqina Stridulosa, asthma Spasmodicum.-լօյկում է կրցու)։ Սուտ քոռուփի արկածները հիւանդութեան մկդպումը շառ թոյլն, այլ ճշնարիտ քոռուփի արկածները հինց սկզբից սկսում են սասականալ, ընդհատութեան ժամանակից նրա արկածները դադարում են, խոկ որանը շտրոնիկվում են անդադար, նրանով հիւանդի ձայնը շատ փոքր է փոխած, այլ որանով հիւանդը համարեա թէ ամեննեփն անձայն է, նրանով հիւանդի խուլի մէջ սուտ թաղանթներ չիան, բայց որանով հիւանդի խուլի առանց աւիշկների չէ լինում, որ է խոկական նշան քըռուփի փողացաւի, նա քժշկվում է միայն բնութեան զօրութեամբ, այլ սա զբեթէ միշտ մահաբեր է։

ԸՆԹԱՑՔԸ ԵՒ ԵԼՔԸ

Քոռ. փը շատ սրբնթաց եւ դժուարաբուժելի հիւանդութիւն է. տեսում է 3—9 օր։ Մահը յառաջ է գալի հնչարգելութենից։ Դժբաղդաբար հիւանդների մնձ մասը մեռանում են, վասնորոյ այս փողացաւի ժամանակը հարկաւոր են անյասլուզ աղղողադոյն դեղորայք հմուտ բժշկի ձեռուվ։

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ակերոյիշեալ ծանր արկածներից յայտնի երեւում է, որ ամէն հաստրակ մարդ չէ կարող վստահանալ զեղ տալ քրուփով հիւանդ երեխին, վասնորոյ երբ որ մի այսպիսի հիւանդութիւն պատահում է, իսկոյն հարկաւոր է մի հմտա բժիշկ հրամիրել և նըան յանձնել տադաքինութիւնը, բայց առելորդ չի լինիլ զիտել համառօտ, թէ բժիշկները որպիսի հնարներ են գործ ածում այս շարաջար փողացաւը բժշկելու համար, նըանց միջոցները որանք են :

1). Երակահատութիւնը, 2—4 տղրուկներ պարանոցի տջ ու ձախ կողմը, արեան սրուակները, կակղեցուցիչ ըմպելիքը, կակղեցուցիչ բը ժըշկական թանձրաթանը մնը պարանոցի վրայ :

2). Ործածուցիչ (tartarus emeticus. rad. ipecacuanhae. Sulphas cupri) ճարերը :

3). Քաղցր մնղիկը (Calomel) ներքուստ և արտաքտուը :

4). Երիցկի խաչուի դոլորշների ներշնչումը :

5). Խարանադիղը վզի կամ ծործրամի վրայ, կակղեցուցիչ դրեխը :

6). Հիւանդին կերտկրից եւ ցրտից շատ զգուշութեամբ պահպանելը, ջրի տեղ մանուշակի չոյ շաքարով խմեցնելը :

6). Վերջապէս եթէ այս ամէնը մնում է անօդուտ, բժիշկները բանում են խոչափողը, Այս ձեռադործութիւնը կոչվում է tracheotomy, խոչափողահատութիւն :

ԱՐԻՒՆԱՀՈՍՈՒԹԻՒՆԸ ՔԹԻՑ

(Epistaxis)

Քթի արիւնահոսութիւնը երկու տեսակ է. մինը ինքնակոյ, անկախ հիւանդութիւն և, միւսը յառաջ է զալլի ուրիշ ախտերից և է նրանց արկածը, Մենք ստորագրում ենք այստեղ միայն առաջին տեսակը, որպէս մի առանձին ինքնակոյ ցաւ, խել երկրորդ տեսակը կիյչենք ուրիշ տեղ և ուրիշ ժամանակ, երբ որ կիսուինք այն ախտերի վրայ, որոնք գրգռում են քթի արիւնահոսութիւնը :

Թէպէտ քթից արիւն զնալը մի նշանաւոր հիւանդութիւն չէ, բայց որովհետեւ երբեմն արիւնահոսութիւնը այնչափ ստականում է, որ հիւանդին վտանդի մէջ է ձգում և պահանջում է մի անյապաղ և ներդործական օգնութիւն, վասն որոյ պէտք չէ արհամարէնել տասնել այս ցաւը և նորա բժշկութեան միջոցները :

ՊԱՏՀԱՌՆԵՐԸ

Այս ցաւը առաւել յաճախ պատահում է մանուկներին քան թէ չափահամներին, մարդկանց քան թէ կանանց։ Երբեմն լինում է ժառանգական, Ռևող, խմող, ուժեղ եւ բազմարին մարդկը շատ ենթակայ են այս ցաւին։ Քթի արիւնահոսութիւնը պատահում է առաւել յաճախ գարունքին քան թէ տարու միւս նղանակներումը։ Ցղութիւնը եւ նստած կեանք վարելը, շոք ժամանակին երկար արեգակումը մնալը, մտաւոր պարապմունքը եւ ծանր մշակութիւնը նոյնպէս կարող են պատճառել այս ախտը։

ՆՇԱՆՆԵՐԸ

Քթի արիւնահոսութեան զլիսաւոր եւ միակ նշանը է արիւն զընալը քթի մի ծակից։ Արեան կորուստը երբեմն լինում է չնչին եւ ամսնեւին անվնաս, բայց երբեմն չափաղանց, 10—12 եւս առաւել ֆունտ, թեթեւ արիւնահոսութիւնը սովորաբար դադաղարդումէ մանկութեան եւ պատանեկութեան վլրջանալուց յետոյ, եւ ամէն մի երեւալիս կէս ժամից աւելի կարող չէ տեսել, բայց վասանգաւոր արիւնահոսութիւնը տեսում է շատ երկար ժամանակ, մի քանի ժամ, նաեւսմի քանի օր շատ կամ քիչ ընդհատութեամբ։

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Առհաստրակ պէտք չէ կտրել քթի արիւնահոսութիւնը, եթէ նըրանից երեւում չէ մի յայտնի մեսաս, ինչու որ շատ անդամ պատահել է որ արիւնը չուտավ դադարեցնելուց յետոյ յառաջ են եկել կուրութիւն, խլութիւն, ուղեղի բորբոքումն եւ ուրիշ ցաւեր։ Բայց եթէ արիւնը հոսում է սաստիկ, հիւանդի դէմքը դժոյն է, բազի զարկը թոյ, երեւում են թռւութիւն եւ ուշամագութիւն, այն ժամանակ հարկաւոր է արիւնը դադարեցնել յետագայ միջոցների զործածութեամբ։

1). Հիւանդի շորերի ամէն կազերը եւ կոճակները պէտք է լուծանել իրան հով անզում նստացնել կամ պարկացնել զլուխը բարձր պահելով եւ պահել տալ սաստիկ վահրէղ արիւնահոսութեան ժամանակը եւ յետոյ եւս մի երկու օր։

2). Արեան սրուակներ (կոտոշ) թուով 10—20 կպցնել ուսերի մէջ, կողերի տակ, առաւել աջ կողի, աղդերի եւ սրունից թամրի վլայ։ Սրուակներից յետոյ երբեմն կարելի է կտրատել կաշին, որ արիւն դուրս գայ, եթէ հիւանդը բազմարիւն է։ Նոյնպէս շատ օդտակար է կազել անդամները ձնկան եւ արմնիկան վերեւ։

3) Յուրա ջուր ցայտել ճամկատին եւ ցուրտ ջուր քացախով ներսըր-սըկել քթումը : Յուրա ջրի մէջ թրջած բարձիկներ դնել ճակատի եւ ամորձեաց վրայ, խոկ կանանցը ծծերի վրայ : Երբեմն քթի արինա-հսութիւնը շուտով ղաղարվում է կոլի կոթը ներսրսկելով քթումը :

4). Բամբակից շինել մի փոքրիկ զնդակ, թրջել թանաքի մէջ եւ զնել քթումը : Հալած սպազլեղի մէջ թրջել ստարոյզը (փիլթայ) եւ կոսինել քթի ծակումը : Այս ճարերը շատ օդատակաբ են : Եղյալէս շատ լաւ դեղ է Արարիոյ խէժը, սրա փոշին դրչով փչում են քթումը եւ արինը երբեմն նոյն բոսկին կորիլում է :

5). Կայ մի եւս սլարդ եւ հեշտ միջոց արինահոստթիւնը դոդարել ցնելու համար, հիւանդը բարձրացնում է երկու ձեռները դիի վրա կամ այն ձեռը միայն, որ կողմից որ արինը հոսում է եւ մի քանի բո-պէից յետոյ արինը կորվում է :

6). Եերքին ճարերից հիւանդը պիխի խմի միայն թթուաշ եւ զովայ ցուցիչ ըմպելիք, լիմոնադ (օշարակ լիմոնից) կրէմու թառթառը (մո-լիք գինուոյ) ցուրտ ջրով եւ ուրիշ սրանց նմանները :

Թ.ՔՈՒՄՆ ԱՐԵԱՆ (haemoplysis. կրոխարեկանէ)

Այս ցաւի անունը ինքը ցոյց է տալի թէ ինչ է թքումն արեան, վասնորոյ սահմանելը աւելորդ է : Հին հեղինակները բամբում ին սրան շատ տեսակներ, բայց այժմեան բժիշկները ընդունում են միայն սրա երկու տեսակները, թքումն արեան ինքնակայ, անկախ եւ թքումն ար-եան արկածեան : Առաջին տեսակը սրատահում է շատ հազվա զորօրինակ մարդի բարձր սարերի վրա ելանելու ժամանակը եւ երբեմն որպէս ու-րիշ ախտերի փոխարէն եւ ոչինչ նիւթական՝ փոփոխաթիւններ չէ յա-ռաջ բերում, այլ երկրորդ տեսակը մի յաճախ եւ ովորական ախտ է, եւ որ թէպէտ յառաջ է գալի միշտ թոքերի, սրափ եւ ուրիշ զանազան հիւանդութիւններ, բայց սպահանջում է առանձին խնամատարութիւն եւ բժշկութիւն որպէս մի ինքնակայ հիւանդութիւն անկախ զլխաւոր ցա-ւըրից :

ԱՐԿԱԾՆԵՐԸ ԵԽ ՆՇԱՆՆԵՐԸ

Արեան թքանելը գուշակող նախնթաց նշանները են, ձեռների եւ ուսների ցրտութիւնը, երեսի տժգնութիւնը եւ կամ երբեմն կարմրու-թիւնը, խոնջութիւնը, ջերմութիւնը, ձգտումն ծանրութիւնը կրծում, ցաւը ուսերի մէջ, դժուարաշնչութիւնը, թեթեւ չոր հազը, աղի կամ սակաւինչ քաղցր համը բերանում, զլխացաւութիւնը, սրափ բարակինը եւ միզի տժգնութիւնը : Այս արկածներից մի քանի ժամանակ յետոյ կամ երբեմն նաեւ առանց նախագուշակ նշանների երեւում է արինա-

հուսութիւնը հազարիս կամ թքելիս առաջին դիպուածումը արինը հասում է թոքերից իսկ երկրորդումը չնչառութեան ճանապարհներից եւ յառաջէ գուլի յանկարծ առանց նախնթաց արկածների : Երբեմն արիւնահոսութիւնը այնչափ սաստիկ է, որ արինը հոսանքի պէս դուրս է գալի ոչ միայն բերանից այլ և քթից : Արեան որքանութիւնը դրէթէ ովհնչ նշանակութիւն չունի : Գլխաւոր բանը հիւանդութեան պատճառն է հիւանդի լաւ կամ վաստ կագնուածը : Առաստ արիւնահոսութիւնը չէ երկրութալի թէ որ ցաւը յառաջ է եկել թթախսութիւնից եւ հիւանդի կուրծքը ունի քաջառողջ կազմուած, բայց եթէ հիւանդը թոքախսութեան կազմուածքի տէր է նաև սակաւ թքումն արեան եւս կարող է լինիլ վունդաւոր եւ մահաբեր : Արեան դոյնը կամ վարդագոյն կարմիր է եւ կամ թուխ : Առաջին դոյնը նշանակում է արիւնահոսութեան շարունակութիւնը, այլ երկրորդը յառաջ հոսած եւ մնացած արինը որ այժմ դուրս է գալի հաղի հետ :

Արեան թքելու ժամանակը դրէ թէ ոչինչ երկիւուղ չդայ . հիւանդութիւնը երկիւզալի է իւր հետեւանքներավ թոքերի բորբռքողականութեամբ և թոքախսութեամբ (բարակացաւ) : Բայց մնձ չնչերակի (շահ տամարի) ուռուցի ճաքուիլը (anevrisma) պատճառում է մահ :

Առասորին արեան թքելուց յետոյ հիւանդի խոնջութիւնը, երեսի տժգութիւնը եւ թուլութիւնը մնում են երկար ժամանակ :

Այս ախտի ընթացքը անհաստատ է եւ անկանոն : Երբեմն արիւնահոսութիւնը դադարենուց յետոյ մի քանի ամիսներ նաև տարիք, չէ երեւում, երբեմն երկար ժամանակ ամէն օր վոքք վոքք հոսում է արինը : Երբեմն լինում է պարբերական, եթէ կախած է դաշտանի ընդհատութիւնից եւ վերջապէս երբեմն ընդհատական, որ երեւում է միշտ մի եւ նոյն ժամանակում ինչպէս ընդհատ տենդը :

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ս. Այս ցաւի հնթակայ են պատանի մարդիկ սկսած 15 մինչեւի 35 տարեկան հասակը : Երկիւսայքը դրէթէ ոչ երբէք չն հիւանդանում այս ախտովլ : Բայց ծերերին երբեմն պատահում է : Բարձրածայն դողսումը, երկեցողութիւնը հարբեցողութիւնը, հանդային դողսոիչ դոլորչների ծծելը չնչառութեամբ, կարող են երբեմն պատճառել թքումն արեան : Եթէ հիւանդի թոքերը կամ չնչառութեան միւս դործարանները վատառողջ են եւ տկար : Սովորական արիւնահոսութեան եւ երակահպառւթեան ընդհատութիւնը համարվում է յաճախ արին թքելու ներդործական պատճառ : Թքումն արեան կարող է յառաջ զալ խոչափողի եւ թոքերի պալարից եւ խոցից, սրախ դանաղան ախտերից եւ առաւելապէս աւագ չնչերակի (Aorte, շահ տամար) ուռուցի (anevrismə)

ճղքուելուց : Առ հասարակի թքումն արեան կտրող են պատճառել այն ամենայն գործողութիւնները որոնք շուապեցնում են արեան շրջանը եւ հաւաքում են արիւնը թռփի մէջ : Այսպէս արեան թքումն պատճառում է վավաշոտ մերձաւորութիւնից, սասարիկ կրից, մեծարշաւ վաղից, զուրնա փչելուց և այլ այսպիսի գործերից :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Թքումն արեան մի երկիւղալի հիւանդութիւն է. որի ընդդիմթէպէտ երեւելի հեղինակները շատ անդամ զովել եւ փառաւորել են շատ զեղորայք, բայց դժբաղսարար չկայ մի յատուկ ներդործական դեղ այս ցաւը բժշկելու համար վասնորոյ մենք յառաջ կրերենք այս տեղ միմիւայն այնպիսի հասարակ եւ պարզ ճարեր, որոնց միջոցով ամէն խոհեմ մարդ կարող է համարեան թէ այնքան օգուտ բերել հիւանդին որքան քժիշկը իւր բաղսորեալ գեղերով :

(1) Հարկաւոր է ամենից յառաջ տվյլորել հիւանդին եւ պառկեցնել զեղոաշորումը զլուխը բարձր պահելով. սենեակի օղը պիտի լինի բարեխառն, հիւանդը պետք է իրան պահպանել խօսելուց կերակրից եւ մընալ անշփոթ, հանդիսաւ հոգով և մարմնով, կերակուրը պիտի լինի կաթնեղէն, խմորեղէն, խաշած եղինջը, մոփ թեթեւ արգանակը եւ որթուստները. իսկ ըմպէլմն կաթի չիչովելը, դարու խաշուն եւ յոնասի ջուրը, Ոլուլայնը լոյծ պահել մնոմ եւ զովացուցիչ զրեխով եւ թեթեւ լուծովականուուլ :

(2) Ախտի երեւելուց յետոյ իսկոյն հարկաւոր է անշուշտ երակ հատանել ձեռից, Եթէ արեան թքումն յառաջէ նկել զաշտանի ընդհատութիւնից, այն ժամանակ կարելի է արիւնը հանել ոտից : Արեան չափը պիտի լինի համաձայն հիւանդի դօրութեան եւ ցաւի սաստկութեան : Երբեմն աւելի լաւ կլինի եթէ արիւնը հանուի մի քանի անդամ եւ քիչ քիչ, մի մի հասարակ ստական երկու երեք անդամ մի օրուան մէջ : Արիւն հանելուց յետոյ օգտակար է դնել մանանխոյ սպեղանին ուսերի մէջ անդումը :

(3) Խմնլու դեղերից օգտակատ են յետագայքը. մի մախալ պաղլեղի չորրորդ մասը խառնել երկու մսխալ Ալբարիոյ խէժի եւ նոյն չափ եւս շաքարի հետ. այս խառնուրդը 12 հաւասարաչափ բաժին անել եւ հիւանդին խմնցնել օրը չորս բաժին նոյնպէս շուտով դադարեցնում է արեան թքումն, եթէ ամէն մի քառորդ ժամ հիւանդը ուտէ մի մի չափ զըրգալ հասարակ աղ վրան քիչ քիչ չուր խմելով : Ափիսնը եւ մոլիխնողը շատ օգտակար են այս ցաւի ընդդէմ, բայց առանց բժշկի հարկ չէ վատահանալ զործածել այսպիսի զօրաւոր զեղեոը : Ործածուցիչ առարջ եւ արմատը /tartarus emeticus et rad. ipecacuanhae/ զովիլի ճարեր են այս

ցառի մէջ, չորս դարեհատ տորտը հալել մի ստական նշի կաթնուամբ և խմեցնել հիւանդին կէոը միանգամ եւ միւս կէոը մի ժամից յետոյ, Աբ-մատը խմեցնուամ են ջրով 20-40 դարեհատ մի անգամ, Եթէ հիւանդը սասափի հազում է, այն ժամանակը կարող են օգուստ թերել կտաւա-հատի ձէթը, նշի կաթը եւ մնողը, Եթէ արխանահոսութիւնը չափաղանց առատ է, այն ժամանակ կտրելի է զործ ածել պաղ ջուրը, որպէս խը-մեցնելով նոյնպէս եւ թշչած երեսրբիչ դնելով կուրծքի եւ առորձեաց պարկի վրա, եւ անդամները կտպել ինչպէս քթի արեան դնալու ժա-մանակը, ձեռները կապում են արմուկի այլ ոտները ծնէկրու վերեւ:

(4) Եթէ թքումն արեան յառաջ է զալի փոխարին սովորական արիւ-նահոսութեան, դաշտանի, թթախտութեան եւ քթի արեան, այն ժա-մանակի յառաջադոյն հարկատոր է աստրինել այս ախտերը, Դաշտանը կտմ ամսուկան արիւնահոսութիւնը կտրելի է ուղղել տղրուկներ կտղրներով, կանանց ծննդական անդամների վրա, ոտները զաղջ ջրի մէջ դնելով եւ զրեխ պատրաստելով ։ Թթախտութեան արեան ընդհատութեան դիպ-ուածում տղրուկները կայնում են արրանի չորջ (anum) խակ քը-թի արիւնը գագռելու համար՝ ռնդունքներին, եւ տալիս են հիւանդին փոշտեղուցիչ ճարեր, Եթէ սրեան թքումն ունի պարբերական ըն-թացք, այսինքն զաղարելուց յետոյ երեսում է միշտ մի եւ նոյն ժա-մում եւ ժամանակում, այն ժամանակ հարկ է զործածել քինաքինայի աղը, որպէս ընդհատ տենդի դիպուածում:

(5) Արիւնահոսութիւնը զտղարելուց յետոյ առողջացած երկար ժա-մանակ պիտի պահպանէ իրան զժուարամարսելի կերակրից, ամէն տեսակ ողիաւոր խմիչքներից, կրքերի շարժութիւնից եւ այն ամէնից որ բորբքում է եւ չփոթում արիւնը, Շատ օգտակար է էծի կաթը խմել միշտ, ձիով կամ կառքով դրունուլ, որովայնը լոյծ պահել եւ երեք ամիսը մի անգամ երակ հատանել,

ԿՇՏԱՑԱԽՈՒԹԻՒՆԸ

(pneumonia, peripneumonia, plevritis).

Թռքերի եւ լանջամաշկի բորբքումն (pneumonia et ple- vritis) հայերէն մի բառով կոչվում է կշտացաւութիւն, բայց երկու դասական տեսակ հիւանդութիւններ են, Հին թժիշկները անդամազն-նութեան քաջ տեղեակ չլինելով չեն կարողացել ճշտիս որոշել թռ-քերի բորբքումն լանջամաշկի բորբքմանից եւ այս երկու տեսակ ախ-տերը խառն ստորագրելով շփոթել են միմիանց հետ, Սենք նորագոյն և դիմուկներին հետեւելով այս երկու տեսակ կշտացաւութեան արկած-

ները, ընթացքը եւ ապաբինութիւնը նկարագրում ենք ջոկ ջոկ առա-
մել պարզ համկանալու եւ առաւել ուղիղ բժշկելու համար եւ յառաջ
յառաջ կիսուինք թոքերի բորբոքման վրա եւ յևոյ լանջտամաշի:

ԹՈՒԲԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

(pneumonia, peripneumonia)

Այս բորբոքումն կամ կշտոցաւոթիւնը պատահում է յաճախաղոյն քան
թէ մարմինի ուրիշ ընդերքների բորբոքումը եւ դատվում է երեւելի եւ ծանր
հիւանդութիւնների շարքումը:

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Թոքերի բորբոքումն պատահում է ամեն հասակում, բայց այս ցա-
ռով հիւանդանում են յաճախաղոյն մարդիկ քան թէ կանաչք ըստ որում
շատ անդամ յառաջ է զալի նրանց կենաց վիճակից եւ դորձերից, վաս-
նորոյ այս հիւանդութիւնն ենթակայ են առաւելապէս որմնադիրները
(կալատոս, բանայ), քարտաշները, մշակները, հացադորները եւ
առ հաստրակ այն ամենայն անձինքը, որոնք անդադար սաստիկ ծա-
նոր աշխատութեան մէջ են եւ չեն կատարում առողջութեան կանան-
ների հարկաւոր պայմանները :

Այս կշտոցաւոթիւնը երեւում է ամեն կլիմաներում, բայց յաճախա-
ղոյն ցուրտ եւ բարեխառն կողմերում, քան թէ ջերմ: Նոյնպէս յաճախ-
է գարունքին, աշունքին եւ ձմեռն: Վերջապէս յառաջ մի անդամ պա-
տահած թոքերի բորբոքումն կարող է պատճառել երկրորդ եւ առաւել
անդամ: Պատահական պատճառներից զվասարները են հարուածները,
թոքերի, վիրաւորումն, մարմնոյ ամեն վեաները: Բայց այս պատ-
ճառներից պատահած բորբոքումն այն քան վտանգաւոր չէ, որքան ինք-
նազմուխ յառաջ եկածը: Նոյնպէս զօրաւոր պատճառներ են ցրտահարու-
թիւնը, ողիսաւոր հեղանիւթների չարաչար դործածութիւնը, երգեցողու-
թիւնը, բարձրաճայն աղաղակը, ցրաւաղոյն հողմի դէմուդէմ սրնթաց
արշաւանքը:

ՆՅԱՆՆԵՐԸ

Հիւանդը առ հաստրակ յառաջ յառաջ զդում է անառողջութիւն,
ախորժակի պակասութիւն, թուլութիւն, վհատութիւն, մէջքի ցաւ, ցր-
տութիւն եւ դող, երբեմն միմիայն ջերմութիւն կամ դող առանց այլ
նախազուշակ նշանների: Երբեմն կրծոյ արկածների երեւելուց յառաջ

լինում են գլխացաւութիւն, անդամների ծանրութիւն, անախորժակութիւն, սրտի խառնակումն, փախումն. իսկ մի քանի հազուադիւտ զիսդաւածներում նաև ցնորումն:

Անեւորները երբեմն ցաւի սկզբումը, ոչինչ արկածներ չեն զգում, բայցի անձկութիւնից եւ թուլութիւնից, Երեխանց կշացաւը զուշակում են անհանգստութիւնը, ջերմութիւնը եւ արագ չնշառութիւնը: Անա սրոնք են թռքերի բորբոքման նախադրչակ արկածները եւ նշանները:

Բայց երբոր հիւանդութիւնը երեւում է, այն ժամանակ հիւանդները ըզդում են յետազայ նշանները. մի խայթից ցաւ ծծի պտուկումը եւ կըրծումը որ զօրանումէ առաւել եւս չնշառութեան եւ հաղի ժամանակը. զժուարաչնչութիւն, որ երբեմն սաստկանումէ մինչեւ չնշարդելութեան աստիճանը: Հաղը մի հաստատուն նշան է եւ շատ զիսպուածներումը լինումէ հիւանդութեան սկզբումը: Հաղալիս թքած խուլը ըստ մնծի մասին լինում է մածուցիկ եւ զանազան ռանգով, երբեմն կղմնուրի, ժանկի նման, երբեմն լամոնի, զավրանի եւայլն:

Ցենդրկամ մնումէ մի եւ նոյն աստիճանի վրա, լինակէս էր հիւանդութեան սկզբումը, կամ սաստկանումէ, բազկի զարկը լինումէ լի, արագ, լիզուն ճերմակ եւ ծածկած խժային հիւթով. ծարաւը սովորաբար սաստիկէ: Երբեմն լինում են անքնութիւն, անհանգստութիւն դիշերով եւ ուշաթափութիւն. թուլութիւնը միշտ կայ: Հիւանդները սովորաբար պատկումն միջփի վրա, մանաւանդ եթէ արկածները չառ սաստիկ են: Եթէ հիւանդը ըստ կսում է առողջանալ, այն ժամանակը տաքութիւնը պակասում է, անհանգստութիւնը եւ անքնութիւնը կորչում են, հաղը թեթեւանում է, թուքը ճներմականում եւ կողի ցաւը ոչնչանում: Բայց անյաջող զիսպուածում նշանները մնում են մի եւ նոյն աստիճանի մէջ, բայցի ցաւից, որ սովորաբար կորչումէ մահուան ժամանակը, բայց չնշառութիւնը եւ խուխի դուրս գալը առաւել եւս զժուարանում են:

Այս կշտացաւութիւնը լաւ ճանաչելու համար ամէն վերցիշնալ նըշաններից առաւել թանգարինը եւ առաւել ստոյզը է ականջով լսելի նըշանը: Եթէ հիւանդութեան սկզբումը այն տեղ, ինչ տեղ որ հիւանդը զդում է ծանրութիւն եւ ցաւ, որ է սովորաբար թռքերի ստորին մասները, ականջ դնել մատարիստեամբ, այն ժամանակ հմուտ ականջ զընդը կլսէ, որ չնշառութեան խշխչալի ծայնը փոքր ինչ նուազել է եւ նորա փոխանակ լսվում է մի առանձին տեսակ ձայն ճայթիւն, (rhonchus crepitans, râle crépitant sec) որ նման է կրակի վրա ածած ազի տրաքտրաքոյի ձայնին: Այս ճայթիւնը հիւանդութեան սաստկութեան ժամանակը, այն չափ բարձրանումէ, որ թռքերի կամ չնշառութեան խշխոցի ձայնը բոլորով լին խլացնում է: Մի քանի ժամանակից յետոյ այս ճայթիւնը կորչումէ, այլ եւս չէ լսում, եւ եթէ միտսին և չնշառութեան բանական ձայնը վերադառնումէ կրկին, այն ժա-

մանսակ նշանակումէ որ հիւանդը սկսումէ առ ողջանալ, բայց եթէ շնչառովմեան ձայնը լսում չէ, այն ժամանակ թոքերը կտրծրացիլ պընդացել են լերդի նման (hépatisation rouge), Կայ մի այլ եւս միջոց ճանաչելու այս կշտացառութիւնը եթէ մի ձեռի մատները դնել կրծոյ այն տեղի վրա, ինչ անդ որ հիւանդը դում էցաւ եւ միւս ձեռի մատներով զարդել, այն ժամանակ կրծոյ ստոխտակը հանում է մի խուլ արձագանքի ձայն, բայց այս նշանը հիւանդութեան առաջին օրերումը չէ լինում:

Վերջապէս այն դիպուածներում, ինչ անդ որ ոչ ունինդրութիւնը եւ ոչ զարկումն (auscultatio et percussio) օգնում չեն, այն ժամանակը ցաւը ճանաչելու համար բառական են նախնի բժըշկների վերայիշեալ նշանները :

ԲԵԹԱՅՔԸ ԵՒ ԵՐԿԱԲԱՏԵՒՌԻԹԻՒՆԸ

Թթաքերի բարբառքումն ստվորաբար արագնթաց է. շատ անդամ տառիլանումն է երեկոյեան պահին եւ թիթեանումն է առաւօրը. երբեմն լինում է ընդհատ մանաւանդ ճախճախուտ երկիրներումը :

Այս կշտացառութիւնը ստվորաբար տառներկու օրից առաւել եւ եօթըն օրից պակաս չէ առևում, եւ վերջը ըստ մեծի մասին բարի է, բայց շատ անդամ երեխանց եւ ծերերի համար լինում է վասնգասոր :

ԲԺՇԿՌԻԹԻՒՆԸ

Ցառաջ յառաջ հարկաւոր է երակ հաստանիլ, Երեխանցը մինչեւ ութը տարեկան հասակը երակահատութեան փախորէն կտրելի է դնել ազդումներ, արեան սրուակներ եւ կակգեցուցիչ թժշկտկան թանձրաթան կրծոյ վրայ, Թեթեւագոյն դիպուածներումը երակահատութիւնը աւելորդ է, այլ պէտք է գործ ածել կակգեցուցիչ եւ զովացուցիչ ըմպելիք, զորորինակ Աբարիոյ խէժի խաչուն, զարու խաչուն չաքարով, նիփ կաթը, սալեպը, մոլոչը, խաշխաշը եւ որիշ սրանց նման ճարերը :

Արինը պարտ է հանել 8—12 ունկի կոնֆց, երբեմն հարկաւոր է կրկնել արինահանութիւնը երկրորդ եւ առաւել անգամ, Արինահանութեան յետոյ խկոյն պէտք է տալ հիւանդին ործացուցիչ տորաը (tartarus emelicus), որ այժմ կշտացառութեան դիպուածումը համարվում է ամէն ճարերից օպտակարադոյն, Այս գարեհատ (գրան) տորաը պարտ է հալել երկու ունկի նարինջի ջրում եւ կէս ունկի շարապում եւ ըմպել ամէնը մի անգամ, Հիւանդը պիտի ընդունի այս դեղը վից անգամ ամէն երկու երկու ժամ մի անգամ, յետոյ պիտի սպասի 7—8 ժամ, եթէ հիւանդութիւնը այնքան զօրաւոր չէ. բայց սաստիկ դիպ-

ուածում, աշն ճարդը պլիսի չարունակուի նոյն կարգով մինչեւ վթիթեւան զլխաւոր արկածները, Աթէ այս դեղը պատճառում է որովայնաւլութիւն, այն ժամանակ նրա հետ պէտք է խառնել մի զարեհատմելոն (extr. opii) կամ մի ունկի խաշխաշի չարապ (syg. diacodii).

Ուրիշ ճարկը եւս շատ կան այս հիւանդովիթիւնը բժշկելու համար, բայց որովհետեւ նրանք այնքան ներդործական չեն որքան արկանահանութիւնը եւ ործացուցիչ տորտը, վասնորոյ հարկ չէ աշազի վետամնդաւոր դիպուածում ստոյդ դեղերը բաց թունել եւ գործածել երկրայելի դեղորայք:

Հիւանդը պլիսի զդուշանայ դժուարամարուիլի եւ մնացանող կերակուրներից, ունենակի օգը պլիսի լինի բարեխառն, ոչ աւելի քաքք, ոչ աւելի ցուրտ և Առողջանալուց յետոյ հիւանդը մի քանի ժամանակ պլիսի դործածի կամթի շիջուկը եւ իզլանդիոյ մամուռը (Lichen islandicum):

Բայց կան կշտացաւութեան մի քանի տեսակներ, որոնց համար այնքան օգտագույն չեն վերոյիշեսլ երակահատութիւնը եւ ործացուցիչ տորտը, Այս տեսակներն են ընդհատ կշտացաւութիւնը, որ պարտ է բժշկել քինաքինով ինչպէս ընդհատ տենդը և Մաղսային կշտացաւութիւնը պահանջում է չափաւոր արինահանութիւն, ործացուցիչ լուծողական դեղորայք եւ գրեխ, խակ ջղային կշտացաւութեան դիպուածում երբ որ հիւանդի ուժը չափազանց թուլացած է, օդտակար են երեցուկի խաշուն քենապի շարապով, մի քանի դրզակ աղնիւ գինի:

Մնում է մեզ խօսել մի երկու խօսք երկարատես կշտացաւութեան կամ թոքերի երկարատես բորբոքման վրայ, որ բարերադրաբար պատահում է հաղիս երբեք եւ համարեամ թէ տուանց յայսնի պատճառի, Սովորաբար պարզ, թեթեւ բորբոքումն փոխանակ առողջանալու, արկար կազմուածի տէր մարդումը չարուճակարար տեւում է երկար ժամանակ, կամ երեք տամիս եւ զժբաղդաբար դրեմթէ միշտ վերջանում է մահով, Այս աղէտալի ցաւը կարելի է ճանաչել յետազայ նշաններով, Սուր բորբոքման թեթեւանալուց յետոյ հիւանդը սկսում է օրէ ցօր նիհարանալ, հալլիլ ու մաշլիլ եւ դեղերը ոչինչ չեն օկնում, Այս ցաւը բժշկելու համար հարկաւոր է հմուտ բժիշկ, բայց ամէն դեղորայք շահաւէտ է տաք տաք աղանձնելը եւ տաք կլիմացում կենալը,

ԼԱՆՁԱՄԱՇԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ (pleuritis)

Լանջամաշկի բորբոքումն նոյնպէս երեւելի հիւանդութիւն է, թէ պէտք ոչ այնքան վտանգաւոր, որքան թոքերի բորբոքումն եւ պատահում է շուտ չուտ, Այս կշտացաւք յառաջ է զալի զիւաւորապէս ցըրտոյ երկարատես ներդործութիւնից տաքացած կամ քրտնած ժամանա-

կը, թափանցիկ հողմից, տաք անդից յանկարծ ցուրտ անդ ման! լուց եւ շատ ցուրտ ջուր կամ ուրիշ խմիչք զործածելոց :

ՆՇԱՆՆԵՐԸ

Հիւանդը յառաջ յառաջ զդումէ դող եւ յետոյ շուտով մի անտառնելի սաստիկ խայթից ցաւ, խիթք մի որ եւ իցէ կողմի ծծի տակը : Այս խիթքը լինում է երբեմն միասին զողի հետ : Սրանց յետոյ շատ շուտ երեւում են հաղը, որ է ընդ մեծի մասին չոր, եւ չնչառութեան գժուարութիւնը, ձայնը չէ փոխվում : Բորբոքութիւնից յանջամաշկը լցվում է հեղանիւթով եւ այս հեղանիւթի ներկայութիւնից կրծոյ ցաւագար կողմը երեւում է փոքր ինչ լայնացած : Կրծոյ հիւանդ կողմը զարկելով, բարախելով լսվում է մի խուլ ձայն, իսկ ականջ զրած ժամանակը չնչառութեան խշխոցը չէ լսվում կամ շատ թոյլ անսովոր ձայն է դուրս դալի : Մի ականջով լսելիս միւս ականջը պէտք է իցիլ, որ աւելի լաւ լսվի :

Այս նշանների հետ միասին թէպէտ լինում են եւ սրտնեղութիւն, ջերմ, անախորժակութիւն, ծարաւ, դիխացաւութիւն, բայց ոչ այնքան դորաւոր որքան թոքերի բորբոքման ժամանակը :

Այս ցափ ընթացքը արագ է, առաջին արկածները ըստ մեծի մասին անհետանումն երեք կամ չորս օրվան մէջ : Բայց հիւանդութիւնը տեսում է 14—16 օր : Վերջը համարեած թէ միշտ բարի է, եթէ հիւանդը չունի սրա հետ միասին եւ ուրիշ երեւելի ախտեր :

ԲԺԿՈՒԹԻՒՆԸ

Արիւնահասութիւնը թէ երակահանութեամբ, թէ տղրուկներով, եւ թէ սրուակներով այս տեղ եւս հարկաւոր է, որպէս թոքերի բորբոքման ժամանակը : Արիւնահանութեամ յետոյ շատ օգտակար են կակլեցուցիչ ճարերը, մոլոշի կամ բաղրջուկի եւ տուխտի խաշուն, մանուշակի չայն եւ այլն, Սրանց հետ միասին հարկաւոր է խմեցնել կէս դարեհատ ափիոն հաղը պակասեցնելու եւ հիւանդին հանգստացնելու համար : Եթէ հիւանդի որովայնը կապ է եւ ջերմը զօրաւոր, այն ժամանակ երակահատութեան յետոյ կարելի է տալ ործացուցիչ տորաը փսխեցնելու եւ լուծելու համար : Այս պարզ դեղերը բաւական են լանջամաշկի բորբոքումն ապաքինելու համար :

ԹՈՒՔԱԽՏՈՒԹԻՒՆԸ phthisis ռախոտքա.

(Բարուակացաւ, սիլ, ճերքութիւն, մաշարայական ախտ, ծիւրական կամ հիւժական ախտ, նուրբ ախտ) :

Թոքախտութիւնը յառաջ է գալի մի առանձին տեսակ խաղաւարուներից, ուռուցներից (touberculae նցորք), որոնք ծագում են թոքերի մէջ։ Շատ որոդայթաւոր հիւանդութիւն է։ Այժմեան վիճակագրական հաշուով ընդհանրապէս մնծամնծ քաղաքներում մեռանողների չորրորդ կամ հինգերրորդ մասը է այս ցաւով։

ՊԱՏ ՃԱՌՆԵՐԸ

Թէպէտ բարակացաւով հիւանդանում եւ մեռանում են ամէն հասակի մարդիկ, բայց հասարակօրէն մնծ մահկանացութիւնը լինում է քսանից մինչեւ քառսատոն տարեկանների մէջ։ Կանայք առաւել ենթակայ են այս ցաւին, քան թէ մարդիկ։ Մարմնի ակար կազմուածքը, նեղ կուրծը, շուտ շուտ ցրաւանարութիւնը, երեսի դժգունութիւնը եւ թշերի չափաւոր կարմրութիւնը ցոյց են տալի միտումն զէպի այս ցաւը։

Յած տեղերը, ջերմ երկրից ցուրտ եւ խոնաւ երկրի դնալը, զարունը, ձմեռը, վատ անմարսական կերակուրները, մթին եւ խոնաւ քնակարանը, ամէն տեսակ աւելորդութիւնը, անշափաւորութիւնը, հիշտասիրութիւնը, սերմահևղութիւնը, կրքերի տանջումն, թողի եւ զանադան կազերի չնչառութեամբ ընդունելութիւնը, կշտացաւութիւնը եւ ժառանգական հակասիտութիւնը, համարվում են թոքախտութեան զօրաւոր պատճառներ, Սրա տարափոխիկ վնելը այժմ անընդունելի է բոլորովին։

ՆՇԱՆՆԵՐԸ

Վերեւումը ասացինք թէ բարակացաւը պատճառում են թոքերի մէջ ծնած մի առանձին խաղաւարտներ կամ պալարներ։ Այս խաղաւարտները յառաջ յառաջ խալ են, տհաս, վիրջումը կակդում են, հասունամնում են եւ նրանցից կաթում է հիթ, բլղամ։ Այս պատճառով այժմեան երեւելի հեղմնակները թոքախտութիւնը բաժանում են միայն երկու շրջան կտմ տատիճան։ Առաջին աստիճանի նշանները պատկա-

նում են խակ խաղաւարաներին, երկրորդ աստիճանինը կակդացածներին, բացուածներին :

Թոքախտութեան առաջին աստիճանի կամ շրջանի նշանները :

Բարակացաւը սկսվում է հասարակօրէն հանդարտ, ստկաւ, սակաւ, ծածուկ, զողի պէս և. բառ մեծի մասին առանց յայտնի պատճառի, Յառաջ յառաջ երեւում է մի թեթեւ, բայց յամառ հազ, խարբուխի նման. այս հազը սկզբումը չոր է եւ այս յատկութիւնը պահում է երբեմն մի քանի ամիս, բայց մի սակաւ ժամանակից յետոյ սովորաբար հազալիս դուրս է գալի թուփի նման մի փոքր փրփրալց եւ յստակ բլղամ եւ հասարակօրէն սատկանումէ դիշերով, Պատահում է երբեմն, որ բարակացաւը իւր առաջին շրջանից անցանում է դէպի երկրորդը ամեննեին առանց հազի, որ սկսում է երեւիլ հիւանդի կինդանութեան վերջին օրերումը Երբեմն բլղամը դուրս է գալի առատ, թանձր տժդոյն եւ ոչ այնքան պարդ, բացի հազից հիւանդը զդում է թուլութիւն, երբեմն կրծոյ դաւ, ճնշումն, դժուարչնութիւն մանաւանդ բարձր տեղ կամ սանդուխիքի վ բայ ելանելու եւ կամ որիշ տեսակ աշխատանքի ժամանակը, եւ սկսում է նիհարանալ եւ դիշերները քրտնել Մի քանի դիմուածներում այս արկածները այնքան թեթեւ են, որ հիւանդը ոչ ինչ չէ զգում, բայց երբ որ, հազի դժուարաչնութեան եւ բլղամի հետ միասին երեւում է եւ սաստիկ թքումն արեան, այն ժամանակ այս նըշանը աներիրաց յայտնում է թոքախտի սկիզբը, թքումն արեան երբեմն սաստիկ է եւ երբեմն միայն բլղամն է արիւնախառն :

Կրծոյ բարսխումն եւ ունկնդրութիւնը (percussio auscultatio) տալիս են մեզ թանգաղին նշանները այս ախտը ճանաչելու համար :

Բարախելու կամ դարկելու ժամանակը կրծոյ վրայ, մի անդակի եւ կամ երբեմն երկու անրակների տակ եւս միասին (վզի առաջի ոսկորները կլոչուց clavicula), նկատվում է մի թոյլ եւ խուլ ձայն, որ ամեններին նման չէ առողջ դրութեան ձայնին, եւ որքան ցաւը յառաջ է զընում, այնքան ձայնի խլութիւնը առաւել նշմարվում է եւ ուրիշ տեղերում կրծոյ վ բայ, Ունկնդրութեան ժամանակը չնչառութեան խշխըշոցը նուաղ է եւ այլայլած, իսկ այս շրջանի յեաին օրերումը լսվումէ փուքսի ձայն թեթեւ տրաքտրըքոց (rhomchus crepitans) խորդալու, խուալու ձայն (rhomchus sonorus), մի առանձին նուաղ արձագանք իբր թէ դուրս է գալի թոքառաջլց կամ որկորից (bronchophonia, գործուագուստուացուութեան) :

Այս աստիճանում երեւում են նոյնպէս մարտղական զործարանների խանգարմունքներ, փոխումն սրտի, խառնակումն, որովանալուծութիւնն, ցաւ որովայնի, չկամ դներից ումանք զգում են փոփոխակի եր-

բեմի ջերմութիւն, երբեմն ցրտութիւն, մանաւանդ երեկոյները : Այս նշանները եւ սրանց հետ միասին օրէ ցօր յայտնապէս նիմարանալը : Հալվիլը, նուազութիւնը, մորթոյ դուռափոխութիւնը եւ ընդհանուր անառողջութիւնը յայտնի ցոյց են տալի թոքերի աւերտումն :

Թոքախոտութեան երկրորդ նշանները :

Հազը յանախում է եւ սսատկանում, յառաջ է բերում շուտ շուտ փախումն. սասակութիւնը աւելանում է դիշերով եւ պատճառում է անքնութիւն, բլղամը դուրս է գալի հեշտութեամբ : Բլղամը վինում է դժգոյն կանանչաղոյն, պղտոր, արինախառն : Արեան թքումն այս սաստիճանում պատահում է հասդի . Բա լոց դժուարաշնչութիւնը, կրծոյ ձնշումն եւ ցաւը շուտ սաստիկանում են : Զարկելուց եւ ականջ դնելուց յառաջ եկած նշանները աւելի պարզ են այս տեղ, քան թէ առաջին սաստիճանում : Կրծոյ ստորին մասնումը, անրակնիրի տակ բաբախնելիս բոլորովին ոչինչ ձայն չէ հանգում, կամ մի խուլ, բութ ձայն, խկ ականջ դնելիս, լսվում է ճայթիւնի տրաքարըքոցի եւ երբեմն խորդիւնի, խռալու ձայն /*rhonchus suberepitans*/ որ կոչվում է խոռչաւոր խորդիւն (rôle cavernuleux, պեղերության քրիպի) :

Յետին ժամանակը նոյն բաւթ խուլ ձայնը նկատվում է կրծոյ շատ տեղերում եւ չնչառութիւնը թոքի ծայրումը հանում է միկրօճք, խռոչափողային ձայն (respiratio trachealis, bronchophonia, горловое дыхание, хрипъ, горлоспасие,

Եւ ուշ լսում ենք կուրծքից իրր թէ ջրոյ կատարեալ կարկաջիւն (gargouillement, клоакотаніе) եւ լանջախօսութիւն (pecoriloquium ցրցօրենութ) : Այս հրաշքները ի հարկէ ամէն մարդ չէ կարող լսել հիւանդի կուրծքի վրայ յանկարծ աւաջին անգամ ականջ դնելով : Մրա համար հարկաւոր է մեծ հմտութիւն, որ կարելի է ստանալ միայն երկար սովորութեամբ եւ աշխատութեամբ : Ով որ կամննում է սովորել, յառաջ յառաջ պիտի փորձէ առողջ մարդկանց վրայ երկար ժամանակ մասպրութեամբ լսելով նրանց կուրծքը եւ նկատէ թէ առողջ դրութեան մէջ որպիսի ձայն է դուրս գալի կուրծքից եւ ասկա մկոէ հիւանդի կուրծքը ունկնդնել եւ համեմատել :

Բայց առաւել զլիաւոր երեւոյթը է անդը, որ կամ երեւում է միայն այս ասիճանում, կամ շատ սաստիկանում է, եթէ կար յառաջադոյն, Տենդը ըստ մեծի մասին մկանում է ցրտութեամբ, դողով, երեկոյները, դողից յետոյ հասարակորէն հետեւում են տաքութիւնը եւ քըրտինքը : Այս տենդը շատ նման է առօրեայ ընդհատ տենդին : Սի եւ նոյն ժամանակում են մարսողական դործարանների անկարգութիւնները, անախորժակութիւնը ստամոքսի խառնակիլը, ցաւը որտի դրգուլի տակ, փոխումն, անտանելի ծաբաւը եւ որովայնալուծութիւնը

հանդերձ աղիքների խիթքով, որ եւս առաւել նուազացնում է հիւանդին Այս եւ նոյն ժամանակում յառաջ են զալի կտկորդի ցաւը կլանելիս, ձոյնի կերկերալը, կտրիլը եւ չնչառութեան դժուարութիւնը, որոնց բովանդակութիւնը կոչվում է չնչափողի բարակացաւ (phthisis laryngea)։

Եթէ ամէն վերոյգրեալ արկածները լինում են միասին, այն ժամանակ բարակացաւը աճում է շատ շուտ եւ սաստկանում է. հիւանդը չափազանց նիշարանում է, վոտքը ինչ կարմրադոյն այտերը ամգունանում են, ցամաքում են եւ հալվում. աչքերը ընկնում են ներս, շրթումքը բարականում են. վտաս անդամները կորուսանում են խրանց յետին դորութիւնը եւ հիւանդը ուժից. ընկած մեռանում է, պահելով մինչեւ վերջին վայրկեանը խր բոլոր ուշքը եւ միտքը։

Ահա սրանք են թոքախտութեան դիմաւոր արկածները, մնում է մեղ միայն երկու խօսք ասել այս տեղ բարակացաւուների ծննդական դորժարանների եւ եղունդների վրայ. արտկան անդամների դործունեւութիւնը ոչ միայն չէ դօրանում, ինչպէս կարծում են ոմանք, այլ եւ տկարանում են. իսկ կանանց ամսական հոսումն պակասում է եւ վերջումը կարվում։ Թոքախտութիւն մատների վերջին յօդերը (խաղը) թուում են փոքր ինչ ուռած, եղունդի արմատը իրը թէ բարձրացած այլ նոյն եղունդը տափակ եւ կորացած։

ԲԱՐԱԿԱՑԱՒԻ ԸՆԹԱՑՔԸ.

ԵՐԿԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԼՔԸ

Բարակացաւը սովորաբար ընթանում է յամբ, աստիճան աստիճան եւ է երկարատեւ։ Ոյս հիւանդութեան ընթացքի վրայ մեծ ներգործութիւն ունի տենդը, որ որչափ շուտով է երեւում եւ սաստիկ է, այնչափ արագ է բարակացաւի ընթացքը։ Յղութիւնը ուշացնում է առժամանակ ցափ սաստկանալը։ Հասարակօրէն տեսում է մի տարւոյ մինչեւ երկու տարին. սուր զիպուածումը բարակացաւը մի ամիսից առաւել տեսում չէ. բայց երկարատեւ զիպուածումը այս ցաւով հիւանդ ները երբեմն ապրում են 20 տարի։ Հասակը մեծ ներգործութիւն չունի, բայց կանայք աւելի շուտով են մեռանում, քան թէ մարդիկ։ Ելքը հասարակօրէն մահ է, բայց պատահած կայ որ հիւանդը առողջացել է ինքն իրմով, առանց ճարերի։

ԲԺԿՈՒԽԻԹԻՒՆԸ

Թէպէտ թոքախտութիւնը կարելի է հեշտութեամբ ճանաչել վերոյգրեալ նշաններից եւ արկածներից, բայց դժբաղդաբար մինչեւ այժմ չկայ ոչ մի ներգործական դեղ, որ կարողանայ բժշկել այս ցաւը, եւ

եթէ երբեմն եւ պատահել է առողջանալ հիւանդին, այսպիսի դիպուած-ները յառաջ են եկել առաւել բնութեան հրաշալի զօրութեամբ, քան թէ դեղերի չնորքով։ Այս պատճառով մենք աւելորդ ենք համարում մոռանել հասարակաց թժվականութեան մէջ այն հաղարաւոր դեղերը, որոնց գովել են եւ գովում են բայիշները եւ որոնք մնում են եւ կմնան միշտ անզօր աղտանել մարդկութիւնը այս դժնդակ ախտից ։ Բայց մենք կիշենք այս տեղ համառօտարար միայն այն ճարերը եւ միջոցները, որոնք չսպաքինելով բուն ցաւը թիթեւացնուում են արկածների սաստեութիւնը, հանդարաեցնուում են հիւանդի նեղութիւնը եւ երբեմն ուշացնուում են ցաւի ընթացքը։ Այսպիսի ճարերը են յիտազայքը։

(1) Եթէ թոքախտութեան հետ-միասին գտանվում է պատահաբար եւ թոքերի կամ լանջամաշկի բորբսքումն, այն ժամանակ պէտք է մի հասարակ ստական արփին հանել երակահասութեամբ, որ երբեմն կարելի է կրկնել զգուշութեամբ, կամ 10—12 տղրուկներ զնել կրծոյ վըրայ, երիխանցը բաւական են 2—6 տղրուկներ հասակին մտիկ տալով, ամելու համար շահական է մոլոչի եւ ուրիշ կակդեցուցիչ խոտերի չայն դժուարամարս կերակրից հեռացնել հիւանդին եւ տեղաշօրի մէջ պահել։

(2) Խաշխաչը, սփիոնը, (lactucarium) հազար անունով բոյսը, սփիոնի եւ Խզանզիոյ մամուռ (lichen islandicus) հետ միասին խառնած խեցգետնի ակն կամ քարը (lapides cancerorum) եւ կուրծքը կակդեցնող բուսերի խաշուն, համնդարատեցնուում են հազը, պակասաացնուում են շընչարգելութիւնը, թիթեւացնուում են չնչառութիւնը եւ կորում են անքընութիւնը։

(3) Կուրծքի ձնչումն եւ ցաւը մեղմելու համար շահաւէտ է օծանել կուրծքը ափիոնի սպեզանիով (linimentum opiatum)։

(4) Սասափկ քրամինքը չափաւորելու համար տալիս են հիւանդին հարեր պատրաստած 3—4—6 եւ կամ 8 գարեհատ սպիտակ տարազից (agaricus albus սպնդանման նիւթ կազնիոյ եւ կամ ուրիշ ծառերից արտադրած), որովհետեւ այս տեղը լուծողական է, վամնորոյ որովայնալուծութեան դիմուածում չէ կարելի տալ, այլ պէտք է խառնել փոքր ինչ ափիոնի հետ։ Օդաւելէտ է նոյնպէս օծանել խովով հիւանդի բոլոր մարմինը։

(5) Մաշիչ որովայնալուծութեան ընդդէմ զործ են ածում ափիոնից պատրաստած զրէխը, եւ դժուային քարը (argentum nitricum), որ տալիս են մի գարեհատի 12—15 երրորդ մասը երեք անգամ օրը։ Եթէ աղիքները վիրաւորած, խոցառած են, այն ժամանակ ոչ ինչ դեղ կարող չէ հաճուարացնել որովայնալուծութիւնը։

(6) Վերջուապէս հիւանդի պահպանութիւնը ունի մեծ զօրութիւն մանուանդ բարակացափ սկզբումը։ Ճիւանդին օգուած է փոփսիլ իր բընակութեան երկիրը, կլլանայն, ցուրտ տեղից տաք սեղ զնալ։ ճանա-

պարհորդութիւն անել ծալի վրայ, բաց թողնել ամէն զբաղմո՞նքը
և գործերը, որչափ կարելի է շատ քնիլ, հեռանալ ցրախ, հազնել զլո-
նելի շափկ, պահպանել գրդոխ, ողիաւոր խմէջքներից եւ ամէն աւելոր-
դութիւններից, Կերակուրը պիտի ըլնի մնուցիչ եւ դիւրամարս, մսեղին,
անկեղին եւ կաթնեղին, մանաւանդ իշոյ եւ ծծի կաթը, բայց չափաւոր
ձու, թաղայ ձուկը եւ այլն, չասարակօրէն եթէ ցաւի արկածները ւեռ
թեթեւ են եւ հրանդը ունի ախորժակ, այն ժամանակ անօպուտ է եւ
մանաւանդ վնաս զրկել նրան դիւրամարս կերակուրներից :

Եթէ երեխայն ծնել է բարակացաւոտ մօրից, ծիծ տալը պիտի յանձ-
նուի մի ուրիշ առողջ ծծմօր :

ԽՈՐՈՒՁԱԿԲ ԿԱՄ ՔՈՅՑԻԽՆԸ. COQUELUCHE.

(Զդական կամ ցնցական հազը. Tussis Convulsiva) *

Քոքլիւշը է մի տարափոխիկ սաստիկ ցնցական հազ որ պատա-
հում է միայն երիխանց եւ մանաւանդ տղոյւական հասակում։ Երբ որ
այս հաղը զալիս է եւ ըմբռնում է երիխին, յառաջ յառաջ ցնչու-
ութիւնը արդիւլում է. յունչը կրիխում է եւ ապա երիխայն սկսում է
երկար ժամանակ սուլելով ներշնչել օղը, ջետոյ ործալով թքում է փո-
քը ինչ խժացին հիմթեւ առ ժամանակ հաճուգուտում է. Այս հրան-
դութիւնը պատահում է յաճախ, տարու ամէն եղանակներում եւ ամէն
կլիմաներում։

ՊԼՏ ՃՍՄՆԵԲԸ

Խոնաւ, մթին, անձուկ լնակարանը, դժուարամարս ծանր կերա-
կուրները եւ ցրահարութիւնը կարող են յառաջ բերել այս ցաւը, բայց
առաւել ներգործական պատճառը է փոխազրականութիւնը :

ՆՇԱՆՆԵԲԸ

Քոքլիւշը ունի երեք շրջաններ. առաջին շրջանը կոչվում է նա-
խտգուշակ կամ խարբոխային, երկրորդը ցնցական եւ երրորդը՝ դիւ-
րութեան կամ թեթեւութեան :

Քոքլիւշը տուաջին շրջանումը սովորաբար սկսվում է ինչպէս հա-
սարակ, պարզ խարբութը եւ այս պատճառով սկզբումը շատ դժուար
է ճանաչել :

Երկրորդ շրջանը կամ ցնցական հազը սկսվում է երկինի առանց
նախազուշակ նշանների, յանկարծակի, անակնկալ եւ երբեմն հաղից
յառաջ լինում է կրծոյ ցաւ եւ ճնշումն :

Երբ որ հազը ըմբռնում է, երիխայն խելոյն նստում է եւ հազում
է մի քանի անգամ շուտ շուտ եւ կարճ կարճ, եւ չկարողանալով ա-
ղատ նշել, չունչը կրկնում է, երեւը փքվում է եւ կարմրում, աչքե-
ղատ նշել,

ըր ուռչում են եւ արտասվում, երակները յայտնում են եւ շնչերակների զարկը ցուցանում է շնչառութեան սասափիկ ճնշումն ։ Երբեմն երեւումէ արեան հոսումն քթից, բերանից եւ ականջներից ։ Երբեմն սաստիկ հաղից յետոյ քրանում է եւ փսխում է խժային հիմք :

Վի կարծ միջոցից յետոյ շնչարգելութեան արկածները սովորաբար անցետանում են ։ Ճիւանդը յառաջ յառաջ սկսում է շուտ շուտ շուտնչ առնուլ եւ ապա երկար եւ սուլելով։ Յետոյ թքելով մի պարզ եւ խըժային հիմք փոքր ինչ հանգստանում է ։

Հաղի ըմբանումն կամ գալուստը մի բոպից աւելի չէ տեսում, բայց ըմբանում է շուտ շուտ, 20—40 եւ առաւել անդամ օրը եւ յաճախաղոյն զիշերով քան թէ ցերեկով։ Ճիւանդութիւնը տեսում է 5—8—12 շաբաթ։ Վերջին կամ զիւրութեան շրջանումը ճիւանդութիւնը զիմում է դէպի առողջութիւնը, այն ժամանակ հաղի սաստկութիւնը նշանաւորապէս պակասում է, ըմբանումն կարճատեև է եւ թեթեւ, խկ խըժային հիմքը դուրս է գալի հեշտութեամբ եւ առանց չարչարանքի։ Վերջապէս իրեւում են միայն պարզ խարբուխի արկածները, որոնք չուտով անց են կենում, եթէ ուրիշ ախտերի զիւրուածներ չեն պատահում։

Քոքլուչի հետ միասին կցորդվում են յաճախի թոքերի լանջամաշկի, աղեաց եւ ուզզոյ բորբոքումն, արիւնահոսութիւնք, թոքախտութիւն, ջրկողութիւնք եւ ուրիշ ախտեր, եթէ այս կցորդվութիւնքը չեն պատահում, այն ժամանակ ցաւի ելքը յաջող է եւ բարի, այլ ընդ հակառակն վերջանում է մահով։ Այս ցաւը մի անդամ միայն կպատահի մարդի բոլոր կեանքումք,

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Քոքլուշը կամ խորուզակի ապաքինելու համար շատ դեղեր յառաջարգած են նշանաւոր բժշկներից, բայց այն բազմաթիւ ճարերից ոչ մինը չկայ, որ կարողանայ յատուկ եւ ներգործական դեղ դառնալ այս սաստիկ ցաւի ընդդէմ։ Արա ընթացքը ուրիշ տարափոխիկ ախտերի նման, ծագիլի, վարդախտի, ունի խր սահմանեալ ժամանակը, եւ այս ժամանակակիեսից յառաջ ճիւանդը կարող չէ առողջանալ ոչ մի ճնարքով։ Այս պատճառով մենք կը ցուցանեմք այստեղ միայն առաւել հարկաւոր եւ առաւել օգտակար ճարերը եւ միջոցները, որոնք զորք են ածվում այս հիւանդութեան ընդդէմ։

Ցստակ կամ պարզ խորուզակի ընդդէմ, որ կցորդած չէ ուրիշ ախտերի հետ շատ օգտակար են յետագայ ճարերը։

(1) Հասարակ չայի եւ ջրի տեղ ճիւանդին խմնցնել Տիլիայի ծաղկի թեթեւ խաշուն նարինջի շարապով։

(2) Տալ ործացուցիչ արմատը կամ առյուղը փոխեցնելու համար յետապայշ կերպով :

24 Կը դադեհատ արմատ (Rad. ipecacuanhae) բաժանել երեք մոտավոր և ամէն քառորդ ժամին տալ մի մի մասը, և կամ մի կը դարձնեատ տորտը (tartarus emeticus) հաւել կէս ստական շարբաթի մէջ և շուտ շուտ խմեցնել փոքրիկ զրդալով մինչեւ մի քանի անգամ փըսինել : Դեղքերի քանակութիւնը կարելի է աւելացնել կամ պակասեցնել, նայելով հիւանդի հասակի չափին :

(3) Վեց կը դուրեան Պելլա տոննա անունով բոյսը (լին գեղեցիկ) (pulv. belladonnae gr. vi) խառնել 26 կը դուրեան շաքարի հատեւ բաժանել 30 հաւասարաչափ մասներ : Այս փոշիներից ողէտք է տալ հիւանդին օրը 1—2—4 փոշի, հասակին նայելով :

(4) Կուրծքի վրայ դնել մուրտասանկի սպեզանի (Emplastrum diachylon),, մանաւանդ եթէ կուրծքը ցաւում է :

(5) Շահական է չափաւոր խահուէ խմեցնել հիւանդին օրը երկու, երեք անգամ :

Եթէ խորուզակի հետ զուգընթաց է շնչառութեան և որիշ նշանաւոր գործարանների բորբոքումն, այն ժամանակ օգուտ են բերում յետագայ միջոցները :

(1) Մոլոշի և խաշխաշի չայն :

(2) Արինահանութիւնը երակահատութեամբ կամ տղրուկներով, հայելով հիւանդի հասակի չափին և բորբոքման զօրութեան :

(3) Թոքերի բորբոքման դիպուածումը վախողական տորտը (tart. emet.) :

(4) Ամէն երեկոյ տալ հիւանդին մի կամ երկու չայի դրդալ խաշխաչի շարագ (syrup. diacodii,), կամ ½—1 կը դարեհատ ափիոնից կամ մահացու մորմ անունով բուսից հանած հեղուկը (ext. opii s. daturae stramonii) :

Վերջապէս խորուզակը յաջողութեամբ բժշկելու համար հարկաւոր է հեռացնել հիւանդին ամէն տնսակ շփոթներից, հակառակութիւնից, բարկութիւնից, ցրտից, առատ կերակրից :

Որովհետեւ այս ախտը փոխադրական է, վասնորոյ պէտք է առողջ երեխանցը չի պահել հիւանդների մօս և չի մօտացնել :

Երբ որ այս փոխադրական ախտով սկսում են հիւանդանալ, այն ժամանակ շատ օգտակար է ծաղիկ կտրել առողջ երեխանցը չի նայելով թէ մի անգամ արդէն կտրած է : Այս հնարքով երբեմն կարելի է պաշտպանել երեխին հիւանդութիւնից :

ԱՐԻՒՆԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՃՈՆՍՊԱՐՀՆԵՐԻ

ԵՒ

ԱՐԵԱՆ ԱԽՏԵՐԸ

Թոռքիրի, սլտի և արիւնաշորջ անօթների վրա ընդհանուր տեղեկութիւնները : Այսի բորբոքածն կամ սրտակրանք : Բարսիւն սրտի : Շնչերակներից ցաւերը : Երակների ցաւերը : Նորածին կանանց սպիտակագոյն ցաւալից տույզը : Արեան առաստիւնը կամ բազմարիւն վնելը : Արիւնասակաւոմիւնը, թուլութիւնը : Գեղնութիւնը կամ գեղնութիւնը : Վկորուսուը կամ ընդահարութիւնը : Խոյլը :

1.

ԹՈՔԵՐԻ, ՄՐՏԻ ԵՒ ԱՐԻՒՆԱՇՐՋՈՒԹԶ ԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱՑ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱՉՆԵԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արիւնաշրջութեան ճանապարհների ցաւերը լաւ հասկանալու համար, հարկաւոր է զիտել, թէ սիրալ, թոքը և արեան անօթները որպիսի պաշտօն են կատարում առողջ մարմնի մէջ իւրեանց բնական դրութեան ժամանակը : Այս պատճառով մենք աւելորդ չհամարեցինք փոքր ի շատէ ծանօթացնել ընթերցողին յիշեալ զործարանների անդամադնութեան հետ :

Մարդի կողերը իւրեանց մերձաւոր ուկորների հետ ամենը միախն ունին մի անտակ վանդակի նմանութիւնն եւ կոչվում են կուրծքքի վանդակ : Այս վանդակի մէջ աջ ու ձախ դրած են թոքերը : Թոքերի մէջ դատնվում են շատ խողովակներ, որոնք սակաւ սակաւ լայնանալով կողմում են վերջապէս չնչափողը, որ խկոյն լեզուի քամակին միաւորվում է հագաղի հետ (etargyph, չնչափողի գլուխը) : Հագաղի միջոցով օդը չնչառութեան ժամանակը թափանցում է չնչափողում : Շնչափողը ունի երկու ճիւղ կուրծքքի վերին մասնի մէջ անդումը, ուր որ երեւումէ արտաքուստ պարանոցի վրա կուրծքքի տախտակի մօտ մի խորին փոս : Շնչափողի մի ճիւղը կամ խողովակը երեք ուստ բաժանուած մտնում է աջ թոքը, այլ միւս խողովակը երկու ոստ բաժանուած, ձախ

թոքը : Այս խողովակները այնքան բաժանվում են և նրբանում են, որ դառնում են մաղերի նման բարակ : Այս բարակ խողովակներից ամի՞ն մինը վերջանում է մի թափանցիկ առաձգական թաղնթանման փունկով կամ պղպջակով : Շնչափողի խողովակները նման են ճիւղելի, այլ պղպջակները տերեւների :

Շնչափողի թէ հաստ եւ թէ բարակ խողովակները պատած են ներքին կողմից մաղասային թաղանթով օդի ճանապարհները միշտ խոնաւ սրահովան ելու համար, կուրծքի մկանունքը մեծ ներդրծոթիւն ունին շնչոյ տուրեւառոթիւն վրա :

Ամէն կերակրեղիները ստամոքսի եւ աղիքիների մէջ և փունկուց յըստակուելուց յետոյ, փոխվում են մի սպիտակ հեղանիսթ կաթնի նման, որ մտնում է աղիքիների վրա եղած մազից բարակ խողովակների մէջ, որոնք կոչվում են կաթներակներ : Այս կաթներակները կամ կաթնի անօթները, որոնց մէջ հոսում է սպիտակ հեղանիսթը, հեռանալով աղիքիներից, սակաւ սակաւ միաւորվում են միմիանց հետ եւ կազմում են յառաջ յառաջ առաւել եւ առաւել հաստ ճիւղեր եւ վերջումը մի բուն կամ մի մեծ խողովակ, որ կոչվում է կուրծքի առռւակ : Այսպէս կերակրուց փոխվելով մի սպիտակ հեղանիսթ կամ կաթնորակ հիսթ, խառնվում է արեան հետ եւ արինացիքոթեամբ ծաւալվում է մարմինի բոլոր անդամներումը, Սպիտակ հեղանիսթը միաւորվելով արեան հետ, հոսում է դէպի սիրաը, որ է կեանքի սահպանութիւն համար էապէս երեւելի մասներից մինը :

Սիրտը ունի եռանկինի մարմին ձև, Մարդի սիրտը մեծանում է հասակի հետ միասին եւ նրա մեծոթիւնը համարեամ թէ հաւասար է ձեռի քառան, կանանց սիրտը համեմատաբար փոքրագոյն է քան թէ մարդկանցը : Սրաի վերին եւ յետին մասնից ելանում են մի քանի հաստ խողովակներ, արինաշուրջ անօթներ, այլ արտաքին կողմից երեւում է մի խաչաձեւ զիծ : Այս զծի տակ գտանվում են երկու միջնորմեր, որոնց մինը ուղղագիծ է, միւսը խոտորմակ եւ որոնք կազմում են սրտի մէջ չորս խոռոչներ, Ուղղահայց միջնորմը չափահաս մարդի սիրտը բաժանում է երկու աջ ու ձախ մասը, իբր թէ երկու կէս կէս սիրտ մէկգմէկի հետ առանց հաղորդակցութեան, Ամէն մի մասը նմանապէս բաժանվում է մէջումը մի ծակ թաղանթով, որի միջնորդութեամբ սրտի մի կէսի ստորին մասը կամ խոռոչը հաղորդակցում է վերին մասնի հետ,

Սրաի ամէն մի մասնից դուրս են գալի մի կամ մի քանի արինաշուրջ անօթներ :

Սրաի կողմները գոյանում են մակըն մանրաթերից, որոնց անդադար բնական կծկումն կամ շարժումն սեղմնելով սրտի խոռոչները, մղում է սրտնց մէջ սրտունակած արինը, որ շնչերակների եւ երակների

միջոցով շրջան է առնում բավանդակ մարմնումը ։ Արտիխոռոշներումը կան դռնակներ, որոնք չեն թողնում, որ արինը մի անգամ դուրս եկած մի որ եւ իցէ խոռոչի ծակից, կարողանայ յետ զառնալ կրկննայն խոռոչը առանց հարկաւորութեան։

Արինը ձախ սրտի ստորին խոռոչից մտնում է յառաջ մի լայն կտմարածեն չնչերակումը, յետոյ նրա ճիւղերումը, որոնց միջոցով ծաւովի մուլքում է բոլոր մարմին մէջ։ Այս ճիւղերը կամ չնչերակները որչափ առաւել հեռանում են սրտից, այնչափ առաւել բարականում են եւ վերջապէս դառնում են մազերի պէս նուրբ անօթներ, Մինչեւ այս բարակ ամաններին հասանելը, արինը ունի կարմիր վարդի գոյն, բայց այս տեղ գոյնը փոխվում է եւ դառնում թուխ կարմիր + Յետոյ բարակ անօթները միաւորվում են երակների հետ, որոնք յետ են առանում արինը դէպի աջ սիրոտ։ Որպէս չնչերակները տանելով կարմիր արինը ձախակապի աջ սիրոտ։ Որպէս չնչերակների հետ, որոնք առաջան աստիճան աստիճան նրբանում են, նոյնպէս եւ երակները բերելով թուխ արինը դէպի աջակապի աջակողմեան սիրոտ ասկաւ սակաւ հաստանում են եւ միաւորվում են մի մեծ խոռոչակի հետ, որ թափում է արինը աջ սրտի վերին խոռոչումը։ Այս խոռոչից մեծ խոռոչակը կամ երակը տանում է արինը աջակողմեան ստորին խոռոչը եւ այն տեղից դէպի թոքերը որ որ նա բաժանվում է բազում նրբաղյոյն խողովակներ, որոնք պատելով թոքերի պղպջակները, միաւորվում են թոքերի երակների հետ։ Օդի ներդործութեամբ այս քնչքուչ եւնուրք պղպջակների վրա, թուխ արինը կարմրում է թոքերի երակներումը, որոնք միաւորվելով կազմում են մի լայն երակ, որ հեղում է արինը առաջ ձախակողմին սրտի վերին խոռոչումը, եւ յետոյ սարրին խոռոչումը, ուստի վարդագոյն արինը կատարում է կրկնին իւր շրջանը, ծաւաէ վելով բոլոր անդամներումը։

Ուրեմն արինաշրջութիւնը կատարվում է յետազայ եղանակով, ձախ սրտի ստորին խոռոչից արինը մտնում է չնչերակումը, որ բաժանվում է անթիւ սատերով բոլոր մարմնի մէջ եւ տանում է արինը ամէն գործարանները մնուցանելու համար, չնչերակների վերջին ծայրերից արինը թափվում է երակների մէջ։ Այս երակները բերում են արինը դէպի աջ սրտի վերին խոռոչը, ուստի հեղվում է նոյն կողմի ստորին խոռոչումը. այս խոռոչից արինը հեղվում է չնչերակումը, ուր որ տանում է նրան դէպի թոքերը, որ նա կարմրում է օդի ներդործութիւնից եւ մտանում թոքերի երակներումը, որոնք բերում են արինը դէպի ձախակողմեան սիրոտ, ուստի նա յառաջ յառաջ դուրս եկաւ եւ կրկն մտնում է չնչերակը, որ ծաւալվում է բովանդակ անդամներումը։

Զախ սրտի ստորին խոռոչից, ուր տեղից որ սկավում է արինաշրջութիւնը, զուրս է գալի մի հաստ անօթ, որ է մեծ չնչերակը կամնեարդը, Արանից եւանում են բոլոր չնչերակները ինչպէս մի ծափի բունից նրա

ճիւղերը, Շնչերակները կազմած լինելով երեք թաղանթներից արտաքին, ներքին և միջին, երեսներ տեղ տեղ կորուսանում են խրեանց սեփական առաջգականութիւնը, ուստի նակաւ սակաւ յառաջէ դալի մի պարկաձեւ ընդարձակութիւն կամ ուռոց, որ կոչվում է (անելքա) և որի պատճառումն պատճառում է մի սրբնժայ արինահոսութիւն, ուստի և մահ Բարակ մազեայ անօթները ինչպէս որ վերեւը առայինք անցանում են երակներումը, որոնք տանում են փոխարկած սեւաւ արինը դէպի սիրաց: Առ հասարակ երակները դասաւորված են նոյն կերպով, որովէս չնչերակները եւ շատ անզամ երկոքին եւս զրած են մէկ մէկի մօտ:

Թուլի արինը հոսելով երակների մէջ դէպի սիրաց, մտանում է վերջապէս երկու մեծ երակներում վերին եւ ստորին, ուստի հեղվում է աջ սրտի վերին խռովչումը, Վերին երակը բերում է արինը զլխից, պարանոցից, ձեռներից եւ կուրծքից, այլ ստորին մասներից և փորոտիքներից:

¶ .

ՍՐՏԻ ԲՈՐԲՈՐՈՒՄՆ ԿԱՄ ՍՐՏՈՒԿՐԱՆՔ (Carditis)

Սրտի բորբոքումն պատճառումէ՝ շատ հազին եւնրա ճանաշելը զըժուարին է նաև եւ հմուտ քժշկների համար: Որպէս այս ցաւը, նոյնպէս եւնրա հետեւանքը որոնք են սրտի պալարները, խոցերը եւ մամսաւոր ընդարձակութիւնները, համարենամ թէ անբուժելի են եւ մահկանացու:

ՊԱՏՃԱՌՆԵՐԻ

Սրտակրանքի բուն պատճառները գեռ եւս լաւ յայտնի չեն, ցըրտահարութիւնը զանազան տեսնդեր եւ յօդուածայաւութիւնը համարվում են միայն պատճական պատճառներ:

ՆՇԱՆՆԵՐԻ

Յետակայ նշաններից կարելի է գուշակել այս ցաւիներկայութիւնը, հիւանդը զգում է սաստիկ բարախիւն սրտի եւ ցաւ կամ ճնշումն կըրծումը ձախս կողմից, բաղկի զարկը կարծը է, երբեմն թոյլ ընդիմջանատութեամբ եւ սովորաբար անհաւասար: Արինաշրջութիւնը խանդակած է երեւում առանց մի յայտնի պատճառի: Բացի այս նշաններից պէտք է իմանալ թէ հիւանդը երբեմն յօդուածացաւ ունեցել է արդեօք, կամ ունի այժմ, թէ ոչ, մանաւանդ ուներումը, ըստ որում յայտնի է, որ յօ-

դուացաւ մարմնի արտաքին մասներից հեշտութեամբ թռչոտում է դէպիներքին անդամները եւ կարող է ալատառել սրտի բորբոքումն ։ Վերջապէս թռքերի եւ լանջամաշկի բորբոքողականութեան նշանների բացակայութենից երբեմն կարելի է գուշակել սրտի բորբոքման ներկայութիւնը ։ ինչու որ այս երկու հիւանդութիւնները արտաքին երւոյթներով նուան են մէկզմէկի հետ. երկոքին եւս յառաջ են դալի արինաշրջութեան արգելքներից, մինը թռքերումը, միսը սրտումը :

Առ հասարակ այս ցաւի նշանները կամ արկածները շատ մթին եւ անորոշ են, համարեա թէ չկայ ոչ մի նշան այս հիւանդութեան սեպհական :

Սրտի բորբոքումն ունի սովորաբար շատ սուր ընթացք եւ կարճ միջոցում հասանում է սաստիկ աստիճանին։ Այս ցաւը մի շաբաթից առաւել տեսում չէ. կամ չուտով վերջանում է մահով եւ կամ պատճառում է սրտումը այնպիսի աղետալի ախտեր, որոնք յանկարծակի սպանում են հիւանդին։

ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերեւը ասացինք, որ այս ցաւը միշտ վերջանում է մահով, ուրեմն բժիշկները կարող չեն յառաջ բերել ոչ մի դեղ, որ կարողանայ հիւանդին աղասիել այս մահարեր ախտից, բայց նրա չարչարանքը թեթեացուցանելու համար կարելի է դորժածել յետաղայ միջոցները :

1) Յառաջ յառաջ առատ երակահատութիւնը, յետոյ ազրուկների եւ արեան սրտակները կուրծքքի վրայ ձախ կողմից :

2) Հիւանդը պիտի պահպանէ կատարեալ լուութիւն եւ՝ հանդիսատ կենալ անզանդումը :

3) Հիւանդի որովայնը*, պէտքէ լոյծ պահել, տալով նրան ամէն երկու ժամ երկու երկու զարեհատ քաղցր սնամիկ շաքարով (calomol grii):

*) Սիրտը, նրա թագանիները, նրան պարունակիլ չ մաշկը եւ այլ մամները բացի բազմաթիւ ախտերով, եւ այս ախտերը հազիւ են պատահում չոկ ջողի, այլ մեծ կապակցութիւն ունին միմիշանց հետո, եւ յառաջ են բերում այնքան խառնավինդոր եւ մթին նշաններ, որ շատ անզամ նահե երեւելի բժիշկը տարտկուսկում են որտշել նրանց մկաններից եւ սեպհականել մի որ եւ իցե տուանձին հիւանդութեան։ Բացի սրտից սրտի եւ նրա մասների համարեա թէ ամէն ցաւերը համարլում են զժուարաբուժելի կամ յաւ եւ է ասել անբուժելի։ ուրիշն այս ախտերը լինելով միայն հմուտ բժշկների հետագառութեան առարկայ, չունին տեղիք մտանելու հասարակաց բժշկաբանի մէջ։

5.

ԲԱԲԱԽԻԻՆ ՍՐՏԻ (palpitatio cordis)

Սրտի բարախիմնը երկու տեսակ է, առաջին տեսակը յառաջ է զալի սրտի զանազան ցաւերից եւ կախած է նրանցից. երկրորդը պատահումէ անկախ ուրիշ ցաւերից առանց մի շօշափելի պատճառի եւ կոչվումէ ջղային։ Մենք ստորագրում ենք սրտի բարախիմնի երկրորդ տեսակը, որպէս մի լինքնակայ հիւանդութիւն։

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Այս ցափ պատճառները են թալկացուցիչ ախտերը (hysteria et hypochondria), զաշտանի արգելականութիւնը կանանց սպիտակագոյն հիւթի հոսումն, կերակուրների եւ խմիչքների աւելորդութեամբ գործածութիւնը, մտքի երկար աշխատութիւնը, տրտմութիւնը հայրենիքաց վրա (nostalgia, տօսկա որօնինք). սասակագին կիրքը եւ հոգոյ զանազան ալէկոծութիւնքը,

ՆՇԱՆՆԵՐԸ

Յանկարծ առանց մի նշանաւոր պատճառի սիրտը մկանում է սառտիկ զարկել։ Երբեմն կարելի է տեսնել կուրծքի շարժողութիւնը եւ լսել զարկը։ Սրտի կողմը փոքր ինչ բարձրանում է եւ հիւանդը ինքը յայտնի զգում է իւր տրոփը։ Բացի բարախիմնից լինում են երբեմն զգժուարաշնչութիւնն, նուազումն, բազկերակի սաստիկ զարկ եւ խեթք։

ԲԺՇԿՈՒԹԻԻՆԸ

Երականատութիւնը շատ վնաս է այս ցաւին։ Առաւել պատշաճողյն ճարերը են յետազայ մեղմացուցիչքը, տաք կամ ցուրտ ջլի մէջ նստելը, (լուսաւորական) անունով զեղի ջուրը 10—40 կաթիլ եւ (Տէէթուն) կոչված բոյսը։ Այս ցաւը առ հասարակ շատ դժուարաբուժիլի է, որպէս և համարենամ թէ ամէն ջղային ախտերը, (Տէէթուն) բոյսը տալիս են հիւանդին ամէն օր մի քանի անգամ յառաջ մի ցորենահատի քառորդ մասը մինչեւի երկու ցորեան շաքարի հետ խառն եւ յիտոյ քիչ աւելցնում են չափը մինչեւի 10—20 ցորեան։

4.

ԵՆՉԵՐԱԿՆԵՐԻ ԱԽՏԵՐԸ

Ճնշերակների կամներդերի ցաւերը սրտի ցաւերի նման բազմաթիւ են, բայց նրանց նշանները շատ մթին լինելով, բժիշմները գեռ եւս չեն կարողացել ոչ մի մանրամանաբար քննութիւն անել նրանց վրա, եւ ոչ մի ստորդ եւ որոշ նկարագրութիւն յառաջ բերել: Թէպէտ մեծ շնչերակի եւ նրա ճիւղերի բորբոքումն ընթարձակութիւնները (անէվ-ոփլթը) եւ մի քանի ուրիշ ցաւերը լայ յայտնի են մեղ նշանաւոր հեղինակութիւններից, բայց որովհետեւ այս ախտերից մի քանիսը պատկանում են վիրաբուժութեան եւ մնացածները բոլորովին անբուժելի են, վամնորոյ մենք աւելորդ եւ անօգուտ համարեցինք նրանց ստորագրութիւնն՝ հասարակոց բժշկականութիւն կարդացողների համար:

5.

ԵՐԱԿՆԵՐԻ ԱԽՏԵՐԸ

Երակների ցաւերը այնքան շատ չեն, որքան ճնշերակներինը: Ամէն երեւելի փոփոխութիւնները, որոնք սեփհական են մեծ ճնշերակին եւ նրա սատերին. ամեններին պատահում չեն երակներումը: Սրանց հիւանդութիւնների մէջ արժանի է ուշագրութեան մի վտանգաւոր եւ նշանաւոր ախտ, որ կոչվում է նորածին կանանց սպիտակագոյն ուռուց ցաւալից (phlegatia alba dolens), եւ որի համառօտ ստորագրութիւնը յառաջ ենք բերում այս տեղ:

6.

ՆՈՐԱԾԻՆ ԿԱՆԱՆՑ ՍՊԻՏԱԿԱԳՈՅՆ ՇԱԽԱԼԻՑ ՈՒՌՈՅՑԸ

Այս հիւանդութիւնը է երակների բորբոքումն, որի զօրութիւնը պատճառումէ մի սպիտակ ցաւալից ուռուց ազդրի վրա մանկածնութեան յետոյ, Այս ախտը հազիւ երբեմն պատահում է եւ մարդկանց:

ՊԱՏ ՃԱՌՆԵՐԸ

Բացի երակների բորբոքողականութենից, այս ցաւը կարող են պատճառել ճննդական կանանց շատ շուտ վերկենալը տեղաշորից եւ մանդալը, ցուրտ եւ խանաւ եղանակը եւ անզգուշութիւնը կերակրից, Սպիտակ ցաւալից ուռուցը սովորաբար երեւում է մանկածնութեան երկու կամ երեք շաբաթից յետոյ համորեան թէ միշտ ոտներումը:

ՆՇԱՆՆԵՐԸ

Ուռուցի երեւելուց յառաջ հիւանդը զգում է շուտ շուտ դող կամ ցաւ արգանդի կողմը (թաթ), Նմէ ուռուցը պիտի երեւայ կռնումը, հիւանդը զգում է ցաւը որովայնումը, ինչպէս որովայնամաշկի բորբոքման դիալուածումը :

Ցաւը եւ ուռուցը են այս հիւանդութեան հաստատուն նշանները, Ցաւում է կամ բոլոր անդամը կամ նրա մի որ եւ իցէ տեղը, բայց միշտ աղղերային երակների մօտ, ճնշումն եւ շարժումն շատ սասակացնում են ցաւը, Ուռուցը մեծ է, ճերմակ, եւ երեւում է միշտ ցաւալից տեղումը, երբեմն տարածվում է մինչեւի ծննդական անդամները, մի ուրիշ երեւելի նշան եւս կայ, որ արժանի է ուշաղրութեան, ուռուցի մերձաւոր երակումը այնպէս թանձրանում եւ պնդանումէ արիւնը, որ երակը կամ արեան անօթը զաւնումէ իրը թէ մի պինդ լար, որ է երակների բորբոքման յայտնի նշանը : Որովհետեւ սպիտակ ցաւալից ուռուցը յառաջ է զարի երակների բորբոքմանէն, վասնորոյ բայցի տեղական արկածներից երեւում են ջերմ եւ երակների բորբոքողականութեան բոլոր ուրիշ նշանները :

ԸՆԹԱՅՔԸ ԵՒ ԵԼՔԸ

Սպիտակ ցաւալից ուռուցը ունի բաւական երկարատեւ ընթացք, Երբեմն տեսում է 20 կամ 30 օր երբեմն նաև մի քանի ամիս : Ուռուցը երբեմն փարատվում է կամաց կամաց ցրվելավ եւ այն ժամանակ ցաւը եւ տեղը եւս սկսում են թեթեւնալ եւ կորչիլ : Բայց ըստ մեծի մասին այս ցաւը շատ վտանգաւոր է եւ վերջանում է մահով, մահաւանդ եթէ տարածվում է մինչեւի արգանդը եւ ստորին որովայնը :

ԲԺԿՈՒԹԻՒՆԸ

1) Հիւանդութեան սկզբումը հիւանդին պէտք է տալ ործացուցիչ ճարեր, երակ հատանել ձեռից երկու կամ երեք անգամ, 20 կտմ 30 արդրուկներ զնել ցաւագար տեղը եւ ազբուկները կրկնել, եթէ ցաւը չէ թեթեւանում : Հարկաւոր է բարձր եւ հանգիստ պահել ցաւագար անդամը :

2) Եթէ ուռուցի ցաւը նշանաւորապէս պակասել է, այն ժամանակ պէտք է շփել անդամը ամէն օր երեք անգամ սննդիկի սպեղանիով (unguentum neopolit), կամուռ ուցի վրա դնել խարանաղեղ, եւ որովայնը լոյն պահել :

3) Եթէ պալարը հասունացած է, հարկաւոր է զգուշութեամբ բանալ :

4) Կերակուրը պիտի լլնի թեթեւ եւ սակաւաքանակ, եւ ըմպելին զբացուցիչ :

ԱՐԵԱՆ ԱՌԱՏՈՒԹԻՒՆԸ. (plethora).

(Արիւնապից, բազմաբիւն լինելը) :

ՊԱՏՃԱԽՆԵՐԸ

Բազմաբիւն լինելը կախած չէ, ոչ գերութենից, ոչ նիհարութենից։ Նա յառաջ է գալի արեան գնտակների քանակութեան քնական տուաւելութենից։ Այս հիւանդութենով հիւանդանում են առաւել չափահանները, քան թէ երեխայքը եւ ալեւորները, բայց յաճախաղոյն անշարժ, դանդաղ կեանք վարող կանայքը։

Արեան առատութիւնը սովորաբար երեւում է զարունքին, շոք ժամանակը, երբ որ արեան շրջանը մկառմ է կատարվել արագութեամբ, Առատ եւ չափաղանց մնադրար կերակուրը, զինոյ առատորքն զործածութիւնը, հանդիսատ կեանքը, սովորական արիւնահանութեան զանցառութիւնը եւ թթախտական արիւնահոսութեան արգելումն կարող են վերակոչել որևան առատութիւնը, եթէ արիւնը ինքը պարունակում է իւր մէջ առատահալու յատկութիւնը։

ՆՇԱՆՆԵՐԸ

Արիւնաշատութիւնը աճում է միշտ կամաց կամաց։ Սովորաբար առողջ եւ ուժիղ մարդը, որյառաջ ուրախանում էր իւր ողջութեան համար, մի քանի ժամանակից յետոյ մկառմ է զգալ ծանրութիւն, չէ կարողանում երկար պարագել մի զործով, շատ սիրում է քունը, մանաւանդ կերակրից յետոյ։ Երեսը կարմրում է, ուռչում է, մէկ խօսքով, ամեն անդամները լքցվում են արիւնով։ Յառաջ յառաջ այս արկածները աւելի չեն նեղացնում հիւանդին, բայց յետոյ քիչ քիչ սաստկանում են եւ զառնում են անտանելի, երեսը չափաղանց կարմրում է, աչքերը փայլում են, զգում է զլիի ծանրութիւն, երբեմն նա եւ զլխացաւութիւն եւ թնդիւն կամ բղղումն ականջներումը։ Երբեմն աչքի լրցը այլայլում է, առարկայքը թուում են կարմրագոյն։ յաճախ հիւանդը զգում է նա եւ խլացուցումն, մանաւանդ մի ծանր աշխատութիւնից յետոյ։ Ընդհանուր ծանրութիւնը, թուլութիւնը եւ քնախութիւնը օր ըստ օրէ աւելանում են։ Քունը շատ ծանր է, երկարատես եւ ցնորքերով։ Զարթնուլը, յուշի գալը երկար է եւ զժուար։ Արտի բարախիւնը սաստիկ է, բազի զարկը լայն է եւ մեծ։ Վերջապէս զգում է տաքութիւն զըժուարաշնչութիւն, երբեմն ցաւ կրծումը, անախտրժակութիւն, որովայնի ծանրութիւն եւ կալուած։ Բայց արժան է դիտել, որ այս ամէն նը-

չանհերը, բոլորը միասին չեն զտնվում մի եւ նոյն հիւանդի մէջ, այլ մի քանիսը միայն :

Արիւնաշատութեան ընթացքը երկարատեւէ եւ աստիճան աստիճան, Յայսնի չէ թէ այս հիւանդութիւնը որքան ժամանակ է տեսում:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ :

Եթը արեան առատութեան արկածները թեթեւ են, այն ժամանակ բաւական է բազմարին մարզին զգուշանալ մի քանի օր սնուցանող կերակրից, ուտել ջրալի եւ թեթեւ կերակրուր եւ հասած մրգեր, ամէն ողիաւոր խորչըների փոխանակ խմել յստակ ջուր, նստել չափաւոր տաք ջրի մէջ, շատ մանգալ կամ ուրիշ աեսակ շարժողութիւն անել եւ հով պահել իրան: Բայց եթէ արկածները նշանաւոր են հարկաւոր է տալ հիւանդին մի թեթեւ լուծողական եւ արիւն հանել երականատութեամբ: Եթէ դադարել է որ եւ իցէ սովորական արիւնահոսութիւնը, այն ժամանակ պէտքէ շատ աղլսուկներ դնել այն տեղ, որ տեղից որ սովորաբար հոսում է արիւնը: Արեան առատութիւնը բժշկելու համար այս միջոցները բաւական են եւ ամէն ուրիշ գեղօրացքը ունայն եւ անօգուտ:

Ց.

ԱՐԻՒԽԱՍԱԿԱԼԻՈՒԹԻՒՆԸ, ԹՈՒԼՈՒԹԻՒՆԸ (Anæmia)

Արիւնաշատութեան հակառակ դրութիւնն է արիւնապակասութիւնը արիւնաքչութիւնը: Որպէս արեան առատութիւնը յառաջ է գալի ոչ արեան շատութիւնից, այլ նրա գնդակների քանակութեան բազմանալուց, նոյնպէս արեան սակառաւթեան բնական պատճառը արեան քիչութիւնը չէ, այլ նրա գնդակների քանաքական պակասութիւնը: Երեսիլի հեղինակներից շատերը արիւնապակասութիւնը եւ դժկունութիւնը (chlorosis) համարում են մի եւ նոյն հիւանդութիւնն, եւ յիրաւի այս երկու ախտերը կանանց հիւանդութեան մի քանի դիպուածներումը այնպէս խառնվում են իրար հետ, որ շատ դժուար է լինում վճռել թէ հիւանդը որ ցաւով է հիւանդ, արիւնասակաւութեամբ, թէ դժկունութեամբ: Բայց որպէսետեւ այս երկու ցաւազարութիւնները յառաջ են բերում մի քանի նշանաւոր առանձնութիւններ, վասնորոյ մէնք այժմէն հմտաբժշկներին հետեւելով, այս երկու ցաւալից դրութիւնները նկարազրում ենք ջոկ ջոկ:

ՊԱՏՃԱՌԵԲՐԸ

Բայց արեան գնդակների սակառութիւնից, մասապակ հասակը եւ կանացի սեռը համարվում են նոյնպէս այս ցաւի բնական պատճառներ:

Պատահական պատճառները շատ են. արեան առատ կորուստը չուաշուտ երականատութեան կամ ուրիշ տեսակ արինահոսութեան պատճառով, չափազանց պակաս կամ անբաւական եւ անպիտան կերակութը, մթին եւ անմաքուր բնակարանը, չափազանց աշխատանքը եւ երկարաւեւ մաշիչ ախտերը : Այս ցաւով շատ անգամ հիւանդանում են, հանքահանները եւ սրճընի ներգործութեան տակ ընկողները : Վերջապէս արեան քիչութիւնը երեւում է երբեմն առանց մի յայտնի պատճառի:

ՆՇԱՆՆԵՐԸ

Արինասակաւութիւնը մկանում է շրթունքների դժգունութեամբ, չիւանդները թոյլ են. քնուա եւ շուտով նուազում են ամէն չարժողութիւնից : Սի քանի ժամանակից յետոյ, երեւում են հեռումն եւ սրաի բարախիւն : Դժգունութիւնը այնչափ սաստկանում է, որ բժշկները նմանեցնում են նրան մնդրամոմի սպիտակութեան : Հիւանդների մարմիկ մորթը թուում է բարակացած, երեսը փքած, շրթունքները սասափկ դժգոյն, բազկերակի զարկը փոքրիկ եւ անդօր, ոտները եւ ձեռները պազ : Առաւել զօրաւոր դիպուածներումը, հիւանդների սիրտը զնում է ոտի վրայ կանգնած ժամանակը, զզում են թմրութիւն, մկանունքների ցնցիւն, անդամների զօսութիւն, վհատութիւն, փորսութիւնների անկարգութիւններ, զորօրինակ ստամոքսի ցաւ, մարսական կերակրի անախորժակութիւն, սրախ նոխկանք, խառնակիլ եւ փսխումն : Սովորար լինում է նոյնպէս որովայնի կապութիւն, եւ երբեմն որովայնալութութիւն : Երբեմն հիւանդները այնպէս նուազում են, որ հազիկ կարողանում են շարժել անդամները :

ԸՆԹԱՅՔՔԸ

Անկարելի է ստուգիւ խմանալ, թէ որքան ժամանակ է տեւում արխասակաւութիւնը, ինչու որ այս ցաւը թէպէտ սովորաբար աճում է կամաց կամաց, բայց շատ դիպուածներումը ունի արագագոյն ըծթայքք, եթէ արինասակաւութիւնը յառաջ է եկել չափազանց երակահատութիւնից կամ արինահոսութիւնից, այն ժամանակ ապաքինվում է հեշտութեամբ եւ շուտով, բայց ուրիշ դիպուածներումը համարում է դրժուաբուժելի եւ շատ անգամ պատճառում է ջրգողութիւն :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Հիւանդին հարկաւոր է թեթեւ շարժողութիւն, յստակ օդ, հանդըսութիւն, մնացանող եւ մարսական կերակութներ, զորօրինակ, մոխարգանակը, որթու միալը, որթու եւ ոչխարի խաշած ոսները, մի քիչ լաւ զինի եւ այլն : Քի՞ այի կեղեւը եւ երկաթը զլուասոր եւ օգտակար

գեղեր են այս հիւանդութենումը՝ Արիւնասակաւութիւնը և դժգումնաւթիւնը դարմանվում են մի եւ նոյն դեղերով, եւ որովհետեւ դժգումնութեան ընդդէմ գործածելի ճարիքի վրայ խօսելու ենք մանրամանաբար հետևեալ յօդուածումը, վասնորոյ բժշկութեան մասին հարկաւոր շէ այս տեղ երկարացնել բանը:

9.

ԴԺԳՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԴԵՂՆՈՒԹԻՒՆԸ (chlorosis)

Այս հիւանդութիւնը շատ նման է արիւնասակաւութեան կամ թունութեան, բայց մի քանի նշանաւոր յատկութիւններ ըստ բաւականին պրոշում են այս երկու համանման ախտերը մէկզմէկից։ Դժգնութիւնը մի յայանի հիւանդութիւն է եւ պատահում է շուտ շուտ։

ՊԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Դժգնութիւնը երեւում է ըստ մեծի մասին այրութեան կամ պատանեկութեան հասակումը։ Մանուկները, երիտասարդները եւ ծերերը աղատ են այս հիւանդութիւնից, բայց կտրող են հիւանդանալ թուլութեամբ կամ արիւնասակաւութեամբ։ Այս ցաւը պատահում է ըստ մեծի մասին փափկակեաց տղապ աղջրեկերանց եւ այս պատճառով համարվում է կանանց հիւանդութիւն, բայց երբեմն հիւանդանում են եւ մարդիկ եւ արամբի կանայք։ Փափկակեցութիւնը, վավաշ կիրքը, անկատար բաղձանքը, յղութիւնը, դաշտանի արգելականութիւնը համարվում են զրգուիչ պատճառներ։ Բայց բնական պատճառը որոնելի է բեան բաղադրեալ մասների փոփոխութեան մէջ։

ՆՇԱՆՆԵՐԸ

Դժգնութեան եւ արիւնասակաւութեան ախտերի նշանները մի եւ նոյն են մկրբումը։ Դժգնութիւնը մկալում է նոյնպէս աստիճան աստիճան եւ յայտնում է իրան թուլութեամբ, խոնջութեամբ, քնափութեամբ եւ մի քանի անկար քութիւններով արիւնաշրջութեան մէջ։ Դժգնութիւնը հիւանդի երեսի գոյնը լինում է զանազան, երբեմն դժոյն, երբեմն դեղին եւ երբեմն փոքր ինչ կանանչ, ցըթունքը ցմղնած, մի փոքր ուռած, ուռոյցը լինում է եւ ուրիշ տեղերումը, հայեացքը նուազ որպէս արիւնասակաւութեան ժամանակը։ Մարմիկ մորթը նոյնպէս կորուսանում է իւր բնական գոյնը։ Հեւանդը անզազար զգում է սաստիկ զըլիացաւութիւն, ցաւ կրծումը, ստամոքսումը եւ ուրիշ տեղերումը, Երեւում են երբեմն ուշագնացութիւն եւ նաև խելագարութիւն, Հիւանդը շատ անգամ ունի մի անյաղելի քաղց անսովոր, անպատշաճ

զարդարութիւն եւ վնասակար նվաթերի համար, զորօրինակ ածուխ, կիր, քանցիս, զանազան համեմունք, խակ մրգեր, հում միս, ապաւառ եւ այլն Այս օտարութիւն եւ անկարող ցանկութիւնը կոչվում է վնասակար քաղց, կամ ապականիչ ախորժակ (pica կամ Malacia) :

Որովայնի կալուածը պատահում է շատ շուտ շուտ եւ մի սովորական նշան է համարվում: Արտի բարախիմը շատ նեղացնում է հիւանողին: Բազկի դարելը արագ է եւ կակուղ, մի փոքր անհանգստութիւնից հիւանդի երեսը կարմրում է, որ է արեան շրջանի փոփոխականութեան յայտնի ապացոյցը:

Դաշտանի անկարգութիւնները շատ նշանաւոր են, երբեմն վորխանակ առաջին արիւնահոսութեան, երեւում են տժոնութեան առաջին նշանները եւ հիւանդը կամաց կամաց կորուսանելով իւր ծաղկաթիթեառողջութիւնը, մկնում է հալլիլ ու մաշլիլ, երբեմն առաջին դաշտանը լինում է ցաւով, սպիտակագոյն հիւթով, ընդհանուր անսառողջութեամբ եւ յետոյ ամսական արիւնը այլ եւս երեւում չէ կամ երեւում է սակաւ եւ մեծ չարչարանքով: Վերջապէս մի քանի դապուածներումը դաշտանը հոսում է կարգով, կանայքը ցլանում եւ ծնում են միմի քանի անգամ եւ ապա արեան հոսումն կամաց պականելով, վերջումը դադարվում է համարեան թէ բոլորովին: Եթէ դաշտանը կարվում է, նրա երեւալուց յառաջ լինում է մի շատ կամ քիչ լորձիւնահոսութիւն, որ առաւել թուլացնում է հիւանդին եւ սաստկացնում է սասմոքսի անկարգութիւնները: Գարձեալ կան զժոնութեան դիպուածներ, ուր որ դաշտանը հոսում է առաւել առատութեամբ եւ երկար օրեր, քան թէ առողջ ժամանակը, բայց արիւնը լինում է անօմը, ջրալի:

Տժոնութեան ընթացքի մասին դժուար է մի կարական խօսք ասել թէպէտ այս ցաւը չունի երկարաւել ընթացք եւ երբեմն վերջանում է ինքն իրան: Բայց սովորաբար առանց պատշաճական զեղերի կասկածաւոր է նրա բարի ելքը:

ԲԺԿՈՒԹԻՒՆԸ

Դժոնութեան կամ դեղնութեան ախտը բուժելու համար ալէտք է գործ ածել այնպիսի ճարեր, որոնք որ շուտով եւ անընդմիջաբար աւելացնում են հիւանդի արեան ջերմութիւնը, կարմրութիւնը եւ բոլոր կենսականութիւնը: Բոլոր աշխարհումը չկայ մի ուրիշ այդպիսի նիւթ որ կարողանայ առաւել հեշտութեամբ եւ ուղղակի հասանել այս նպատակին, որպէս երկաթը եւ նրա բաղադրութիւնները: Այս ցաւի յատուկ եւ միակ զեղը երկաթն է, որի ամէն տեսակի որ եւ իցել կերպով գործածութիւնը առողջացնում է հիւանդին, բժիշկները գործ են ածում երկաթի քիմիական արուեստով պատրաստած զանազան բազադրու-

թիւնները ուրիշ յարմարաւոր զեղերի հետ իւառնած . բայց սուանց բը-
ժըշկի կարելի է տալ հիւանդին երեք անգամ օրը , երկու երկու կամ
չորս շորս մսխալ յևագայ պարզկերպով պատրաստած երկաթախառն
զինին . խարտած երկաթի նուրբ վուշին , կինամոնը (տարչին) եւ ափ-
ոլնողը (օշնողը ամենից երեք երեք մսխալ պէտք է երեք Փունտ լաւ
զինումը եվել հանդարս շահունակաբար , յևաոյ քամել եւ քա-
մած դառն զինին խմեցնել հիւանդին ինչպէս ասացինք երեք անգամ
օրը երկու կամ չորս մսխալ ,

Առ հասարակ դեղատուութեան եւ կառավարութեան մասին այս
ցաւի զիպուածումը հարկաւոր է զործ ածել յևագայ միջոցները ,

1) Հիւանդութեան սկզբումը հիւանդին պէտք է խմեցնել հասարակ
երկաթախառն հանքային ջրեր , ամին օր տալ հիւանդին վերոյիշեալ դառն
զինին , որովայնի պնդութեան ժամանակը տալ թեթեւ լուծողական դեղ ,
կերակուրը պիտի լինի զօրացուցիչ եւ մնուցիչ , հիւանդը ամին օր պի-
տի ունենայ չափաւոր շարժողութիւն :

2) Աթէ հիւանդութիւնը սաստիկ ածել է եւ հիւանդը դորմէ սրտի
բարախիւն եւ ջղացին ցաւեր , այն ժամանակ շատ օդապակար է տերու-
կի չայն (Centaurium minus) կամ քինսայի խաչուն ջրի տեղ խմելու հա-
մար . բայց ճաշի վրայ հիւանդը պիտի խմի երկաթախառն ջուրը : Այս
տեղ եւս հարկաւոր են վերոյիշեալ դառն զինին . լուծողական դեղ եւ
կաղղուրիշ կերակուր : Ցաւալից տեղերի վրայ դնել ցնդական խարա-
նադեղեր :

3) Առողջանալուց յետոյ հիւանդը պիտի մի քանի ժամանակ ապրի
գեղումը , ուր օդը յստակ է եւ առողջարար , ուստի մնուցիչ եւ զիւրա-
մարս կերակուրներ եւ խմէ զինի շափաւոր քանակութեամբ :

10.

ՍԿՈՐԲՈՒՏԸ ԿԱՄ ԸՆԴԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

(scorbutus, ՍՈՒՐԱՎԱՆԴԻ) :

Ակորբուտ ախտը յառաջ է դալի արեան փոփոխութիւնից , բայց թէ
որպէս է արիւնը փոփոխվում դեռ եւս այնքան լաւ յայտնի չէ , որիմն
այս ախտը կարելի է ստանանել միմիայն նրա արկածների միջոցով , ո-
րոնք են , հիւանդի ընդհանուր տկարութիւնը եւ թուլութիւնը , զարդա-
հուս եւ թոխկասալի շունչը բերանից , ընտերքների նեխութիւնը , կապ-
տագոյն թծերը անդամների վրայ եւ այլն : Ակորբուտը հին ժամանակ-
ներում շուտ երեւելով շատ ճանապարհորդներ եւ նաւորդներ է
կորուսէլ . բայց այժմ պատահում է ոչ այնքան յաճախ ըստ որում բը-
ժըշկիները սկսան առաւել մտաղրութեամբ ուսանել այս ցաւը եւ յառաջը
կորել առողջութեան կանոնների միջոցներով :

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Յառաջ կարծում էին թէ սկորբուտով հիւանդանում են միայն ծովագնացները, բայց այժմ յայտնի է որ, այս ախտից աղաստ չեն նաև այնպիսի անձինք, որոնք ոչ երբեք ծով տևատծ չեն: Բայց ծովի վրայ տկարանում են աւելի շուտով եւ հեշտութեամբ, քանի թէ ցամացի: Ցամացի վրայ այս ցաւով ախտանում են միայն ալեւոները և նը ուազները, բայց ծովի վրայ միակերպ ամէն հասակի անձինք: Յառաջ յառաջ կրած հիւանդութիւնները մողկացն զեղերի չարաչար դործածութիւնը, զանազան մովի և անկարդ կեամնքը, խոնաւ բնակաբանը, խոնաւ հանգարդը և տեղազորը, խոնաւ և ցուրտ եղանակը, ապականած օդը, երկարագոյն ձանձրացուցիչ ճանապարհորդութիւնը, վհատութիւնը, յուսահասութիւնը, կերակրի պակասութիւնը, ադի անպիտան և զժուարամարսելի մսեղին կամ անկեղին կերակրի չափալանց և երկար գործածութիւնը, հասարակօրէն համարվում են սկորբուտի պատճառներ: Այս ախտի ժառանդական լինելը չէ հասաւատած: Կոյնապէս յայտնի է որ դիպչում չէ ուրիշներին: Բայց երբեմն այս ցաւով ինչպէս մի տարափոխիկ ախտով հիւանդանում են միասին շատ մարդիկ, չհազորդելով մէկզմէկու հիւանդութիւնը:

ՆՇԱՆՆԵՐԸ

Սկզբումը հիւանդները զգում են մի սաստիկ ծանրութիւն, թուլութիւն և տկարութիւն մարմինի բոլոր անդամներում: Շուտով երեւում են դէմքի վրայ տժնութիւն և այտուց: Ամէն մի թեթև վիրաւորված, ցաւ տուած տեղումը յառաջ է գալի մի կակուղ ամեններին սուրցաւ ուռոցց, որ նշանակում է կազմուածքի խորին այլայլութիւնը: Արքեմն պատճառում է որովայնակապութիւն:

Մի քանի ժամանակից յետոյ ցաւը աճում է և ցաւագարները դդում են զժուարաչնչութիւն և սրտի բարախիւն ամէն մի թիթեւ աշխատանքից, շարժողութիւնից և մաքի շփոթից, չը ունքը դառնում են կանաչագոյն, երեսը գեղնագոյն լընտելը մոյզ կարմիր և սկսում են ուռչել, վիրաւորվիլ, փտել, կակզել և կաթեցնել արիւն: Բերանի շունչը լինում է միշտ զաղանառ և զարշելի: Անդամների վրա զանազան տեղ երեւում են կապտագոյն կամ մոյզ կարմիր: Երբեմն եւ թուխ նշաններ կամ լիծք (Ecchymose, ուռտեկ), որոնք շատ նման են հարուածներից յառաջ եկած վերքերին կամ նշաններին: Այս լիծքը երբեմն շատ փոքր են, փոքրիկ կեակրի պէս, բայց երբեմն միծոր պաշարում են մողամի մնածագոյն մասը: Մոլթը չոր է և անհարթ: անողորի: Շատ անգամ ոտնելը ուռչում են և ցաւում: Ցաւը լինում է և ուրիշ տեղերումը, մանաւանդ կործքի մի որ եւ իցէ կողմը: Երբ

որ սկսրբուաը շատ սաստկանում է, վերոյիշեալ լիք քերը փօխարկվում են վերքեր, նրանցից հոսում է արիւնը կաթ կաթ, Անդամները ցաւում են, չարժվում են, նաեւ թափվում: Քթից եւ բերանի առանուազից շուտ հոսում է արիւն: Որովայնալուծութիւնը յաճախ է և արիւնալի, որով առաւել զօրանում է հւանդի թուլութիւնը: Բազի կարկը ոչինչ չէ նշանակում: Հիւանդը մինչեւի մահը չէ կորուսանում առ խորժակը: Սկորբուտահարների արիւնը ջրալի է եւ թխագոյն, մէզը սովորաբար թուկն ներկած եւ շուտով սկսում է ժահահոտիւ, Ահա ուրանք են նշանները եւ արկածները, որոնց միջնորդութեամբ զգուաթ չէ ճանաչել միորբուտը:

Սկորբուտաի երկարատեսութիւնը շատ դանաղան է: Ջովի վրաունի սաստիկ եւ սուր ընթացք, այլ ցամաքի վրայ յամը եւ մեղմ: Բայց սովորաբար այս ցաւը որքան գնում է, այնքան սաստկանում է: Վերջը առաւել չար է, քան թէ բարի, մանաւանդ եթէ հիւանդները գտանվում են այնպիսի դրութեան մէջ, որ անհնար է նրանց կատարել առողջութեան կանոնների սպայմանները, Հիւանդները արիւնահոտութեանից, վերքերից եւ ուրիշ արեան խորին ապականութեան սպատճառով յառաջ եկած անկարգութիւններից, բոլորովին ընկնում են ուժից, եւ մեռանում, ուշքը եւ միտքը վկրուսանելով մինչեւի վերջին շունչըն Եթէ ելքը յաջողակ է յառաջ յառաջ ոչնչանում են կապտաղոյն բիծքերը, արիւնահոտութիւնը դադարում է վերքերից եւ ընտերքներից եւ հիւանդը վերջապէս կամաց սկսում է զօրանալ եւ առողջանալ:

ԲԺՇԿՈՒԹԻԿՆԵՐ

Սկորբուտի ընդդէմ չկայմի սեպհական ճար, թէպէտ հին բժշկներից յառաջադրած են եւ զոված բաղմաթիւ զեղեր այս ախտը ապաքինելու համար: Բայց այժմ այն ամէն դեղորայքը համարվում են ամեննեվն անօդուտ: Այս ցաւը կարելի է բժշկել միմիայն յետազայ յառաջապահ միջոցներով եւ առանին ճարերով:

Հիւանդի բնակութեան օդը պիտի լինի չոր եւ մաքուր, պէտք է հրաժարվի ցրտից, խոնաւութենից, ամենատեսակ անմաքրութենից, աղի կերակրից, մանաւանդ աղի չոր ձուկնից եւ աղ դրած հին մոխց (ասպուխտ): Գործածել հանապազ եւ միմիայն թաղա միս, կանանչելցն թթու կաղամբ, թթնջովով կամ աւելուկ եւ համած մրգեր, զինի, արաղ չափաւոր քանակութեամբ լիմոնի օշարակ (լիմոնատ) լիմոն եւ քաշախախառն շարբաթ: Հիւանդն հաբկաւոր է ամէն օր ման գալ, չըտրումիլ երբէք եւ միշտ ուրախ եւ զուարթ կեանք վարել: Շահաւէտ են նոյնպէս ամէն զրգուիչ, զօրացուցիչ եւ դառնահամ բոյսերը, որոնց զլսաւորները են: բողկը թէ վայրի, եւ թէ ընտանի, կոտեմը, մանանեխը, կարսոը (սելյարեյ), չողդամը, եղրդակը կամ վայրի հազար

(ԱԿԻՆ ՀԱՅՐԵՆ) կինամոնի չայն եւ այն : Բայց ամէնից առաւել օդտաւէտը եւ շահավէտը է դրգալախսոտը (herba cochleariae), որ համար վումէ աղդոյ եւ սեպհական դեղ սկորբուտի ընդդէմ եւ որից շինումնն յետազայ ըմպելին : 20 մսխալի չափ կանանչ դրգալախսոտը, որ կարելի է գտանել բուրաստաններումը եւ դաշտերումը եւ 5 մսխալի չափ մանանեխի ալիւրը պէտք է թրջել երկու ֆունտ սպիտակ գինոց մէջ երկու օր եւ երկու դիշեր : յետոյ քամել եւ խմեցնել հիւանդին օրը երեք անդամ մի մի չայի բաժակ : Այս զեղը վերոցիշեալ միջոցների հետ միախն պիտի գործ ածէ հիւանդը մի քանի ամիս անդադար :

Որովայնի պնդումնեան դիսպուածումը օգտաւէտ է տալ հիւանդին կամ մի դրգալ անդդոյ դառն աղը մի ստաքան հասարակ ջրումը հալած եւ կամ մի մսխալ հալապը (զիշերագեղ, զօլիստրա) նոյնչափ եւս քրէմոր թարթարը (մոխիր զինուոյ) եւ շաքարը խտոնել միասին եւ այս խառնորդից խմեցնել հիւանդին ամէն երկու ժամ մի չայ դրգալ ջրով մինչեւ ներգործութիւնը : Կարելի է գործ ածել նոյնպէս եւ ուրիշ թեթեւ լուծողական զեղեր :

Եթէ լնտերքները ուռած են, գիրաւորված եւ բղխումն արիւն, այն ժամանակ շատ օգտակար է յաճախ լուանալ լնտերքները քացախով, քինացի կամ կաղնոյ կեղեւի կամ ընկուղենոյ տերեւների եւ կամ զզառորի խաչուով, քսել լնտերքներին պաղլեղի փոշին : Այս ամէն ճարերը ոչ թէ միայն կարելի է, այլ եւ շատ հարկաւոր է գործածել եւ հիւանդի բերանը ողողելու համար :

11.

ԽՈՅԼԸ (scrophulosis Յօլուխա)

Խոյլը է կազմուածքի մի ընդհանուր տկապութիւն, որի կայանը են աւիշշեան երակները կամ անօթները եւ մսանները :

ՊԱՏ ՃԱՌՆԵՐԸ

Խոյլը զլիսաւորապէս երեխանց հիւանդութիւն է, որով շատ շուտ հիւանդանում են երկու տարեկաններից սկսած մինչեւ տասնը տարեկան մանուկները, ուրեմն այս ախտի զլիսաւոր բնական պատճառը չժմանկական հասակը : Բայց այս ցաւոց աղատ չեն եւ չափահամները, մանաւանդ կահացք, որոնք առաւել յաճախ են ակարանում քան թէ մարդիկ : Մինչեւ այժմ հաստատ տեղեկութիւններ չկան այս նշանաւոր ցաւի ներգործական պատճառների մասին : Ուտելի եւ ըմպելի նիփթերի ոչ որակութիւնը, ոչ քանակութիւնը երեսի թէ ոչինչ զօրութիւն չունին յառաջ բերելու այս ախտուը, ըստ որում թէպէտ շատ հեղինակներ, սակաւառքանակ, անմարսական եւ բանջարեղբէն կերակութերը, վատ ջու-

թը, թթու զի՞նին եւ ուրիշ ըմպելիքը եւ տհաս մրգերը, համարել են այս հիւանդութեան զվատաւոր պատճառներ, բայց որովհեաեւ չեն հաստատել ղրական փաստերով, վասնորոյ այժմեան երեւելի թժշկները հաւատ չեն ընծայում այս մասին նրանց կարծիքն. թէ եւ իրանք եւս այնքան աւելի յառաջ չեն զնացել այս բանումը:

Այս ցաւի ժառանգականութիւնը է զվատաւոր պատճառներից մէկը, շատ օրինակներ հաստատում են որ շատ մասկամ երեխայքը ծնում են արդէն հիւանդ եւ շատ զերդաստանների բոլոր անդամները հիւանդ են վիճում այս ցաւով:

ՆՇԱՆՆԵՐԻ

Նշանները կամ արկածները երկու տեսակ են, տեղական եւ ընդհանուր

Խուլի ներկայութիւնը յայտնում են մասնաւոր կամ տեղական նըշանները, որոնք երեւում են մարմինի զանազան տեղերում եւ մանաւանդ պարանոցի մասններումը: Յառաջ յառաջ երեւում են փոքրիկ շարժական ուռուցներ, խուլեր, Այս պղտիկ խուլերը ձուածեւ են, չեն ցաւում եւ նստած են ջոկ ջոկ. մի քանի ժամանակից յետոյ մեծանումն, միաւորվում են մէկզմէկի հետ, կոշտանումն եւ կազմում են մի մեծ եւ պինդ ուռոց: Նրբոր ցաւը աճում է, սաստկանում է, այն ժամանակ ուռուցը զառնում է մթին կարմիր, փոքր ինչ կակուզ, կաշին բարակում է եւ վերջապէս պատառվում է եւ դուրս է գալի նրանցից մի ջրալի շարաւ: Խոցը կամ վերքը, ուստի թափկում է թարախը, շուտով չէ լաւանում եւ կապուելուց յետոյ թիծը կամ նշանը մնում է յաւիտեան անբուժելի: Այս տեսակ վերքերը լինում են ոչ թէ միայն պարանոցի վրայ, ոչ եւ մարմինի մամէն ուրիշ մասներումը, ինչտեղ որ կան շատ մասններ, զոր օրինակ, անթատակներումը, երանաց քնչերումը եւ այլն: Երբեմն երեւում է աչաց բորբոքումն:

Ընդհանուր արկածները նշանաւոր չեն ցավ սկզբումը, երեւումն միայն մի թեթեւ տկարութիւն, թուլութիւն եւ դէմքի տժգունութիւնն Մի քանի ժամանակից յետոյ յառաջ են զալի նիհարութիւնն, սաստիկ տժգունութիւն, խարբուխ, բարակացաւ, երկարատեւ որովայնալուծութիւնն եւ վերջապէս մի մաշիչ տեսնդ, որ աւարտում է մահով երեխի չարչարանքը:

ԸՆԹԱՑՔԸ. ԵԼ.ՔԸ

Խուլի ընթացքը երկարատեւ է: Այս ցաւը սովորաբար աճում է կամաց կամաց եւ տեւում է տարիք: Ելքը յաճախ վաստ է, եթէ հիւանդութիւնը թուլնում են, որ աճէ եւ սաստկանայ: Այրական հաստակի ժամանակը մարմնիկ կազմուածքումը կատարվում է մի մեծ յեզափու-

խութիւն, որ երկեմի ոչնչացնում է խուլի արկածները, բայց մարդի միջ մնում է միշտ ցաւի սերմը, որ ժամանակ ժամանակ ծլում է եւ ծաղկում զանազան պատճառների ներդործութեամբ եւ յառաջ է բերում մասնմերի ուռոց կամ խոլսայթ և կամ ուրիշ արկածներ : Եթէ անկա- կան արկածները բաղմովիւ չեն, այն ժամանակ կարելի է բժշկել այս ցաւը, բայց եթէ աւերուած են ոսկորները եւ արկածները շատ են, ըստ մնձի մասին լինում է անկարելի օգնել հիւանդին :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Խուլը երկարատիւ եւ դժուարաբժիշկելի ցաւերից մեջն է, խչու որ պահանջում է ուղղել եւ բարւոքել մարմնի ապականած հսթերը, եւ մանաւանդ աւիշկեան անօթների խանգարած պաշտօնը, որոնք այլայ- լիով մարմնի կազմուածքը, պատճառում են խուլի արկածները : Այս ցաւի դեղերը բարձրաթիւ են, բայց նրանց ներգործականութիւնը եւ շա- հաւետութիւնը երկբայելի : Բժշկական արուեստի ներկայ վիճակին նա- յելով, խուլի ընդդիմ առաւել հաւասարիմնարերը համարվում են եօղը, ընդուղի տերևները, բնական ծծմբային տաք ջրերի գործածութիւնը, ցուրտ ջրումը կամ ծովումը լրղանալը եւ հիւանդի պատշաճաւոր սեհ- պանութիւնը, որոնց վրայ միայն եւ կիսունք այս տեղ :

1) Եօղը (jodium iodina) Յունաց բառ է եւ ստուգաբանվում է մանուշակագոյն, ըստ որում այրելոց յետոյ նա ցնդվում է եւ վերա- ցած զոլորչիքը մանուշակագոյն են : Սա տաննձին չէ գտանդվում բնու- թեան մէջ, այլ մի քանի տեսակ մետաղների հետ միասին միաւորված, պարունակվում է բազում ծովային բոյսերի եւ կենդանատունկերի մու- նաւանդ ծովային սպունդի (ամպ) մէջ : Եօղը գտանվում է նոյնպէս ա- զաքարումը, հանքային ջրերումը, ծովի ջրումը եւ այլն : Այս դեղը հանում են քիմիական արուեստով կալամարից, սողից, որ է այրած բոյսերի մոխիքը : Եօղը արտաքուստ նման է զրաֆիտին կամ կարան- դաշին, ոնի միառանձին հոտ խլորի պէս եւ սաստիկ տափայ համ, եօ- ղից եւ բարկ նատրոնց կամ ալքալի աղից (Kali causticum) պատ- րաստում են նոյնպէս քիմիական արուեստով մի աղ, որ կոչվում է եօ- ղային քալի Kali hydrojodeum, joduretum potassium) :

Արա գոյնը եւ վայլինը սաղափի նման են, համը աղի : Այս եր- կու համաբուն զեղերը գործ են ածվում միասին կամ ջոկ ջոկ ամէն տեսակի խուլի մէջ եւ շատ ազդոյ եւ օդտակար ճարեր են, բայց միայն սրանց գործածութիւնը պիտի լինի հմուտ բժշկի ճեռքով եւ յետազայ եղանակով :

1) Զորս զարեհաս եօղը (jodii griv) եւ ոթը զարեհաս եօղային քալին (Kali hydrafiodici) հալում են մի ունկի եւ կէս զտած, քաշած ջրումը եւ այն հեղանիթից տալիս են վեց վեց կաթիլ կէս սատքան

շարբաթի մէջ, երկու անգամ օրը : Այս դեղը պիտի գործ ածվի երկար ժամանակ :

2) Ընդուղինոյ տերեւները վերոյիշեալ հօղից պակաս օդուտ չենք բերում խուլի հիւանդութենումը : Ընդուղինոյ տերեւները դործ են ածու յետազայ եղանակով : Մի պտղուց (պեոտъ) չորացած եւ կոտրա տերեւները թրջում են մի ստաքան եռացած ջրումը, խառնում են մի փոքր շաքար եւ խմեցնում են հիւանդին առաջ առաջ օրը Երկու երկու զահֆէի թաս, մի քանի ժամանակից յետո երեք երեք եւ վերջուան հինգ հինգ : Արտաքին գործածութեան համար մի պտղուց վերոյիշեալ տերեւներից եփում են երեք ֆունտ ջրումը մի քառորդ ժամ եւ այս ջր մէջ թրջում են շորերի կտորտանք եւ դնում են ուռոցների եւ խոցերի վրայ :

Խուլով հիւանդի համար շահաւետ է նոյնպէս ուտել ամէն օր ընդուղի քաղցրաւէնի (ծենկոյի մուրապայ) :

Բացի վերոյիշեալ դեղերից հարկաւոր է անշուշտ առանձին հողացողութիւն եւ կառավարութիւն : Կերակուրը պիտի լինի զօրացուցիչ, առողջարար եւ դիւրամարս, խորոված միա, դինի չափաւոր քանակութիւնամբ, բնակարանը մաքուր, չոր եւ լուսաւոր, ամէն օր ման գալ դուրսը բաց օդումը : Խմելու համար, պէտք է գործ ածել յստակ ջուր, կամ մի ձուի դեղնուցը հարել մի բուտիկայ ջրումը, ձգել մէջը մի փոքը շաքար եւ աղ եւ խմեցնել հիւանդին ջրի տեղակ :

Շատ օգտակար եւ հարկաւոր են նոյնպէս բնական, ծմբային բաղնիքները, լողանաւը գետի կամ ծովի ցուրտ ջրերումը եւ ծրվային խոտերը թրջել տաք ջրումը եւ նստեցնել հիւանդին : Առ հասարակ այս յամառ ախտը ապաքինելու համար մեծ համբերութիւն է պէտք ոռուել թժի, նոյնպէս հիւանդի կողմից, ըստ որում դեղատութիւնը եւ ուալարութիւնը պիտի շարունակվին անդադար երկար ժամանակ, ամիսներով եւ երբեմն նաև տարիներով :

